

Ս Ի Ո Ն

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԿՐՕՆԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ – ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՈՒՍԱԿԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԱՆՔՈՒԹՅԱՆ

ՆՈՐ ԵՐՋԱՆ

ԺԴ. ՏԱՐԻ 1940



ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

ԵՐՈՒՍԱԿԷՄ

Ս Ի Ո Ն

ԺԳ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1940

⇒ ՄԱՅԻՍ-ՅՈՒՆԻՍ ⇐

ԹԻԻ 5-6

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՅԱՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Յարութեան մտածումը, թէ մարդուն կեանքը չի վերջանար զերեզմանով, անմահութեան հաւատքին առաջին լոյսն է՝ հողիին մէջ ծագած: Յիսուս պատմութեան մեծագոյն հրաշքն է, ու ասիկա՝ իր յարութեամբը մանաւանդ:

Եթէ մահը ամենախորունկ և նշանակալից իրողութիւնն է, որ միայն կրնայ ճշդել կեանքի իմաստին հարցը, վասնզի կեանքը անկէ անցնելէ վերջ միայն իր ճակատագրին կ'երթայ, յարութիւնը լուսազարդուած իրականութիւնն է մահուան խորհուրդին: Մահը միայն փաստը չէ կեանքի ունայնութեան, այլ յայտարարը նաև անոր բարձրագոյն իմաստին: Խորունկ կարօտն ու տազնապարզոր կը սեղմենք իր խորհուրդին դիմաց, ապացոյցներ են թէ յաւիտենականութիւնը կը քաշէ զմեզ, մեր մէջ յուզելով այն զգացումները, որոնք նոյն ատեն յոյսերն են մարդկութեան, իրականանալու սահմանուած:

Մահը վերջակէտը չէ կեանքին, այլ վայրկեան մը կեանքի խորհուրդին, վերջին բառը իրեն չի պատկանիր: Անոր դէմ ապստամբելը մերժել է զԱստուած: Մական մենք պարտինք կռուիլ անոր դէմ և նուաճել զայն, հանել իր պաքը ինչպէս կ'ըսէ Առաքեալը: Յիսուսի գործը աշխարհի մէջ այս յաղթանակը եղաւ, իբր պատրաստութիւն յարութեան և յաւիտենական կեանքին:

Աստուածորդին, քաւիչն ու փրկիչը, սուրբն ու անմեղը, մեռաւ մահը սրբելու համար. Քրիստոս իր մահուամբ յաղթեց մահուան: Խաչի յարզանքին մէջ, մենք կը ծնրադրենք ազատարար ու յաղթական մահուան առջև որ այլազան կերպից կեանքը, և ամբողջ գոյութիւնը այս աշխարհին պարտի անցնիլ մահուան ընդմէջէն, և խաչի խորհուրդէն, ելլելու համար յարութեան և յաւիտենականութեան փառքին:

Յարութեան իրականութեան մէջ յաղթական մահուան պարտութիւնը կը զգացուի. քանի որ մարդկային հողին իր մէջ կը կրէ Աստուծոյ պատկերը, անիկա սահմանուած է վերածնելու ոչ թէ ժամանակին, այլ յաւիտենականութեան մէջ:

Հին աշխարհին համար մարդը միայն մտածումով կրնար Աստուծոյ Անմահութեան մասնակից ըլլալ, ըստ որում մարդկային հողին անմահ տարր մը

ունէր անով միանալու իր նախատիպարին՝ Աստուծոյ։ Այսկերպ անմահութիւնը խզումն էր նիւթին և հողիին միջև. մահն ու ապականութիւնը նիւթին՝ այս մտածումին մէջ չեն յաղթահարուած։ Քրիստոսի յարութիւնը մահուան վրայ տարուած յաղթանակն է, անմահացումը բոլոր արարածներուն։ Հին աշխարհի մտածումին համեմատ՝ հողին կուգար հոգեկան աշխարհէ մը, հոս կ'ապրէր առժամանակեայ, յետոյ վերադառնալու համար իր սկիզբին. մինչ քրիստոսնէական մտածումով՝ հողին աստուորն ալ անդենականին կը տանի փառաւորելէ վերջ՝ գայն։

Յաւիտենական կեանքը մարդուն կարելի է, և զոյութիւն ունի ո՛չ թէ իր հոգիին բնութեանը պատճառաւ, այլ որովհետև Քրիստոս յարեաւ և յաղթեց աշխարհի մահացուցիչ ուժերուն. վասնզի տիեզերական հրաշքին մէջ յարութեան իմաստը ուրիշ բան չէ եթէ ոչ իմաստին յաղթանակը իմաստ չեղող, միտք չեղող պարապի մը վրայ, որմէ կազմուած ըլլար մեր տիեզերքը։ Մահը լուծուի կը նշանակէ տիեզերքին, յարութիւնը՝ անոր նորոգումը։ Ասոր համար է որ յարութեան տօնը մշտանորոգ տիեզերքի մը խորհրդանշանը կը դառնայ մեզի։

Հին աշխարհի հասկացողութեամբ՝ մարդուս և տիեզերքին ճակատագիրները բաժնուած էին. Յիսուսի Յարութեամբ անոնք կը միանան։

Յարութեան հրաշքը մեծ լոյսը կը սփռէ գերեզմանէն անդիի կեանքին վրայ։ Պէտք չէ երկմտիլ անոր ճշմարտութեան, վասնզի անոր վկանքը գիւրախաբ մարդեր չէին. անոնք գայն տեսնելէ, շօշափելէ և անոր հետ խօսակցելէ վերջն ալ տակաւին կը թերահաւատէին։ « և ոմանք երկուացան »։

Չկայ արդարև պատմական դէպք մը, որ հարուստ ըլլայ ներքին ու արտաքին այնքան ապացոյցներով, որքան Յիսուսի յարութիւնը։

Գերեզմանը սկզբնակէտը եղաւ Յիսուսի գերազոյն կեանքին, և անով՝ մարդկային կեանքին։ Հոն ուր վերջացած կը կարծուէր իր կեանքն ու գործը, նոյն այդ թափուր գերեզմանին մէջ վերանորոգուեցան անոնք զօրաւոր ու հրաշալի իրականութեամբ։

Կը հաւատանք այս իրողութեան ո՛չ միայն որովհետև զիտենք թէ գաղափարը չի մեռնիր, թէ սէրը անմահ է, այլ որովհետև կը զգանք զինք ամէն օր իր եկեղեցիին մէջ կենդանի։ Ան իր եկեղեցիին մէջ ներկայ է, հոգիին մէջ բոլոր անոնց՝ որոնք իր անուենով կը ժողովուին։ Եւ սակայն Քրիստոս, որուն յաւերժական ներկայութիւնը ունի եկեղեցին իր մէջ, իտէական զոյութիւն մը չէ՛, կամ մարդկային տեսակ մը գաղափարատիպ, զորս իւրաքանչիւր սերունդ ստէպ իր մաքին մէջ կը ստեղծէ, անոր փոխ տալով յաճախ լեզուն իր սեպհական ներշնչումներուն և մտածումներուն. ոչ ալ պարզ յիշատակ մը, որուն պատկերը կ'ուրուանայ մեր մէջ ժամանակի մը համար միայն։ Եկեղեցիին ոգեկոշած և զգացած Քրիստոսը աւետարաններու կենդանի Քրիստոսն է առանց փոփոխման և զիմաղեղծումի, որուն համար պիտի կրնայինք ըսել Ս. Պօղոսի հետ. թէև զինք չենք ճանչնար ըստ մարմնոյ, բայց կը ճանչնանք ըստ հոգոյ. և այս վերջին հանգամանքով է որ Ան ապրած է դարերով այնքան ներշնչող ու կենդանի սերունդներու հոգիին մէջ։

Յիսուսի յարութիւնը այլաբանութիւն մը չէ, այլ իրականութիւն մը, որ պատուած է այլևս մահուան վարագոյրը, և միացուցած իրարու ընդմիշտ կեանքը

անմահութեան, և ժամանակաւորը անժամանակին: Քրիստոսի ճշմարիտ յարութիւնը Իր Եկեղեցին է, անոր կազմաւորած քրիստոնէական կեանքը, և անկէ ծնած տիեզերական քաղաքակրթութիւնը:

Սերմանուած, բայց վերընձիւղումի վիճակին ենթարկուած ցորենահատն է Քրիստոս, իբր հաւատք և կեանք, որ դարերէ ի վեր կ'աճի և կը զարգանայ Իր Եկեղեցիով, պարպուած գերեզմանի խորհուրդին մէջ:

Այդ աղուոր հասկին հատիկներէն մէկն ենք մենք ևս, իբր Ազգ և Եկեղեցի միանգամայն: Մասնակից եղած ենք Իր մահուան, ու կը հաւատանք Իր Հնորհիւ մասնակից ըլլալ Իր յարութեան: Ո՛չ մէկ ազգ պիտի կրնար մեզի Հափ իրաւունքով ըսել Առաքեալին հետ. «Զչարչարանս Քրիստոսի ի մարմնի իմում կրեմ», ու չկայ նոյնպէս ժողովուրդ մը, որուն համար կարելի ըլլայ իրաւամբ ըսել. «Յոյս նոցա լի է անմահութեամբ»: Գեղեցիկ ու սրտառուչ ըլլալէ աւելի բան մըն է խաչուած ժողովուրդներու ողբերգութեան տեսարանը զալիք յարութիւններու յոյսով:

Ժողովուրդ Հայոց, ի սփիւռս աշխարհի տարտղնուած, գերեզմանին խորհուրդը Հմթագնէ թող հոգիդ, մահէն ու թաղումէն վերջ կայ դեռ յարութեան ճշմարտութիւնը. այն ճշմարտութիւնը որուն հաւատացիր ու սպասեցիր դարերով, և որուն կը հաւատաս տակաւին, պատուած կողերով և արցունքոտ աչքերով:

«Փա՛ւք յարութեան քո, Տէր». երզ՛ այդ փառքը, անոր մէջ դուն երզած պիտի ըլլաս նաև քու յարութեանդ փառքը:

ԽՄԲ.



ՀԱՒԱՏՔԻ ԵՒ ՄՏԱԾՄԱՆ ՅՈՒՔԵՐ

Ն Ե Ր Ք Ի Ն Վ Ե Ր Ա Ծ Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Զարմանք կամ հետաքրքրութիւնը չէ՛ որ մտին մէջ պիտի արեցնեն հոգեւոր նեւարտութեանց տեսչը: — Ռամիկ դիւրահաւատութիւնը եւ գիտական հետազոտութիւնը հաւասարապէս անկարող են մարդուն տալու՝ ինչ որ արմատական կերպարանափոխութեան մը բաւոյական հարկը կը պահանջէ:

Ասոր համար անհրաժեշտ բանն է վերածնունդը, այսինքն ա՛յնպիսի ծնունդ մը, որուն պատճառը կամ ծնուցիչ գորութիւնը մարդկային եւ եկեղաւոր Երջանակէն արտադր է գերիվերոյ կարգի մը՝ Ասուծոյ կամին մէջ ըլլայ նոյն իսկ:

Վերածնունդը ոչ քէ վերստին կամ կրկին ծնիլն է, ինչպէս ծիծաղելի բանահաւատութեամբ կը հասկնար Յիսուսի ժամանակակից ռաբբիական գիտութիւնը, այլ վերէն կամ վերուստ ծնունդը, որ մարդուն հոգին Ասուծոյ հետ յարաբերութեան մէջ գնող ներգործութեամբ կը կատարուի, մեղք սրբացումով (= ջուրով) եւ անեղծական կեանքի նոր սկզբունքի մը տոգորումով (= հուրով):

ԱՌԵՏԱՐԱՆԻ ԶԱՄԲԵՆ

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

- «Ուր Տիրոջ հոգին կայ, հոն ազատութիւն կայ» .
Բ. ԿՈՐՆ. Գ. 17
- «Եւ պիտի նանչնա՛մ նեմարտութիւնը, ու նեմարտութիւնը պիտի ազատէ մեզ» . ՅՈՎՀ. Ը. 32
- «Պիտի կեցե՛ք այն ազատութեան մէջ, որով Քրիստոս զմեզ ազատեց» . ԳԱՂ. Ե. 1

Ազատութիւնը հիմնական յատկանիշն է Քրիստոնէական կեանքին զոր ապրելու կանչուած է ամէն հաւատացեալ: Ապրելու համար կեանք պէտք է ունենալ. իսկ լաւ ապրելու համար՝ ազատութիւն այդ կեանքին մէջ: Արդարեւ կեանք կրնայ գոյութիւն ունենալ առանց ազատութեան: Քրիստոնեայի մը մէջ վերածննդեան գործը կրնայ կատարուած ըլլալ, մարդ նոր բնութեան կրնայ տիրացած ըլլալ, երկնային ըղձանքներով կրնայ տոգորուած ըլլալ. այսուհանդերձ կրնայ տակաւին ազատութենէն զուրկ մնացած ըլլալ:

Քրիստոնեային ոչ միայն կը հաղորդուի հոգիի կեանքը Քրիստոսի կողմէ, այլ նաև կը հայթայթուի ինչ որ անհրաժեշտ է այդ կեանքի բարգաւաճման ու ծաղկումին համար: Հոգեկան պայքարները, զորս քրիստոնեայ մը կը մղէ իր ստորին հակումներուն դէմ, կրնան յայտարար նշաններ ըլլալ կենսունակութեան. սակայն իրականին մէջ կը մատնանշեն գերութեան վիճակ մը. վասնզի ազատը երբեք չի մաքառիր իր ազատութեան համար, զոր ունի արդէն. գերին է որ կ'ընէ ատիկա, քանի որ չունի զայն: Յուսահատ ճիգերը, զորս կ'ընենք զմեզ հոգեպէս ազատագրելու բոլոր այն ազգակներէն որոնք կը կապտեն մեր ազատութիւնը, կըրնան նկատուիլ իբրև ապացոյցներ թէ մենք չենք մեռած մեղքի և անօրէնութեանց մէջ. բայց այսպիսի մաքառումները պէտք չէ շփոթել «բարեօք պատերազմ»ին հետ: Ազատութիւնը նպատակ մը չէ, այլ պայման մը՝ քրիստոնէական պայքարի, — յաղթական պայքարի: Մեր պայքարներէն իրապէս յաղթական դուրս գալու համար, առնուազն քիչ մը բան պէտք է գիտնալ թէ ի՞նչ կը նշանակէ «պիտի կենալ

այն ազատութեան մէջ, որով Քրիստոս զմեզ ազատեց»:

Կենդանի էակի մը ազատութիւնը կը կայանայ իր անարգել գործունէութեան մէջ: «Միայն ա՛յն էակը իրապէս ազատ կրնայ կոչուիլ, որ կ'ապրի ու կը գործէ իր էութեան պահանջքներուն հետ համերաշխաբար, որ կրնայ իր կարողութեան ծախքերը բանալ անարգել ու անշփոթ»: Այս գործը ի գլուխ հանելու համար անհրաժեշտ է որ կեանքը, — ըլլայ անիկա բուսական, կենդանական, և հոգեկան — գտնուի իր իսկական և յարմար միջավայրին մէջ: Հո՛ն է միայն որ ան պիտի գտնէ թէ՛ իր սնունդը և թէ՛ իր ազատութիւնը: Այսպէս, բոյսը ոչ միայն պէտք է ունենայ հող, այլ նաև օդ, խոնաւութիւն և արև: Միջավայրը չէ որ սկիզբ կուտայ կեանքին, այլ կը հայթայթէ ինչ որ անհրաժեշտ է իր տարածանքին ու բարգաւաճման համար: Այս անարգել գործունէութեան մէջ է որ կը կայանայ իր ազատութիւնը:

Այսպէս ալ բնութեան մէջ, կ'ըսենք արարած մը ազատ է երբ կրնայ անարգել շարժիլ իր բնիկ միջավայրին մէջ: Թռչունը ազատ է օդին մէջ, ձուկը՝ ջուրին մէջ: Հանէ՛ զանոնք իրենց միջավայրէն, իրենց ազատութիւնը կը կորսուի: Փոխէ՛, կամ եղանակաւորէ՛ միջավայրին նկարագիրը, ու դուն կը սահմանափակես կամ կը կապտես այդ կեանքին ազատութիւնը:

Մարդ մեղքով ոչնչացուցած է կեանքի ներքին սկզբունքը, ու աւերած՝ այն ուրտը որ անոր ճշմարիտ բնակավայրն էր: Վերանորոգութիւնը կը կայանայ հոգին վերակենդանացնելու, ու զայն իր իսկական միջավայրին առաջնորդելու մէջ: «Վերստին ծնանիլ»ը ստանալ է այդ վերակենդանութիւնը. իսկ «ի Քրիստոս ըլլալ»ը՝ այդ միջավայրին մէջ փոխադրուիլ: Ուրեմն հոգեւոր կեանքը կը ճանչցուի միայն անոնցմէ՛ որոնք նոր կեանքը ունին, ու կը մնան Անոր մէջ որ իսկական ոլորտն է այդ կեանքին: Հետեւաբար չենք կրնար ըսել որ ամէն վերածննալ հոգի անհրաժեշտաբար հոգեւոր ազատութեան վիճակի մը մէջ կը գտնուի: Դարձը ամէն ինչ չէ: Էականը փրկութիւնն է, որ աւելի բան կը նշանակէ քան՝ լոկ վերստացումը Աստուածայինին. այսինքն

մեղքով կորսուած ներքին կենսական ըսկզբունքին:

Երբեակ ազատագրութենէր կան գորս նկատի պիտի առնենք ճշմարիտ ազատութեան ըմբռնումին հետ յարակցարար. — մտքի, խղճմտանքի, ու կամքի ազատութիւն:

Մտքի ազատութիւն. ըստ նախապէս տրուած սահմանումին, միտքը պէտք է իրեն պատշաճ միջավայրը ունենայ որպէսզի ազատ ըլլայ: Այդ միջավայրը նրմարութիւնն է: Միտքը ազատ էր երբ առաջին անգամ ստեղծուեցաւ մարդուն մէջ. ինչպէս ամէն ստեղծուած էակ և իր՝ միտքն ալ իր իսկական միջավայրին մէջ զրուած էր. որովհետև՝ նմարութիւնն էր այն ուրաք որուն մէջ կը բնակէր և կը գործէր միտքը: Մարդուն բարոյական և հոգևոր շրջապատին մէջ ամէն բան կատարելապէս համերաշխութեան մէջ էր իր իմացական լինելութեան հետ: Անկումէն ատղին սակայն ամէն ինչ փոխուած է: Մարդուն միտքը կաշկանդումի տակ է իմացական ու բարոյական խաւարի, տգիտութեան և սխալանքի: Առաքեալը հետեւեալ կերպով կը ներկայացնէ այս վիճակին մէջ եզոզները. «Որոնց իմացականութիւնը խաւարած է. անոնց մէջ գտնուած տրգիտութեան եւ իրենց իմացականութեան կուրուութեան պատճառով օտարացած են այն կեանքէն որ Աստուծմէ կուգայ» (Եփս. Դ. 18): Մարդ ինկաւ հաւատք ընծայելով Աստանայի սուտին. այս արարքով կործանեց ճշմարտութիւնը, և արտաքսուելով ճշմարտութեան ուրաքէն, մարդկային միտքը կորսնցուց իր ազատութիւնը:

Քրիստոս կը վերանորոգէ մեր մէջ ազատութիւնը, ճշմարտութեան լոյսին բերելով զմեզ: «Պիտի ճանչնաք ճշմարտութիւնը, ու ճշմարտութիւնը պիտի փրկէ ձեզ» (Եովհ. Ը. 32):

Ինչ որ է օգր բոշունիկն, ու ջուր՝ ձուկիկն, նոյն է Աստուծոյ նմարութիւնը մեր միտքին: Ինչպէս թոշունը իր թեւերը կը բանայ իրեն սեպհական ուրաքին մէջ, այնպէս ալ մեր իմացական ոյժերը և կարողութիւնները կը բացուին աստուածային ճշմարտութեանց մթնոլորտին մէջ, ուր կը գտնեն իրենց բարգաւաճումը, ինչ որ մեր հոգիները կը լեցնէ մասնաւոր ուրաքութեամբ մը:

Բայց երբ նմարութեան մասին կը խօսինք, այդ եզրին տակ լոկ վերացական բան մը չենք ուզեր հասկնալ. այլ կ'ակնարկենք Անո՛ր՝ որ յայտարարեց. «Ե՛ս եմ ճշմարտութիւնը», կ'ակնարկենք ճշմարտութեան այն կենդանի մարմնացումին՝ «Որուն մէջ կ'ապրինք, կը շարժինք, և ունինք մեր էութիւնը»: Փրկարար հաւատքը իր մէջ կ'ինթաղէ իրական անցք մը մէկ ուրաքէն միւսը, խաւարէն լոյսին: Ի՛ր, Քրիստոսի մէջ, որ ճշմարտութիւնն իսկ է, կը հասնինք մեր մտքի կամ իմացական կատարեալ ազատագրումին:

Խղմնամտի ազատութիւն: — Կաշկանդում կրնայ յառաջ գալ ոչ միայն տգիտութենէն այլ նաև մեղքէն: Խղճմտանքին վրայ ծանրացող յանցապարտութեան զգացումը, կըրնայ կապտել հոգին ամէն ազատութենէն: Ձի կրնար գոյութիւն ունենալ ոչ մէկ ազատութիւն արտայայտումի, սուրբ համարձակութեան, և Աստուծոյ ներկայութեան ելնելու, եթէ մեղքը իր ստորնացուցիչ և պղծագործ հանգամանքով կը ծանրանայ խղճմտանքին վրայ: Մինչև որ մեր սիրտերը չլուանք «ի խղճէ չարեաց» (Եբր. Ի. 22), ինչ որ հիմնական պայման է, չենք կրնար մտնել «ի սրբութիւն սրբութեանց»: Ազատագրեալ խղճմտանքը մաքրուած խղճմտանք մըն է: Երբ ասիկա իրագործուի, հոգին կը մտնէ խաղաղութեան մթնոլորտի մը մէջ: Այդ խաղաղութեան մէջ է որ խղճմտանքը կը գտնէ իր ազատութիւնը: Սակայն լոկ «Իր խաչին արևուն՝» է որ ասիկա կրնայ ճանչցուիլ: Երբ տեսնենք Քրիստոսի մահուան իմաստը, երբ ընդունինք զայն իբրև միակ միջոցը որով մենք հաշտութեան կը բերուինք Աստուծոյ հետ, այն ատեն միայն կը ճանչնանք թէ ի՛նչ կը նշանակէ խաղաղութիւն: Այն ատեն մենք կ'անդրադառնանք որ ոչ միայն խաղաղութիւն յառաջ բերելու հետամուտ ենք, այլ՝ կը զգանք թէ փոխադրուած ենք Անոր մէջ որ մեր խաղաղութիւնն է: Խղմնամտ, ուրեմն իր ազատութիւնը կը գտնէ աստուածային խաղաղութեան ուրաքի մը մէջ:

Կամքի ազատութիւն: — Դիտել կուտայ իրատես քարոզիչ մը «թէ մարդկային գործերու անկատարութիւնը և տկարութիւնը արդիւնք են կիրքերու գերագահութեան մեր մէջ, թէ կիրքերը շատ զօրաւոր են, և կամ-

քը իրենց ետեէն կը քաշկուտեն կը տանին, թէ կամքը, իրրեւ մարդուն մէջ կարգ ու կանոնը պահող ոյժ, ջլատուած է և անգործութեան մատնուած ։ Արդարեւ մարդուն կամքը, ներկայիս, ազատ չէ։ Ան գերին է կամ վատի և կամ ցանկութեան։ Եթէ մարդու մը կիրքերը չար են, իր կամքը զոհն է մեղսալից բռնակալութեան մը։ Կրնայ մէկը լսյս և զիտութիւն ունենալ, սակայն ազատութենէ զուրկ մնալ։

Մարդ մը կրնայ տեսնել ու ճանչնալ ինչ որ շիտակ է. այսուհանդերձ կրնայ խրտչիլ զայն գործադրելէ յանդիմանութեան կամ դժուարութեան վախէն։ Ասիկա գերութեան վիճակ մըն է։ Մէկը կրնայ տեսնել չարիքը ու զիտնալ թէ իր պարտականութիւնն է խուսափիլ անկէ. այսուհանդերձ կրնայ հակառակը գործել, հաճոյքի պատճառով որ առաւել կամ նուազ չափով կապուած է այդ չարիքին հետ։ Ի՞նչպէս կարելի է այսպիսի վիճակէ մը ազատիլ։

Ենթադրենք որ կամքը զօրացած է, և պարտականութեան զօրաւոր զգացումէ մը տարուած՝ մարդ կրցած է իր կիրքերուն վրայ տիրապետել. կրնա՞նք այսպիսի մէկը ճշմարիտ ազատութեան տիրապար առնել։ Անշուշտ ոչ։ Ինչպէս որ կարող ու կորովի գրող մը կ'ըսէ. «Կրնանք պարտադրել մենք մեզի որ կատարենք ինչ ինչ գործեր կամքի ճիգով, բայց ասիկա բոլորովին տարբեր բան է, մեր միտումներն ալ այդ գործերուն հետ հաշտ ուղղութեան մը մէջ դնելէն»։ Կամքին պէտք եղածը զայն զօրացնելը չէ, այլ զայն ազատագրելը։ Սմեն բանէ առաջ պէտք է զայն իրեն յարմար միջավայրին մէջ դնել. հո՞ն է որ ան պիտի գտնէ իր ազատութիւնը։ Կրնայ տկար ըլլալ, բայց բաւ է որ ազատ ըլլայ. որովհետեւ ազատ ըլլալով տակաւ առ տակաւ կը պատրաստուի զօրանալու։ Միջավայրը ուր կամքը կը գտնէ իր ազատութիւնը Աստուծոյ սէրն է։

Ազատութեան ժողովրդային սահմանումը — այսինքն «ընել ինչ որ կ'ուզես» — ի վերջոյ հետի չէ ճշմարտութենէ։ Փառաւորեալ հոգիները ազատ են, ու կ'ընեն ինչ որ կ'ուզեն. բայց սուրբ ըլլալով իրենց բաղձանքներուն մէջ, կ'ընեն ինչ որ Աստուծոյ հաճոյ է։ Այսպէս ալ ինչչափով որ մարդու մը զգացումները մաքրուին նոյն-

չափով ինք ալ հաճոյք կը զգայ ընելէ ինչ որ հաճոյ է Աստուծոյ. և ըստ այսմ կը գտնէ իր ազատութիւնը իր ուզածը ընելուն մէջ։ Ուրեմն ինչ որ կը սրբէ ու կը մաքրէ մեր զգացումները նոյն ատեն կ'ազատէ մեր կամքը։ Կամքը ազատագրելու համար ուրեմն պէտք է զայն Աստուածային սիրոյ մթնոլորտին մէջ բերել։ Ինչպէս որ միաքը կը գտնէ իր ազատութիւնը Անոր մէջ որ ճշմարտութիւնն է. և խղճմտանքը՝ Անոր մէջ որ մեր Խաղաղութիւնն է, այնպէս ալ կամքը կը գտնէ իր ազատութիւնը Անոր մէջ որ մարմնացումն է Կատարեալ Սիրոյ։

Արդ, եթէ սիրոյ մէջ է գաղտնիքը բարձրագոյն ազատութեան, հարց կը ծագի բռնականաբար թէ ի՞նչ է սէրը. ո՞ւր պէտք է փնտռել զայն, ուրկէ՞ կուգայ ան, և ինչպէս կրնանք ճանչնալ զայն, ու անոր մէջ բնակիլ։

Սէրը որ դուրս կը վանէ երկիւղը մեր մէջէն, և կ'ազատէ զմեզ, մարդկային սէր չէ, յարակից անոր բնութեան. սէր մը որ ի քուն ըլլայ մարդուն մէջ, զօր բաւական ըլլայ արթնցնել ու շարժման մէջ դնել։ Աստուածային սէրն է այն՝ որուն պէտք ունի հոգին. այսինքն ոչ թէ մեր սէրը Աստուծոյ նկատմամբ և ոչ ալ Աստուծոյ մեր նկատմամբ ունեցած սէրը. այլ Աստուծոյ սէրը ինքնին, որ իրրեւ շնորհք մը կը հեղուի մեր սիրտերուն մէջ։ Այս աստուածային սէրն է որ ետքէն պիտի ըլլայ մե՛ր սէրը Աստուծոյ նկատմամբ։

Միջնորդը այս Աստուածային սիրոյ մեր սիրտերէն ներս փոխանցումին՝ Սուրբ Հոգին է։ Նախ ինք անձամբ կը մտնէ մեր հոգիներուն մէջ, և ապա ներսէն մեզի կը ճանչցնէ Աստուծոյ Սէրը, և կը հաղորդէ զայն իբրև ոյժ մը որ կը զանդէ, ձեռի կը բերէ, ու կը թրծէ մեր զգացումները, յառաջադրութիւնները, խտէալները եւ գործերը։ Աստուած իր սէրը մեր սեպհականութիւնը կ'ընէ, ու ասիկա կ'ըլլայ մեր մէջ աղբիւրը Աստուածային կեանքին։ Այս պարզելին շնորհիւ, մենք կը սողորուինք սիրով մը որ նման է Աստուծոյ ունեցած սիրոյն, ու ասով մենք իրաւունք կ'ունենանք Աստուծոյ որդիներ կոչուելու տիաղոսին, իրրեւ մասնակիցներ ի՛ր իսկ բնութեան։ Հաւատացեալին բնութիւնը այն ատեն կը նմանի Աստուծոյ բնութեան։ Նա որ սիրոյ մէջ կը

բնակի, Աստուծոյ մէջ կը բնակի, և Աստուծոյ իր մէջ, Ով որ այսպէս մտած է սիրոյ ոլորտի մը մէջ, բարձրացած է երկնային մակարդակի մը: Շատ պերճախօս և զեղեցիկ եզր մըն է բնակիլը այսպիսի կապակցութեամբ. Սէբը այն բնակարանն է ուր կը բնակի մարդ: Ուրիշ խօսքով Աստուծոյն է այն վեհազօրը ուր հոգին սահմանուած է բնակելու, և, փոխադարձաբար:

Աստուծային սիրոյ այս վեհաբանին մէջ է որ կամքը պիտի գտնէ իր ազատութիւնը. Աստուծոյն է այն միջավայրը ուր պէտք է բնակի մարդկային կամեցողութիւնը, գտնելով մեր բնակարանը Աստուծոյ մէջ՝ արտաքին բոլոր կաշկանդութիւնները վերջ կը գտնեն: Ասիկա լոկ վերացական իտէալ վիճակ մը չէ, այլ կարելի իրականութիւն մը: Ճշմարտութիւն, Խաղաղութիւն, և Սէբ, նուազ իրականութիւններ չեն քան Միտքը, Խղճմտանքը և կամքը:

Մեր էութեան իւրաքանչիւր մասը իր ճշմարտ միջավայրին մէջ բերելով է որ հոգին իր ազատագրման գործը ի գլուխ կը հանէ: Լոկ պարտականութեան կեանքը այսպէս կը փոխակերպուի ազատութեան և երջանկութեան կեանքին:

Ենթադրենք որ մէկու մը բաղձանքները մասամբ միայն սրբուած են, Աստուծոյ խաղաղութեան մասին գաղափար մը կազմուած է և նոյնիսկ ճաշակուած: Սակայն ազատութեան պակասին հետեանքով, այս խաղաղութիւնը բոլորովին կը խանգարուի. անընդհատ պայքարներ ու կրկնուած անկումներ երջանկութեան ամեն կարելիութիւն կը կապտեն: Այսպիսին լսած է որ պայքարը քրիստոնէական կեանքին յատկանիշներէն է: Աստուծաշունչն ալ կը սորվի որ ինք պէտք է «բարուք պատերազմը մղէ», և խաչին դրօշին ներքե մտած զինուոր մը լինելով պէտք է հազնի Աստուծոյ ընձեռած բոլոր զրահները: Պայքարը, ինչպէս յստակօրէն կը նշմարէ Ս. Գրքին մէջ, անհրաժեշտ է քրիստոնէական կեանքին մէջ, Սակայն որչափ յաճախ այսպիսին չի գատորոշեր պայքարը ըմբոստութենէն: Այսպիսի պարագաներուն կրնայ ըլլալ որ կամքը ամբողջութեամբ չէ ենթարկուած Աստուծոյ. կրնայ ազդեցութեան ներքե ինկած ըլլալ չար բաղձանքի մը: Ինչպէս է ակնկալել, որ այսպիսի հո-

գիծ մը մէջ խաղաղութիւնը պիտի չկրնայ տիրապետել: Կարելի է երեւակայնի պարագաներ ուր կամքը զօրաւոր է և կիրքերը լաւ հակակշռի տակ առնուած: Բայց ի՞նչ կ'ըլլայ արդիւնքը. — կեանք մը որ արտաքինապէս հնուէ է չարէն, ու մօտ՝ բարիին. բայց ոչ երբեք կեանք մը որ երջանիկ է, որ ազատ է: Կրնաս հանդիպիլ մարդոց սրտնք կը գործեն խղճմտօրէն ու կը վարեն պարկեշտ և ուղիղ կեանք. բայց կրնայ պատահիլ որ այդ մարդը ոչ մէկ գաղափար ունենայ իրական երջանկութեան ու ազատութեան՝ Աստուծոյ ծառայութեան մէջ:

Խղճմտանքին ոյժը և կամքին զօրութիւնը բաւարար կրնան ըլլալ շատ մը պարագաներուն կիրքերը հակակշռի տակ պահելու համար, այնպէս որ մէկը կրնայ զերծ մնալ ընդհանրապէս արտաքին մեղանշական գործերէ, կրնայ նոյնիսկ ունենալ բաւականաչափ եռանդ ու գործունէութիւն Աստուծոյ ծառայութեան մէջ: Սակայն ի՞նչ պրկումի ու տեական կաշկանդումի ենթակայ է այդպիսին ներսէն: Քրիստոսի լուծը իրեն այնպէս կը թուի որ շարունակ կը ճնշէ իր վրայ: Այդ լուծը քաղցր չի գար իրեն և ոչ ալ Անոր բեռը՝ թեթև:

Արդ, ենթադրենք որ այսպիսին խորապէս ու լրակատար կերպով Ս. Հոգիի ազդեցութեան ներքե լինայ. ենթադրենք որ Աստուծային սէրը սրբէ իր բաղձանքները այն աստիճանով որչափ Աստուծային ճշմարտութիւնը ազատագրած է իր միտքը և Աստուծային խաղաղութիւնը՝ իր խղճմտանքը: Ի՞նչ կ'ըլլայ հետեւանքը: Լրակատար փոփոխութիւն մը տեղի կ'ունենայ իր ամբողջ կեանքին մէջ: Որովհետեւ հիմակ կը սիրէ ճշմարտութիւնը ու կը հրճուի անով, ինչպէս նաև կը ճանչնայ Անոր գերազանցութիւնը. այժմ զայն գործադրելը դիւրին կը գտնէ: Կը սկսի սիրել ինչ որ Աստուծոյ կը հրամայէ. ու երբեք դժուար չէ ընել ինչ որ մէկը կը սիրէ: Կը ստուգէ՝ իր իսկ փորձառութեամբ՝ ճշմարտութիւնը սա բառերուն. «Իր պատուիրանները կատարելը ծանր չէ»: Կը գտնէ ազատութեան գաղտնիքը և երջանիկ կը զգայ Աստուծոյ ծառայութեան գործին մէջ:

Ջանա՛ ուրեմն ըմբռնել սա փառաւոր իրողութիւնը թէ կրնաս Քրիստոսը ունենալ

իրբե Աստուածային սէր որ կը լեցնէ քու հոգիդ: Ինչպէս որ կրնայ ըլլալ որ նարդոսի շիշը տան մը մէջ գտնուի ու տանտէրը անտեղեակ մնայ անոր գոյութեան, այնպէս ալ Քրիստոս երկար ատեն կրնայ՝ Իր անունը դաւանողներուն մէջ ըլլալ և ասոնք անգիտակ մնան Իր ներկայութեան: Բայց անմիջապէս որ շիշը կոտորի, ու իւրը դուրս թափի, այն ատեն բուրմունքը կը լեցնէ ամբողջ տունը: Այնպէս ալ երբ Աստուծոյ սէրը հոսի սիրտերէն ներս Ս. Հոգիի միջոցաւ, երբ Աստուածային սիրոյ անհուն գանձերը, որոնք ամբարուած են Քրիստոսի մէջ, յայտնուին մեր մէջ, անոնց ազատարար ու աշակերպող ազդեցութիւնները անմիջապէս կը տեսնուին ու կը զգացուին: Իրենց մաքրիչ ու սրբարար արդիւնքները, մեր խորհուրդներուն ու բաղձանքներուն վրայ, կը ճանչցուին: Այն ատեն միայն կը սկսինք սորվիլ թէ ինչ ըսել կ'ուզէր Տէրը երբ կ'ըսէր. «Երանի անոնց որոնք սրտով մաքուր են, որովհետեւ անոնք զԱստուած պիտի տեսնեն»:

Բայց թերևս հարցնես. Ինչպէս կրնամ ստանալ այս սէրը: «Սէրը, ըսած է մէկը, չի կրնար արտադրուիլ հոգիին ինքն իր վրայ բանեցուցած արարքով մը. նաւակին մէջ եղող մարդը չի կրնար շարժման մէջ դնել զայն, մէջէն հրելով»:

Ոչ թէ ճիշտով ու մաքառումով է որ այս երջանիկ վիճակը յառաջ պիտի գայ մեր մէջ, այլ՝ իրական նուիրումովը մեր անձերուն՝ Աստուծոյ: Կանգնէ՛ հանդարտօրէն Իր առջև. բա՛ց քու էութեանդ բոլոր խողովակները Իրեն, ու թոյլ տուր որ գայ Ան ու տիրանայ քու էութեանդ բոլոր օթեաններուն: Յատկապէս տո՛ւր Իրեն քու սիրտդ, բաղձանքներուդ այդ ամբողջը, և զգացումներուդ գահը: Ենթարկէ՛ ամէն ինչ Անոր, ու Տէրը պիտի մտնէ, բերելով Իրեն հետ իր շնորհաց ու փառքի բոլոր ճոխութիւնները, վերածելով՝ պարտականութենէն միայն իր մղումը ստացող կեանքդ, սէրէն և ազատութենէն միայն իր թափը առնող կեանքի:

Հայրացոց՝ Ն. ԱՅԵՂԱՅ

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱՆ

«Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, որ կոստես զմարգարէսն եւ կարկոծ առնես զաւաճեալսն առ ինձ. Կանի՛ցս անգամ կամեցայ ժողովի զմահկուսն քա, զոր օրինակ ժողովէ հաւ զձագս խր ընդ թեւով եւ ոչ կամեցարուք. անա բողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ: Բայց ասեմ ձեզ, թէ ոչ ես տեսնիցեմ զիս մինչեւ ասիցեմ, օրհնեալ եկեալ յառնու Տեառն:» (ՄԱՍՅ. ԻԳ. 37-39)

Հրածեշտի վերջին խօսքերն են ասոնք Յիսուսի, խորունկ, տաք, սիրով ու ցաւով բարասուն, ինչպէս ամէն խօսք հրածեշտի: Իր կեանքի վերջին օրերուն մէջ արտասանուած, Տաղաւարահարաց տօնին առթիւ, ուր ուխտաւոր խայտաբղէտ բազմութիւն մը լեցուցած էր Երուսաղէմը, մեծ հոգիի մը և հայրենասէրի մը կողմէ, որ առանց սակարկութեան իր կեանքը և արիւնը ի սպաս դրաւ իր ժողովուրդին բարոյական և հոգեկան վերականգնումի գործին: Երեք տարիներ շարունակ, շրջապատուած խուճար մը երիտասարդ ու խառնազան մարդերով, ըսած էր անոնց թէ՛ իրենց ապրած դարը տեղի պիտի տար նոր դարաշրջանի մը. թէ՛ իրենց արիւնով ու ճիւղերով նոր ընկերութիւն մը պիտի կազմուէր, Աստուծոյ արքայութեան տիրապետումը երկրի վրայ, ու մարդոց կեանքէն ներս. թէ՛ իրենք կոչուած են գծելու ճամբան ուրկէ պիտի քայլէ Աստուած իր բանակներով: Ու այս մարդերով, Պաղեստինի ամենէն խուլ անկիւններն անգամ տարաւ իր խօսքին սփոփանքը, յուսահատած ու բարոյապէս քայքայուած սերունդի մը երակներէն ներս նոր կեանք ներարկեց, անոնց համար նոր տեսիլքներ, նոր երազներ հիւսեց, մատնանշելով նոր ընկերութեան կազմութեան մէջ հրեայ ժողովուրդին վիճակուած ու վերապահուած երջանիկ դերը, ու իր սրտին երգերով մեղմեց անոնց տառապանքը: Գիւղն ամբողջ, իր միամտութեամբ, պարզութեամբ, ու հաւատքով Իրեն կապուեցաւ. մինչ՝ Երուսաղէմը, տիրասպան այդ քաղաքը, իր կրօնական կազմակերպութիւններով, նեղմիտ մտաւորականութեամբ ու խարդախ առևտրականներով իր գէմ ելաւ: Քանի՛ քանի՛ անգամներ փորձեց Երուսաղէմի մէջ՝ փլուզու-

մտեղող կրօնական, ընկերային, բարոյական կեանքէն ներս նոր շունչ մը մտցնել, բայց միշտ իր դէմ գտաւ ժամանակակից հրեայ այլամեթ մտաւորականութեան արգելքը. ու վերջին անգամ ըլլալով, իր կեանքի վերջին օրերու նախօրեակին, ուզեց վերջին և արիւնտ փորձը կատարել: Երուսաղէմ եկաւ, ու ելաւ ուղղակի Տաճար, վերջին անգամ ըլլալով՝ ոչ թէ աղօթելու՝ այլ քանդելու, ոչ թէ երկրպագելու՝ այլ պատժելու:

Իր խօսքը՝ որ կ'արձագանգէ Տաճարի շրջափակէն ներս, ձայն մըն է որ կ'աղօթէ, աղօթք մըն է որ կը սպառնայ, ու սպառնալիք մը՝ որ ուսմբի մը պէս կը պայծի իր թշնամիներուն շրջանակէն ներս. կը խարազանէ իր խօսքին մտրակով ազահու թիւնը փարիսեցիներուն, որոնք այրիները կը կողոպտեն. կը կշտամբէ կեղծաւորները, որոնք բարեպաշտական ձևակերպութիւններ կ'ընեն, լաւագոյն կերպով ծածկելու համար իրենց ցանկութիւնները. կը ձազկէ այն հպարտները, որոնք չնորհակալ կ'ըլլան ուրիշներու նման չըլլալուն համար. ու իր խօսքը կրակի նման այրող՝ կը թափի ժամանակից հրեայ մտաւորականութեան վրիպած ներկայացուցիչներուն վրայ — փարիսեցի, դպիր, օրէնքի վարդապետ. — «Վայ ձեզ, կո՛յր առաջնորդներ, որ կը դոցէք գիտութեան, լոյսի, ճշմարտութեան, երկինքի դռները մարդոց առջև. դուք փոխանակ, ժողովուրդին իմացական և բարոյական բարձրացման ու ազնուացման ազգակներ ու լծակներ ըլլալու, ձեր ապրկարութեամբ, ու թանձր նախապաշարունակներով՝ ծանրոցներ կը դնէք ժողովուրդներու զգացումներուն վրայ. դուք կը գողնաք ամբոխներէն իրենց հոգիները, ձեր սխալ վարդապետութիւններով՝ կը պղծէք Աստուծոյ խօսքերը, կը գողնաք յաւիտենականութեան խոստումները և կը սպաննէք հոգիները, դուք մտաւորականներդ, պատճառ պիտի դառնաք այս Տաճարին ու ժողովուրդին փճացման, հոգևոր ստրկութեան ու իմացական անանկութեան»:

Արդարեւ, մտաւորականութիւնը, ազէտք և պատուհաս կը դառնայ ցեղի մը համար այն օրէն, երբ կո՛յր իր դերին, կը մոլորեցնէ հանրային կարծիքը: Յիսուսի ժամանակակից հրեայ մտաւորականութիւնը չարիք մը գարձաւ այդ ժողովուրդին

համար, որ Աստուծոյ վրէժնորութիւնը հրաւիրեց այդ ցեղին և Երուսաղէմի վրայ:

Երուսաղէմ, քաղաքն էր այլևս կայէնի թոռներուն, եղբայրներ սպաննողներուն, սուրբերու դահիճներուն, մարգարէներն ու առաքեալները կոտորողներուն: Անոր պատմութիւնը, որ պատմութիւնն է միևնոյն ատեն հրեայ ցեղին, արիւնի ու մեղքի շարք մըն է. հրէից վաւերական պատմութիւնը ո՞ճիրով կը սկսի — կայէնի եղբայրասպանութեամբ, — և ոճիրով կը կնքուի, — այդ ցեղի տիրասպանութեամբ. — ու դարերով Երուսաղէմը եղաւ չքեղ քղամիղը՝ ծածկելու համար այդ ցեղին նկարագրին յոռի երեսները, և բնութեան աղտոտ յատակը, եսամոլ հաշիւները, անոր հոգիին ծածուկ թշուառութիւնները ու ստորնութիւնները. հետեւաբար, պիտի ըլլար քաւութեան նոխազը այն մեղքերուն, զորս պատսպարեց իր պարիսպներէն ներս. ու Յիսուսի ձայնը, ի վերջոյ կրակի տաքութեամբ իջնելէ յետոյ հրեայ մտաւորականութեան գլխուն, թափեցաւ նաև Երուսաղէմի վրայ ողբի մը նման. «Երուսաղէմ, Երուսաղէմ, օրեր պիտի գան, ուր աշխարհի կարգը պիտի խռովի ու խանգարուի. ազգեր իրարու դէմ պիտի ելլեն, երկիրը անոնց օտքերուն տակ պիտի դողայ. թշնամիներդ քեզ պիտի պաշարեն, նեղեն ու քար քարի վրայ կանգուն պիտի չմնայ, ու ժողովուրդդ շղթայակապ գերի պիտի տարուի, որովհետև չլսեցիր ճշմարտութեան ձայնին, չմտար իմ թեւերուս պաշտպանութեան ու հակողութեան ներքև»:

Եւ Երուսաղէմ 40 տարի խաղաղութիւն չունեցաւ մինչև այն օրը երբ Տիտոս 70 թուականին քանդեց Տաճարն ու աւերակի վերածեց Երուսաղէմը, ու Յիսուսի խօսքերը, վանկ առ վանկ իրականացան, անողորմ ճշգրութեամբ, արիւնի ու կրակի պատմութեամբ մը: Իսկ հրեայ ցեղին վրձա՞կը՝ Տաճարի կործանումէն ու Երուսաղէմի պատուհասէն յետոյ: — Միջին դարէն հասած շատ յատկանշական աւանդավէպ մը կուտայ անոր ալ դժբախտ վախճանը: Այդ աւանդավէպը կ'ըսէ թէ երբ Յիսուս խաչի ծանրութեան տակ յոգնած, սպառած, հազիւ կը քալէր դէպի Գողգոթա, քայլ մը եւս՝ եւ կ'իյնայ գետին. գինուորներ զինք կը վերցնեն: Յիսուս վայրկեան մը կանգ

կ'աննէ, մինչ կատարած ու մոլեռանդ ամբօխէն հրեայ մը զօրաւոր բռունցք մը կ'իջեցնէ Յիսուսի ուսերուն՝ ըսելով.

— Վե՛ր, վե՛ր, ելիր և շուտ քալէ...
Յիսուս կը նայի հրեային ու կ'ըսէ.

— Կ'երթամ ես և պիտի հանգչիմ քիչ յետոյ. բայց դուն պիտի քալես ու հանգիստ պիտի չունենաս մինչև իմ վերադարձս: Ու այդ բոպէէն, կ'ըսէ զրոյցը, հրեան խկոյն հեռացաւ այդ տեղէն, ու այդ բոպէէն սկսեալ կը քալէ երկրի բոլոր ճամբաները, առանց երեք օրէ աւելի տեղ մը կենալու, առանց յոգնելու, եւ առանց կարեմալ մեռնելու. հարիւր տարուան մէջ մէկ բոպէ մը միայն կրնայ կենալ, Մննդեան զիշերը, երբ զանգակները կ'աւետեն Փրկչին Մնունդը. կըսեմք նաեւ Եկեղեցիի մը պատին մէկ բոպէ միայն կը հանգչի ու ապա նորէն կը շարունակէ իր թափառաշրջիկ կեանքը: Նիհար, չորցած, սմիջին հասակով, թխորակ գէմքով՝ մարդ մըն է ան, սփոս ինկած աչքերով, ցանցաւ մօրուքով, զիտէ բոլոր լեզուները, բայց միայն քրիստոնեաներուն կը խօսի. կը քալէ բոկոտն, չունի գրպան և չի գիտցուիր թէ ուրի՛կ կուգան իր զբամները և երբեք չեն աւելնար քովը՝ անունն է Ահատեբոս, կամ Ասոււածու մուղ, այսինքն՝ զԱստուած հրող, մղող. իսկ աւելի հանրածանօթ է ան թափառական հրեայ անունով:

Ահա այս զրոյցը, որ ճշմարիտ է պատմականէն շատ աւելի ահաւոր ճշգրտութեամբ մը, ցոյց կուտայ թէ՛ հրեայ ժողովուրդը՝ Աստուծոյ գէմ իր անհնազանդութեան մեղքին և ոճիրին պատիժը քաւեց ու կը քաւէ. թափառական է ան բոլոր երկիրներու մէջ, մղուած քալելու երկրի վրայ դարերու յաւիտենական ճամբան, դատապարտուած անմահութեան անէմքին, ճակատը խարանուած կարմիր և անջնջելի նշանով մը, ինչպէս Կայէնինը, իր եղբայրներն ըսպաննած ըլլալուն համար. կը քալէ ան թափառական, ճշմարիտ պատկերը՝ Ասոււածամուղին որ գեռ չէ տեսած իր Աստուծոյն վերադարձը, զոր կտրեց օր մը իր մարմինէն իբր փտած անդամ մը. ու պիտի քալէ, անհանգիստ, թափառական, մինչև որ ընդունի Վերիտոտս իբր իր Մեսիան, որուն քսան դարեր առաջ չուզեց ընել ոչ իսկ մէկ բոպէի մը հանգիստի ողորմութիւնը:

Բայց, քափառական հրեայի պատմութեան մէջ, տեսնելէ յետոյ հրեայ ժողովուրդի արիւնտ ողբերգութիւնը, սխալ պիտի չըլլար մտածել նաև թէ, թափառական հրեան պատկերն է ներկայ ամբողջ մարդկութեան, հրէացած մարդկութեան, որ մոռցած երկիրքի ճամբան, Աստուծոյ գէմ կը պայքարի, ու ամէն օր զԱստուած ետ կը մղէ, կը վռնտէ, սրտերէն ու տուներէն դուրս:

Աստուծոյ մը համար խաչ կանգնող, ու զԱստուած մեռցնող մարդկային կիրքերը ամէն ժամանակի և տեղի յատուկ են. մեզի համար զիւրին է այսօր հրեանեաներուն վրայ քար նետել եւ Աստուծոյ սպանութեան սոսկալի մտածումը անոնց մոլեռանդութեան վերագրել. բայց չխարուինք. հրեայ ժողովուրդը յուզող կիրքերը, ընդգէմ Քրիստոսի, ճշմարտութեան, սիրոյ, նուիրումի, արդարութեան ու զազափարի, ամէն սրտի մէջ կը գտնուին: Յիսուսի դատապարտած բոլոր կիրքերը կը դաշնակցին այսօր ևս իրարու հետ ու ազազակ կը բարձրացնեն խեղճելու համար ճշմարտութեան և կրօնքի ձայնը. ներկայ փարիսեցիութիւնը, որով կ'ուզենք իմանալ ձեապաշտ և ինքնահաճ պարկեշտութիւնը, ձեռք կ'երկարէ սաղուկեցիութեան, այսինքըն՝ թեթեւամիտ սկեպտականութեան եւ ծաղրածու նիւթապաշտութեան. եսասէր հարստութիւնը, նախանձոտ և ըմբոստ աղքատութիւնը, գիտութիւնը իր արհամարհանքով, տգիտութիւնը իր մոլեռանդութեամբ, շռայլութիւնն ու գայթակղալից ազահութիւնը, ստորին հեշտանքը, ու ապականուած մտաւորականութիւնը, մէկ խօսքով, բոլոր մարդկային յոռի կիրքերը կը միանան այսօր, սրտերէ, տուներէ, դպրոցներէ ու ընտանիքներէ, ընկերութիւններէ ու պետութիւններէ դուրս վտարելու զԱստուած, խեղճելու կրօնական զգացումը:

Քրիստոսի, այսինքն ճշմարտութեան, Լոյսի, քաղաքակրթութեան, յառաջդիմութեան թշնամիները, միայն հրեայ ժողովուրդի մէջ չեն, անոնք ամէն տեղ են ուր սիրտեր կան, զորս ճշմարտութիւնը կը վիրաւորէ և ճշմարիտ սէրը կը բորբոքեցնէ:

Թափառական հրեան կատարեալ պատկերն է ներկայ մարդկութեան. ու ներկայ

աշխարհի վիճակը՝ տարբեր չէ Բրիտանոսի ժամանակակից երուսաղէմի պատկերէն: Այսօր ալ անլուր ողբերգութիւններ կը կատարուին զանգուածներու հողիներուն ու կեանքերուն մէջ. սրբութիւններ կը վաճառուին, ժողովուրդներ կ'ոչնչացուին, եկեղեցիներ կը քանդուին, հազարաւոր երիտասարդներ պատերազմի կուռքերու սեղաններուն վրայ կ'ողջակիկուին, շէն երկիրներ կը փճանան, ու մարդուն ազնուագոյն ճիգերուն ու աշխատութեանց արգասիքը, զոր քաղաքակրթութիւն կը կոչենք, աւերակի կը վերածուի այսօր: Մարդոց պատմութիւնը, արձանագրութիւնն է աւելի անոնց ոճիրներուն ու անկումներուն, քան յաղթանակներուն ու նուաճումներուն. պատճառ. որովհետեւ կրօնքը կը նկատուի «թմրեցուցիչ մը». որովհետեւ քրիստոնէական առաքինութիւնները, սիրոյ, գութի, արդարութեան, ստկարութեան» կը նկատուին մերօրեայ իմաստասէրներէ եւ կարգ մը մտաւորականներէ. ոյժն ու բռնութիւնը կը դառնան իրաւունք եւ օրէնք. վասնզի մարդը, հակառակ իր ազնուական ձկտումներուն ու երազներուն, զեռ իր մէջ կը պահէ ստորին կիրքերու եւ բնազդներու խորունկ հակում մը, որ ընկերային արդի տեսութիւններով եւ իմաստասիրական գրութիւններով չէ որ պիտի սրբագրուի, այլ քրիստոնէական կրօնքի ոգիով ու գաղափարաբանութեամբ:

Բրիտանոս՝ Երուսաղէմի դիմաց, եւ քրիստոնէութիւն՝ աշխարհի դիմաց. բայց արդի քրիստոնէութիւնը նահանջի մէջ՝ չկրցաւ իր հզօր ձայնը բարձրացնել համատարած չարիքին դէմ, որ պատերազմն է. սն իր պատճառները ունի. քրիստոնէական ոգին նահանջի մէջ է նաև ժողովուրդներու կեանքէն ներս. եթէ ժողովուրդներու կեանքին մէջ լայն տեղ բռնած ըլլար քրիստոնէական ոգին ու գաղափարաբանութիւնը, այսօր, պատերազմի սա օրերուն մէջ, քրիստոնեայ մայրեր՝ իրենց հազարաւոր մեռնող զաւակներուն արիւնը պիտի պահանջէին պատերազմը դարբնող հրէշներէն. եթէ ժողովուրդները քրիստոնեայ ըլլային, այսօր, անոնց զէնքի տակ կանչուած զաւակները, զէնքերը վար պիտի նետէին քաջութեամբ, ինչպէս ըրին նախկին քրիստոնեաները, ու ըսին. «մենք եղբայրներ ենք, չենք կըր-

նար մեր ձեռքերը լուալ մեր եղբայրներու արիւնին մէջ, չենք ուզիր մենք մեռնիլ, ոչ ալ՝ մեռցնիլ, այլ աշխատիլ, սիրել եւ ստեղծագործել»:

Մինչեւ որ մարդկութիւնը չգառնայ քրիստոնէութեան, պիտի չունենայ ոչ մէկ երջանկութիւն ու խաղաղութիւն, ու ամէն օր պիտի երազէ իր լաւագոյն մասը կրակներու եւ աւերակներու մէջ, իր ոճիրի եւ արիւնի պատմութեան վրայ նոր նոր արիւնոտ էջեր եւ դրուագներ աւելցնելով:

Աշխարհը այն ատեն կը խաղաղի, ու մարդկութիւնը կը դադրի թափառական հրեայ ըլլալէ, երբ ազգերու, ցեղերու, լեզուներու, ըմբռնումներու եւ հողիներու մէջ ծագի ու աճի Աւետարանի լոյսը. երբ Աւետարանի ընկերային գաղափարաբանութիւնը հիմ դառնայ բոլոր ընկերային նոր տեսութիւններու. երբ մարդիկ նոյն երազներով, իտէալներով խանդավառուին. երբ Աստուծոյ տիեզերական հայրութեան եւ մարդոց համամարդկային եղբայրութեան համբուրելի գաղափարները տեղ գրաւեն մարդոց ըմբռնումներուն ու մտածումներուն մէջ. ուրիշ խօսքով, երբ ամբողջ մարդկութիւնը քրիստոնէութեան զրօշակին ու հովանիին ներքեւ գտնէ երջանկութիւն ու խաղաղութիւն. այն ատեն միայն «պիտի լուեն պատերազմները», այն ատեն միայն «պիտի դադրին թշնամիներու յարձակումները, եւ երկրի վրայ Սէր եւ Արդարութիւն պիտի տիրապետեն»:

ԱՐԹՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՀԱՒՍՏՔԻ ԵՒ ՄՏԱԾՄԱՆ ՑՈՒՔԵՐ

Որպէսզի հոգեւոր կեանքը կարելի ըլլայ իրականացնել մարդուն մեջ, անհրաժեշտ է նախ վերածնութիւն մը. → ուրիշ ոչ մէկ առաւելութիւն չկրնար փոխարինել զայն. ոչ տոմարի ճիշտութիւն մը ազնուական պերճանք, ո՛չ բնկերային դիւրի փայլը, ո՛չ մատուցական բարձր առաւելութիւններ եւ ոչ իսկ ասուածաբանական ներկուտ հրմտութիւն:

ԻՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՏԵՐԱԶՍԻ ՄԱՍԻՆ



Ինչպէս անհատէ անհատ, այնպէս ալ ժողովուրդէ ժողովուրդ, եղելութիւնները տարբեր կերպով գիտակցութիւն կը դառնան: Առարկայօրէն գիտելով՝ արտաքին աշխարհի եղելութիւնները կ'անցնին մարդոց ջիզերէն և գիտակցութեան մէջ կը դառնան ապրուած բան: Բայց ամէն հոգի գէպքերը միեւնոյն կերպով չապրիր: Այսպէս ժողովուրդէ ժողովուրդ, ինչպէս անհատէ անհատ, կը տարբերին հոգեկան ապրումները:

Պատերազմը եղելութիւն մըն է, որ տարբեր անդրադարձում կը գտնէ ժողովուրդներու հոգիէն ներս, և տարբեր նշանակութիւն ունի:



Զինացիին համար պատերազմը այն չէ ինչ որ Մահմետականին կամ Կերմանին համար է: Զինացիին համար պատերազմը Չարին յայտնութիւնն է, զոր պէտք է համբուրութեամբ տանի: Զինացին խաղաղասէր է. ան երբեք տիրապետող չէ եղած: Անոր համար, կարելի է ըսել որ ազատութեան գաղափարը երբեք սրբութիւն մը չէ եղած, ինչպէս արեւմուտքի ազգերուն համար: «Բռնակալութիւնները կուգան ու կ'երբան, կ'ըսէ չին իմաստունը, մենք կը հնազանդինք անոնց, բայց մենք է որ կը մնանք յաւիտեանս»:

«Բիրս ուժը պէտք է ձգել առանց ընդդիմութեան, կ'ըսէ չին իմաստասէրը, որ պէտքի ան պարսպութեան մեջէն անցնի երբայ, որովհետեւ ընդդիմութիւնն է որ բան մը կանգուն կը պահէ»:

Հետեւինք չին իմաստասէր Լաօձէի մտածումներուն.

«Երկիրը բռնի կարգի բերել կարելի չէ, «Ինչպէս փորձառութիւնը ցոյց կուտայ, «Երկիրը ենթակայ է հոգեկան ուժի մը «Որուն մարդ բռնի ուժով չի կրնար յաղթահարել»:

«Ո՛վ որ կ'ուզէ կարգի բերել զայն — անկարգութիւն յառաջ կը բերէ»:

«Ո՛վ որ ցանկայ հաստատ հիմերու վրայ գնեւ զայն, — տատանումի կը տանի: «Ձէնքերու ուժը չի կրնար յաղթող ըլլալ. «Որ տկարը կը յաղթէ ուժովին, «Որ թոյլը կը յաղթէ զօրաւորին, «Ամէն մարդ գիտէ աշխարհի վրայ, «Բայց ոչ ոք կ'ուզէ ըստ այնմ գործել» — :

Մեզի համար տարօրինակ կը թուի մըտածելու այս կերպը. սակայն Չինաստանի պատմութիւնը ցոյց կուտայ որ ան, գարեւր շարունակ ոտնակոխ եղած է արշաւող բանակներու մուճակներուն տակ, բայց զիմագրուած է բոլոր բռնութիւններուն և կը մնայ յաւիտենապէս:

Զինական այս միտքն է որ կարծես Արեւելքէն անդրադարձած է Ռուս մտքի վերայ: Արդարեւ Դոստոյէվսքիի սա խորհրդածութիւնները խոր հետքերը կը կրեն Զին մտածումին.

«Պէ՛տք է որ մարդ բռնի ոյժ գործածէ, թէ խոնարհութեամբ և սիրով փորձէ: Ես պիտի փորձեմ խոնարհութեամբ և սիրով: Երբ որոշես միանգամընդմիջտ սիրով գործել, կարող ես յաղթել ամբողջ աշխարհին. սիրով խոնարհութիւնը ոյժ մըն է, որ կրնայ ամենազօրաւորներն անգամ գրաւել»:

Զին և Ռուս մտքի այս մէջբերումները կատարեցինք ցոյց տալու համար թէ ինչպէս կ'ըմբռնեն անոնք բիրտ ուժը: Մինչ գիտենք որ Արեւմուտքի ժողովուրդներուն համար բիրտ ուժը ա՛յլ նշանակութիւն ունի. բիրտ ուժը մեր պատմութիւնները կը կապտէ, անոր դէմ ըմբոստանալ, զայն վստել մեր սուրբ պարտականութիւնը կը համարինք՝



Շատեր պատերազմի մէջ կը տեսնեն մարդկութեան յաւիտենական վերանորոգումը: Ինչպէս բնութեան մէջ հոկայական ուժեր կը քանդեն երկիրը, կը տեղափոխեն լեռները, կը խորտակեն միլիոնաւոր զանգուածներու կեանքերը, առանց խղճահարութեան, ու այդ աւերակներու վրայ կը բարձրանայ նորէն նոր բուսականութիւն մը, նոր աշխարհ մը, այսպէս է նաև մարդկութիւնը, գատապարտուած յաւիտենական

պայքարի, պատերազմի և խաղաղութեան մէջ տարուբերուելու:

Ասիկա վարդապետութիւնն է անոնց, որոնք կ'ընդունին թէ մարդկային աշխարհը, Ֆիզիքական աշխարհին նման, կը կառավարուի ուժի օրէնքով:

«Անտեղ որ մարդը բնութեան օրէնքներուն դէմ կը շարժի, կ'ըսէ ճանթօն, կը բնաջնջուի:

«Կարելի չէ բնութեան օրէնքները փոխել. կարելի չէ օդին բաղադրութիւնը, կրակին էութիւնը, հեղեղին ընթացքը փոխել:

«Համաճարակներ, հրաբուխներ, հեղեղներ հազարաւորներ կը թաղեն:

«Ի՞նչ է արդիւնքը. — հազիւ տեսանելի արդիւնք մը՝ Ֆիզիքական աշխարհի ընդհանուր երևոյթին վրայ: —

«Կը հարցնեմ. — պէ՞տք է որ բարոյական բնութիւնը մեր յեղաշրջումին մէջ աւելի խղճամիտ ըլլայ քան Ֆիզիքական աշխարհը:

«Պէտք չէ՞ որ գաղափար մը, ինչպէս Ֆիզիքական աշխարհին մէջ օրէնք մը, բնաջնջ ընէ, ինչ որ իրեն դէմ է. գաղափար մը, որ պիտի փոխէ բարոյական բնութեան կեցուածքը, պիտի փոխէ մարդկութեան կառուցուածքը, արիւնի ճանապարհով պէտք չէ՞ երթայ»: —

Ասիկա արդարացումն է յեղափոխութեան, բռնութիւններու, գաղափարաբանական կռիւններուն և արիւնահեղութեանց:

19րդ դարու փիլիսոփաները սովորեցուն թէ պատերազմը բնական վիճակ մըն է. թէ մարդը մարդու դայ է: Կեանքի պայքարի տեսութիւնը՝ մարդը գազաններու կարգը դասեց: Անոնց համար «ոյժը՝ կեանքի հիմնական մեկ երեւոյթն է»: Այս տեսութիւնը ընդհանրանալէն յետոյ ժողովուրդները իրենց դրացիներու վրայ նայեցան՝ ինչպէս գազաններու: Ձգտեցան իրար փճացնելու, փոխանակ բարգաւաճ յարաբերութիւններ հաստատելու իրարու հետ:

Ո՞ր զրացիները իրարու հետ սիրով եղած են: Մէկին յաջողութիւնը՝ միւսին անյաջողութիւնը կը համարուէր: Ու վերջապէս ժողովուրդները եկան այն եղրակացութեան որ միայն մեծ զօրութիւն մը կարող է խաղաղութիւնը պահել:

* * *

Ինչ ըմբռնումներ ալ որ գոյութիւն ունենան այլևայլ ժողովուրդներու մէջ պատերազմի մասին ընդունինք որ ան մարդկային գոյութեան սպառնացող մեծագոյն պատուհաններէն մէկն է:

Շատեր խորհած են զայն անկարելի գարձնել, սակայն ան միշտ գոյութիւն ունեցած է. աւելի ճիշդ, ան՝ ժողովուրդներու գլխին կախուած է, հիւանդութեան մը նման, որուն երբ և ինչպէս յայտնուելը ոչ ոք գիտէ:

Ինչպէս կեանքն ու մահը իրարու հակառակ եղրեր են, նոյնպէս եւ՝ խաղաղութիւնը եւ պատերազմը: Խաղաղութեան ճամբուն վրայ է որ կը զարգանայ պատերազմը: Կէշ հաշտութիւն մըն է որ նոր պատերազմի մը դուռը կը բանայ:

* * *

Ըսինք որ Չինացիին համար պատերազմը Չարին յայտնութիւնն է: Չինացիին հոգին ըմբռնելու համար պէտք է ըմբռնենք անոր աշխարհայեացքը:

Չինացին պուտոտայական է. անոր համար կեանքը բիւ մըն է. ան՝ ոյժի յայտնութիւնը կ'ընդունի որպէս բնական երևոյթ մը: Ապրելու մարմաջն է որ կեանքը կը դժուարացնէ, զայն տաժանելի կը դարձնէ: Ճշմարիտ պուտոտայականին համար՝ ապրելու մարմաջը ջնջել, կը նշանակէ ցաւէն ազատիլ: Չինացին տեղի կուտայ բոնի ուժին առջև. եթէ պէտք ըլլայ, մէկդի կը նետէ կեանքը, աւելորդ բեռի մը պէս:

Բաղձանքները ջնջելով ապրիլ, ներվանային միանալ, պուտոտայականի մը երազն է. անով է որ նորէն աշխարհ գալէ՝ նորէն տանջուելէ կ'ազատուի:

Այսպէս՝ գաղափարաբանութիւնները և աշխարհայեացքները, հաւատքներն ու կրօնքները կը վարեն ժողովուրդներու ճակատագիրը: Անոնք կեանքի պայքարին մէջ անվեհեր, կամ վախկոտ, պայքարող կամ համակերպող կը դարձնեն:

Ասիկա կ'ապացուցանէ թէ գաղափարներն ու հաւատքները, ճակատագրային յատկութիւն մը ունին: Անկուսի դասա-

պարսեոյ ժողովուրդներու մեջ նախ կը մեռնի հաւատքը, ապա կը մեռնի, նոյնիմեց, ժողովուրդը:

«Դժուրն պիտի ըլլաս երկնքի աստղերուն պէս անհամար» — ըսած է Եհովան իր ընտրեալ ժողովուրդին: Այս հաւատքն է որ մինչև այսօր Իսրայէլի ժողովուրդը պահած, պահպանած է կորուստէ:

Կը տեսնենք թէ ինչպէս հաւատքին մէջ բնագանցական էութիւն մը կայ, որ կը պաշտպանէ ժողովուրդի մը գոյութիւնը, և այդ էութիւնը թաղուած է անոր ամենէն խորունկ արմատներուն մէջ:

* * *

Ինչպէս ժամանակին Ասորեստանն ու Բաբելոնը, նոյնպէս և Իսրայէլի ժողովուրդը պատերազմատէր եղած է և անգութ:

Եհովան, Իսրայէլի Աստուածը Թագմի Աստուածն է եղած, դաժան և անկարեկիր, որ հրամայած է իր ընտրեալ ժողովուրդին ջնջել անհաւատները:

Ան հաւատք ներշնչած է Իսրայէլացիներուն, հակառակ անոնց փոքր թիւին:

«Տէրը ընտրած է Իսրայէլի ժողովուրդը բոլոր մեծ և փոքր ժողովուրդներու մէջէն. ան փոքր ժողովուրդ մ'է. բայց քանի որ Տէրը անոր օգնական է և ապաւէն, ան յաղթական պիտի դուրս գայ պատերազմէն»:

«Թէ որ սրտիդ մէջ ըսես որ, այն ազգերը ինձմէ շատեր են ես ի՛նչպէս կրնամ զանոնք հալածել, անոնցմէ մի՛ վախնար. այլ յիշէ միշտ թէ ի՛նչ ըրաւ քու Տէր Աստուածդ Փարաոնին ու բոլոր եգիպտացիներուն... քու Տէր Աստուածդ պիտի ջախջախէ այն բոլոր ազգերը որոնցմէ դուն կը վախնաս: Ուրեմն մի՛ վախնար անոնցմէ վասնզի զօրաւոր և անարկու Աստուածը ձեր մէջն է... քու Տէր Աստուածդ զանոնք քու ձեռքդ պիտի մատնէ ու զանոնք մեծ կործանումով պիտի կործանէ մինչև որ ամէնքը բնաջինջ ըլլան»:

Այս է մարգարէներու խորհուրդը Իսրայէլի ռազմիկներուն, երբ անոնք իրենցմէ աւելի զօրաւոր թշնամիի մը դէմ ձակատած են: Մինչ Ասորեստանն ու Բաբելոնը կորսուած են աշխարհի երեսէն, ստակալին մինչև այսօր անոնց ռազմատէր ոգին Հին կտակարանի մէջ կարծես կը մնայ յաւերժացած: Մինչև այսօր այդ ոգին է որ Իսրայէլի որ-

դիքը դաժան և անկարեկիր կը դարցունէ ոչ-հրեաներու հանդէպ: Քրիստոնէութիւնը, իր սկզբնական շրջանին, Հին կտակարանի այն ոգիին հետեւելով է որ կը տանէր իր պայքարները:

* * *

Ամբողջ Հին կտակարանը լեցուն է Իսրայէլի Աստուծոյն ռազմատենչ պատուէրներովը: Շատերէն քանի մը հատը միայն յիշած ըլլալու համար մէջբերենք Երկրորդումն Որինաց Գրքին է. Գլուխէն ինչ ինչ համարներ.

«Երբ քու Տէր Աստուածդ տանի քեզ այն երկիրը, ուր պիտի մտնես ժառանգելու համար, ու քու առջեւէդ շատ ազգեր հալածէ, այսինքն Քեթացիները, Ամորհացիները... որոնք քեզմէ մեծ ու զօրաւոր են, ու երբ քու Տէր Աստուածդ զանոնք քու ձեռքդ տայ, զանոնք պիտի զարնես, ու բռնորովին կորսնցնես. անոնց հետ ուխտ չընես, ու անոնց չողորմիս. ոչ ալ անոնց հետ խնամութիւն ընես, այլ անոնց ասանկ ըրէ. անոնց սեզանները կործանէ, անոնց արձանները խորտակէ, անոնց անտառները կտրէ, ու անոնց քանդակուած կուռքերը կրակով այրէ: Եւ սպառէ այն բոլոր ազգերը, որոնք քու Տէր Աստուածդ քու ձեռքդ պիտի տայ. քու աչքդ անոնց չխնայէ»:

* * *

Այս ոգին է որ կը շարունակուի նաև Մահմետականներու Գուրանին մէջ, ուր Մահմամմէտ հաւատացեալներուն կը պատուիրէ ջնջել անհաւատները:

Քրիստոնէութիւնը, ամենէն վսեմը կըրօնքներէն, իր ամենէն խոր առաքելութիւնը համարեց ժողովուրդներու եղբայրութիւնը. «Եւ եղիցին մի հօտ և մի հովիւ» իտէպլին եղաւ քրիստոնէութեան: Ուղղաօրութեան գաղտնի համար քրիստոնէութեան տուած տուրքը դուրս է այս նիւթէն: Պատերազմը, դարերու ժառանգական մեղքի մը պէս, այսօր գործեալ մարդկութեան վրայ ինկած է: Մարդկութեան դէպի անկեալ վիճակներուն վերագարձն է պատերազմը, որմէ ե՞րբ և ի՞նչպէս պիտի ազատուի մարդկութիւնը, յայտնի չէ:

Լ. ՆԱՍՏԱՆԻ Գ. ՄԵԼԻՔԵԱՆ

ՔԱՆԱՍՏ ԵՂՇԱԿԱՆ

ԴԱՇՏԵՐՈՒՆ ՄԷՋ...

Դաշտերուն մէջ կը ծրփայ, ահա հանդէս մը վըճիտ,
Ծառ ու ծաղիկ կը ժրպտին արեւին տակը խարտեաշ,
Հովը կ'անցնի վերեւէն, համերգ մեռնող հեռուներ:

Շատըրուաններ կը բըղխին, ամայութեան մէջ տըրտում
Ձերդ կոյսերու հասակներ կը խոյանան դէպի վեր,
Դէպի երկինք ցընցուղուող արծաթ աղօթք մը ինչպէս:

Ջրմրուխտաշող սա դաշտին կուրծքին վըրայ տըրտփուն
Մուխ մուխ երկինք բարձրացող նոճիներուն հըրդեհն մորճ,
Որոնց շուքերը կախարդ գերդ դագաղներ կը հանգչին:

Կ'անցնիմ սելով մօտիկէն կերոններուն այդ կանգուն,
Հոգիիս մէջ կըրելով իբրև անհուն ննջեցեալ
Պարմանութիւնն իմ անցեալ, անվերադարձ պատարագ:

ՏԷՐՈՒՆԻ

ՓԱՅՏԷ ՍԱՆԴՈՒՒՆ

Փայտէ սանդուխ որ խնկօրէն կը տանի
Վերնայարկն ուր ոսկի աշունն է փրօւեր
Այգիներու մշկահոտ գանձը բարի.
Քեզ կը տեսնեմ դեռ յուշին մէջ, երբ աւեր

է տունն արդէն փոթորիկէն օրերուն:
Սո՛ւրբ ցայգատօն, կը հոսէին աղբիւրներ:
Ձեռք մը հերմակ սիրոյ ճըրագը բռնէր,
Բարձրանայի՛ր երազներով մտորուն...

Քեզմով կ'իջնէր աղջիկ - լուսինը մառան,
Ու տղայ - արեւը տանիքին վրայ կ'ելլէր.
Փայտէ սանդուխ, սիրտս երկուքի ես բաժներ...

Հիմա չի կայ ոսկի աշունն, այլ միայն
Կը տանիս վեր տրտում աստղի մը բոցին
Ճըրագն ու սիրտըս որ ահա՛ կ'առկայծին...

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

ԼԵՁՈՒՍԳԻՏԱԿԱՆ

ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ

ԿԱԶՄՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Տառադարձութիւն: Տառադարձութեան հարցը բոլորովին անլոյծ կը մնայ, հակառակ այդ մասին եղած վէճերուն և լըբագրական զանազան յօդուածներու յորդորներուն: Աշխատանքի մեծ բաժինը Մըխիթարեաններունն է դարձեալ այս խնդրին մէջ ալ, որոնք ամէն ճիգ ըրին վերջնական լուծում մը տալու հարցին, բայց ամենէն աւելի այս մասին անլսելի մնաց իրենց ձայնը. ու տառադարձութեան խառնափնդոր ձևեր կը տիրեն լեզուին մէջ, առանց վերջնական արդիւնքի մը յանգելու:

Հարցը դարձեալ կը կայանայ գրաբարի ու աշխարհաբարի օրէնքներուն իրարմէ զանազանուելուն վրայ: Ունինք դասական տառադարձութիւն մը՝ գրաբարի յատուկ, որ ոչ մէկ կերպով կրնայ գոհացնել աշխարհաբարի պահանջները: Ե. Դարէն այսօր՝ գիրերու տառերուն(*) փոփոխութիւնը յայտնի իրողութիւն է, որուն դարմանին մասին չէ որ պիտի խօսինք, այլ օրուան տուեալներով գոհանալու և բաւարարուելու սկզբունքին հետևողութեան մը լոկ: Հետևաբար անիմաստ է այլևս աշխարհաբարի տառադարձութեան օրէնքը գրաբարի օրէնքներուն վրայ պատուաստուելու ճիգը, մնաց որ հին օրէնքով նորը վարելու սկզբունքը մեզ յանդիման պիտի գնէ շուրջ Փոսկոլոյի Սեւիգնե (Sévigné), Մեյլէտի (Meillet), Մոնսպելիէի (Montpellier) նման ծիծաղելի արտաոտողութեանց: Այս ձեւը կը կոչուի գրադարձութիւն բայց տառադարձութիւն՝ երբեք: Յիշեցի վերեւ այս խնդրին շուրջ յարուցուած վէճերու պարագան, որոնց մասին բաւական ընդարձակ խօսած է Հ. Վ. Հացունի իր «Ուղղագրութիւն և առողանութիւն հայերէնի գործին

մէջ, զոր վերջերս հրատարակեց, և ուր փոխանակ վերջնական լուծում մը տալու հարցին, տակնուվրայ ըրած է զայն, իր գրաբարէն չկարենալ բաժնուելու յամառութեան մէջ. որով և ոչ մէկ նպաստ բերած աշխարհաբարի փնտռած տառագարձութեան օրէնքներուն: Գիրքին այդ գլուխը, կարգ մը ուրիշներու հետ, (վերջինը մանաւանդ) քննադատութեան սահմանէն ալ անդին է, որով պիտի չարժէր աւելի ծանրանալ վրան: Միայն, ճաշակի մը համար յիշենք որ վերի տառագարձուած անունները այդ գիրքէն հաւաքած ենք...

Այս բոլորէն յետոյ դառնանք բուն տառագարձութեան: Բայց նախ սահմանենք բառը: «Տառագարձութիւնը այն օրէնքն է, որուն համաձայն օտար անունի մը կամ բառի մը հնչումներն ըստ կարելւոյն ճշգրտօրէն մեր լեզուին փոխադրելու ատեն՝ այդ տարբեր տառերու յարաբերական արժէքը նկատի կ'առնուի: Երբ ճիշդ փոխադրութիւնը կարելի չըլլայ՝ հարկաւ մօտաւոր յարմարագրութեամբ միայն կը լեցուի այդ թերին»(*): Այս պարզ օրէնքին հասկացողութիւնը ամէն ինչ կը լուծէ ինքնին, և աւելորդ կը դառնայ Միխիթարեանց դէպի Ե. դար կատարած յափօթերս արշաւը: Տառագարձութեամբ ուրեմն մեր մէջ պիտի փոխադրենք օտար հնչումները կամ ձայները ըստ կարելւոյն, այսպէս ազատելով ստեղծուած խառնաշփոթութենէն, որով երբեմն ինչ անձանաչելի վիճակ կ'առնեն բառերը մինչև որ հայու մը բերանը մտնեն: Տառագարձենք ուրեմն պարզապէս ինչպէս որ կ'արտասանենք. Վիքթոր Իւկօ, սեռական՝ Իւկօի, ոչ Իւկօյի. Փարիզ, ոչ Բարիզ ոչ ալ Պարիս. Պոսիւէ, և ոչ՝ հրէշային կերպով Պոսուէտ. Լա Ռոշֆուքօ, Լիվըրփուլ, Շվարց, ոչ՝ Շուարց, Անվերս, Մոնթիեսքիէօ, Փասթէօր, Վալթեր, Ուալինկթըն, Նիւ Եօրք (Հ. Վարդան նոր քաղաք մըն է շինած Ամիրիկայի մէջ՝ Նիւ Յորկ անուանելով զայն), Օտեսա, Ռասին, Շէյքսպիր, Պետլին, Շիլլեր, Ֆեթլըր, Սեյնէ, Մեյէ, Պըրըրա Շօ, Խալն, Բենթլըպրի, Թոլսթօյ՝ հնչելով վերջին յ գիրը, և այլն և այլն: Այս է որ կը կոչուի տառագարձութիւն, և ոչ

(*) Զանազանութիւնը կը գնեմ երկու բառերուն մէջ. առաջինով նշան, իսկ երկրորդով նշան հասկնալու համար:

(*) Ե. Ե. Դուրեան Պատմ. Հայ Մատենագրութեան, էջ 14:

թէ ցարդ կատարուածները, որոնք գրա-
դարձութիւն են և խապառ շեղած իրենց
նպատակէն:

Կ'արժէ տառադարձութեան այս պա-
րագային նկատի ունենալ երեք կէտեր.

Ա. Ուշադրութիւն ընել որ տառադար-
ձուած անունը կամ բառը ըստ կարելոյն
նոյն ձևով արտաբերուի արեւելահայոց և
արեւմտահայոց կողմէ. հետևաբար զգու-
շանալ եւրոպական p, k, t գիրերը հայերէն
բ, գ, դ, գիրերով տառադարձելէ, նկատե-
լով որ արեւելահայք և արեւմտահայք նոյն
ձայները չեն տար միշտ այդ գիրերուն,
այլ գործածել միշտ թաւերը՝ փ, ք, թ:

Բ. Առանց մեր լեզուին միատելու՝ հե-
տեւիլ Երեւանեան նոր ուղղագրութեան ըս-
կզբունքներուն, մասամբ գէթ երկուքին
մէջ նոյնութիւն մը ստեղծելու համար, շե-
տևաբար առանց խիթալու պէտք է ջանալ
ե և Ո գործածելու, քան թէ է և Օ, քանի
որ այս վերջին գիրերը վտարուած են Ե-
րեւանէն: Վերը մեր ներկայացուցած օրի-
նակներուն մէջ թէև չհետեւեցանք այս ըս-
կզբունքին ամբողջութեամբ, քանի որ ա-
ռաջարկի նոր ձև մըն է այս, սակայն ոչ
մէկ անպատեհութիւն ունի օրինակ Hugoն
տառադարձել Իւկո ձեռով, սեռականը ընե-
լով Իւկոի: Ըստ այսմ գրել Վոլթեր, Շեյ-
քսփիր, Քենթըրպրի և այլն: Նոյն սկզբ-
ունքով զգուշանալ եւրոպական V և գեր-
մանական W ի տեղ ու գործածելէ, փոխա-
նակ Վի:

Կ. Ջանալ իւրաքանչիւր անուն տա-
ռադարձել իր բուն լեզուին ունեցած հըն-
չումով, և ոչ թէ տարբեր խողովակներէ
առնելով զայն: Ուստի պէտք է ըսել «Անգ-
լիոյ ձորձ թագաւորը», բայց՝ Ժորժ Քլի-
մանսօ, «Յունաց Երկիրոս թագաւորը», ևն.:

Այս պարզ սկզբունքներուն համաձայն,
որոնցմէ ոմանք ի գործածութեան են ար-
դէն, տառադարձութեան հարցը կրնայ վերջ-
նական ձև մը ստանալ, շատ մը փոթորկա-
լից շրջաններէ անցնելէ յետոյ:

Երեւանեան Ուղղագրութիւնը:

Մերկանալով այս մասին ամէն նախա-
պաշարումէ, գժուար է դարձեալ մօտենալ
հարցին, հին և նոր ուղղագրութեանց միջև
հաշտութեան եզր մը գտնել փորձելու հա-
մար: Այս ուղղութեամբ շատ բան կայ գրը-

ուած դարձեալ(*), զորս չենք կրնար գըժ-
բախտաբար նկատողութեան առնել հոս,
քանի որ յիշուած գործերը չկրցան վերա-
հասու ըլլալ կատարուած լեզուական եղա-
շրջութեան մը գիտական հիմքին ու պա-
հանջներուն, և յանկարծակի կատարուած
փոփոխութեան մը իրողութեան առջև չըլ-
մորած՝ աւելի կիրքով ու անհասկացողու-
թեամբ արտայայտուեցան, հակառակելով
գրեթէ որեէ փոփոխութեան. որով և վրի-
պեցաւ իրենց փափաքը նշանակութիւն ու-
նենալէ Հայ կառավարութեան ձեռնարկած
այդ գործին համար, որ շարունակուեցաւ
և պետական ոյժով գործադրութեան դըր-
ուեցաւ. մինչ հայութեան մնացեալ մասը
ամուր փարած մնաց իր հայրերուն աւան-
դութեան, չուզելով մէտ մ'իսկ շեղիլ ան-
կէ, խիզախօրէն պարսաւելով իսկ իր հայ-
րենակիցները որոնք «ոսկին փոխանակած
էին կապարին հետ»(**):

Հիմա որ անցած է ժամանակը, և ար-
տասահմանի ու Հայաստանի ժողովուրդին
միջև յառաջ եկած տարակարծութիւնը ա-
մէնուս ծանօթ իրողութիւն մըն է, կ'արժէ
անդրադառնալ հարցին, կատարուած փո-
փոխութեան պատճառաբանութեանը մէջ,
քանի որ ճակատագրական է անոր դերը
հայութեան համար՝ վերջ ի վերջոյ:

Ոչ մին պարսաւելու, ոչ միւսը պաշտ-
պանելու կամ հարցին վերջնական լուծում
մը տալու նպատակ և կարելիութիւն ու-
նինք հոս. բայց իրողութիւնը իբրև գիտա-
կան գործ՝ կ'ուզենք նկատի առնել, առանց
տարուելու նախապաշարուած ու զանազան
նկատումներով յառաջ բերուած կարծիքնե-
րէ, ինչպէս կը պահանջէ ներկայ հարցին
հանգամանքը:

Խնդրին էութիւնը կը կայանայ հայ ուղ-

(*) Մասնաւորապէս տես հետեւեալները.
ա. «Երեւանեան Ուղղագրութեան դէմ» Լ. Վ. Հացունի:
բ. «Հայերէնի Երեւանեան Ուղղագրութեան
խնդիրը» Բ. Ե. ՍԻՈՆ, 1927, 171-174:
գ. «Հայ լեզուի Ուղղագրութեան դասեր»
Լ. Ա. Ղաղիկեան 48-65:
դ. «Խորհրդային Հայաստանի նոր ուղղա-
գրութիւնը և ուղղագրութեան հարցը» Խ. Գ.
Քարտաշեան:
ե. «Ուղղագրութիւն և առողանութիւն Հա-
յերէնի» Լ. Վ. Հացունի, հայն:
(**) Լ. Վ. Հացունի:

զագրութեան «անսայթաքութեան» վրայ, հեռաւարար այդ տեսակէտով պէտք է մօտենանք անոր:

Նկատի չենք սոսնիւր այստեղ օտար լեզուներ, որոնք կրնան շատ աւելի զեղծումներ ունենալ անսայթաքութեան տեսակէտէն՝ բաղդատմամբ մերիւնին: Ատոր շատ լուրջ պատճառներ ունին անոնք, բայց մերը երբ կրնայ բացարձակ անսայթաքութեան հիմերու վրայ դրուիլ ու լեզուին ընծայել անհամեմատ առաւելութիւններ, տատանստ կեցուածք մը այս մասին ոչինչ ունի արդարանայի:

Իրողութիւն է որ Ե. դարուն կազմուած Մեհրոպեան այբուբէնքը անսայթաք ուղղագրութիւն մը կուտար մեզի, զիրը հընչուովն հաւասարելու սկզբունքին վրայ հիմնուած: Մորենացի և Փարպեցի որոշած պէս կը վկայեն այս մասին. «սփոսպրելով զհայերէն յաթուխայն ըստ անսայթաքութեան սիւղղորայիցն հելլենացեոց» (Մորենացի), «... ստէպ հարցմամբ զսփութայիցն զազափար ըստ անսայթաքութեան յունիկն» (Փարպեցի): Իրողութիւն է դարձեալ որ այդ անսայթաքութիւնը կորսուած էր արդէն երբ Երեւան կը ձեռնարկէր ուղղագրական բարեփոխութեան մը: Կը մնար ուրեմն կա՛մ հաշտուիլ յառաջ եկած սայթաքող ձեւին հետ, և կա՛մ սրբագրել լեզուն՝ անոր տալու համար հին անսայթաքութիւնը: Այս վերջինն էր որ ընտրեց Հայաստանի կառավարութիւնը:

Շատ էին անշուշտ այս առիթով առաջ եկած անպատեհութիւնները, որոնց մասին խօսուած ու գրուած է արդէն, սակայն գիտական ու անսայթաք լեզուի մը առաջ գալուն պարտղան անուրանալի է, և այդ ուղղութեամբ կ'արժէ մտնենալ Երեւանեան ուղղագրութեան ունեցած առաւելութիւններուն, ու հակադրել անոր՝ յառաջ եկած անպատեհութիւնները, ընդհանուր կշիռ մը ունենալու համար: Չեղաւ այս բանը դժբախտարար: Քննադատներ հարուածեցին նոր ուղղագրութեան թերի կողմերը միայն, զուրկ՝ հիմնաւորուած պատճառարանութիւններէ, ընդհանրապէս մօտենալով նոր ուղղագրութեան՝ հին ուղղագրութեան կանոններով (*), առանց ան-

զրոպտանալու որ նոր ուղղագրութիւնը իր հետ րեքու նոր կանոններ, որոնք պարտաւոր չէին նոյն ըլլալու հինին հետ. հակառակ պարագային փոփոխութեան պէտք չէր մնար: Պարզ է որ նորին գալովը՝ զազաքեցաւ հինը, ու սխալ է հին կանոնով նորը քննադատել, քանի որ նորին համար հինը սխալ է միշտ. որով անհիմն էր քննադատութեան այդ ձեւը, որուն չանդրադարձան սակայն բոլոր անոնք որ առիթ ունեցան Երեւանեան ուղղագրութեան դէմ իրենց խիղճին վրաւորուած զգացումները գոհացնելու համար կարծիք յայտնել: Թերի էին ուրեմն այդ քննադատութիւններէն շատերը, և սակայն հարցը կը մնար այժմէական որեւէ մամանակի համար, հիմա մանաւանդ որ ամբողջ գրականութիւն մը կ'ըլլայ այդ ուղղագրութեամբ՝ Հայաստանի մէջ:

Աշխարհաբարը պէտք է աւելի հիմնական պատճառարանութիւններով մօտենայ ուրեմն անոր, մատնանշուած թերութիւններէն հետո՛ւ՝ կարելի օգուտներ քաղելու անկէ՛ վաղուան հայերէնին համար:

Երեւանեան ուղղագրութիւնը կրցաւ յառաջ բերել անսայթաք հայերէն մը, ազատելով լեզուն ընթերցումի խոչընդոտներէ, և օժտելով զայն զիրը հնչումին հաւասարելու սկզբունքով (*):

Պէտք չէ անտեսել, սակայն, Ե. դարու հայերէնին և Երեւանեան ուղղագրութեան անսայթաքութեանց նկատմամբ կարեւոր երևոյթ մը: Երեւան՝ անսայթաքութիւն մը յառաջ բերելու համար երկու կերպ կրնար ունենալ: Առաջինով՝ պէտք էր մերկացնէր լեզուն յոստամուտ աղաւաղումներէ, ձայներու փոփոխութիւններէ և այլն, ինքզինք գտնելու համար Ե. դարու անսայթաքութեան առջև: Երկրորդով՝ առանց նկատի առնելու վերոյիշեալ պարագաները, կրնար օրուան լեզուին ներկայացուցած երևոյթներով կազմել իր անսայթաք հայերէնը, անտեսելով իր սխալ պատմական աղերսը հինին և նորին միջև: Այս երկու կերպերուն առաջինին ներկայած զժուարութիւնները

(*) Հ. Վ. Հացոսեիի առարկութիւնը այս մասին աղքատ է իր բոլոր կողմերով: Վերև յիշուած սկզբունքը ունէինք մենք Ե. դարուն, և կորսուած այդ սկզբունքը վերահաստատելու ճիշդ՝ գովելի է միայն:

(*) Տես Սլոնը:

կրնային խորհիլ տալ լեզուական մեծ յեղաշրջութեան մը մասին, որով նորը պիտի նոյնանար հինին հետ: Բայց մանեկ այդ աշխատանքին ծանրութեան տակ՝ առանց զբաղական արդիւնքի մը վստահութեան, պիտի խրոչեցնէր առաջին անգամ այդ գործին ձեռնարկողները, ինչպէս եղաւ իսկ: Երկրորդ ուղղութեամբ՝ կը նուազէր աշխատանքը, թէև միւս կողմէ երևան կուգար խզում մը հինին հետ: Մնացեալ դժուարութիւնները ծանօթ են արդէն: Այս երկրորդ ձևով յառաջացաւ Երեւանեան ուղղագրութիւնը, նոր հիմնուած լեզուի մը հանդամանքը տալով իրեն, և ուղղակի իրքեւ ազրիւր ընդունելով փոզովուրդին խոսած լեզուն, ինչպէս ըրած էր Մեսրոպ Ե. Գարուն:

Ուղղագրական այս փոփոխութիւնը, որ քանի մը դիրքի վտարուելուն շուրջ կը դառնար գլխաւորաբար, որքան որ դիւրացուց հասարակ փոզովուրդին գրելու և կարդալու աշխատանքը, նոյնքան բարդ յորժնուածք մը յառաջ բերաւ հայ լեզուն ուսումնասիրորէն սերտողին համար, քանի որ ան պէտք ունի այժմ հինը ևս սորվելու, նորին շատ մը երևոյթները բացատրելու համար:

Հայ լեզուի բարեփոխութիւնը, որուն պէտք ունէինք անկասկած, հարց է առկա ին արտօտահմանի հայութեան համար, որ իր կարգին չի կրնար բոլորովին անտեսել Երեւանի մէջ յառաջ եկած՝ ընդունելութեան կողմէ մեզի համար կանխահաս թերևս, բարեփոխել լեզուն, որմէ շատ ալ հեռացած պիտի չլլային իր աշխատութեանց արդիւնքները, եթէ ունենար առիթը լեզուական բարեփոխութեան մը պարագիւր:

Նիկոսիոս
1939

Պ. Վ. ՄԻՆՍՍԵԱՆ

Վ Ե Ր Պ Ա Ն

«Սոսի-ի Մարտի քիտն մեջ» էջ 70-ու վարէն ճիճեբորդ տղ, երկուրդ բար կարգալ երկգորդ:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԿԱՍ ՆՈՐ ՀԱՅԵՐԷՆ^(*)

Նախ երկու խօսք այն մասին թէ պէտք է ասել աշխարհաբա՞ն թէ աշխարհաբար [ինչպէս և գրաբա՞ն թէ գրաբար], այսինքն այն բար կազմուած է բա՞ն բառով՝ թէ բար մասնիկով:

Շատ վէճեր են տեղի ունեցած այս մասին, յատկապէս Արեւմտահայ գրականութեան մէջ, որոնց թւումը կամ ամփոփումը մեր աշխատութեան ծրագրից ու նպատակից դուրս ենք համարում: Յաղթահարեց այն կարծիքը, թէ երկրորդ ձևն է ուղիղ, որին հետևում է այժմ և գրողների ամենամեծ մասը: Գլխաւոր ապացոյցը ռամկօրէն բառն էր, որ կազմուած է նոյնպէս օրէն մասնիկով՝ իբր Մակբայ: Աւելի լաւ ապացոյց է աշխարհօրէն բառը, որ գործածել է Շնորհալին՝ Ս. Պարսամի վկայարանութեան յիշատակարանում, «ըստ ստորուց [բնագրի] շարվաղդի և ծամածուռանյարմար և աշխարհօրէն բանիցն գոյր»:

Ինչպէս որ միջին հայերէնը^(**) շարունակութիւնն է գրաբարի, նոյնպէս և աշխարհաբարը շարունակութիւնն է միջին հայերէնի: Սակայն մենք տեսանք որ միջին հայերէնը մի ընդհանուր բառ է միայն, և կան իրար ժամանակակից զանազան միջին հայերէններ, որոնցից մէկը՝ կլիկիկան հայերէնը, պետականութեան շնորհիւ բարձրացաւ գրականութեան: Հետեաբար և ունինք բազմաթիւ աշխարհաբարներ: Այս բառով հասկանում ենք այստեղ այն խոսակցական հայերէնները, Հայաստանի և գաղութների զանազան կողմերում, որոնց շարունակութիւնն են կազմում արդի բարբառները:

Բայց ինչպէս որ գրաբարի և միջին հայերէնի սահմանը որոշելու համար կարելի է գնել մի սր և է վճռական կէտ, նոյնը նաև միջին հայերէնի և այդ աշխարհաբարների համար: Այնպէս որ երբ կարդում ենք աշխարհաբարի հնագոյն շրջանի գրք-

(*) Վերցում՝ մեծանուն հեղինակի «Առաժուրիւն Հայ Լեզուի» գործէն (Իջ. Կոլոխ), որ 1936ին արժանացաւ «Սրբոց Թարգմանչաց - Իւրեան» գրական մրցանակին: ԽՄԲ.

(**) Տե՛ս Սոսի 1938, էջ՝ 278, 304, 338:

ւած քննարկը, կարծես զգուժմ ենք դեռ միջին հայերէնի շունչը:

Ահա այդպիսի մի նմուշ 1591 թուից՝
Յիշատակարան Բարսեղ Վարազեցու
(տպ. Ռիւանդ հտ. Ժ. էջ 34)

«Աստուած ողորմի ասացէք խուս Սարգսին, որ բազում աշխատանք ունի սուրբ եկեղեցեաց վերայ, որ երկր գեղեղեցւոյ զբանդին և եղև պատճառ որ զոներն ամէն քարէ շինեցին. գերկու եկեղեցւոյ սալարս. գերկու ժամտան գերկու խորանն, զսան քարերն, զղաթարի քարերն, որ յառաջ չկայր՝ նոր արարին. Ձաֆար փաշէն թափրէզ կու նստէր, քէհից դաստուր առանք շինեցինք. քէհէն ի Վան կու նստէր. սուպաշին երեկ թէ կու քակեմ. ժամատուն ի դուրս էք գրեր. նոր խորան էք շիներ. Խորով աղէն Իսքանտար փաշի զուլն Ձաֆար փաշին խզմաթ կ'անէր. մէջն անկաւ չեթող. ու զմարդիկ յափսէն եհան. թէ չի քակուէր նա շատ տուգանք կ'առուէր: Փառք ներողութեան Աստուծոյ. յամենայն ժամ. ամէն:»

Երկու յատկութիւն ենք տեսնում աշխարհարարի առաջին նմուշների մէջ, 1. գրաբարի առատ խառնուրդը, 2. տեղական բարբառների կնիքը. այնպէս որ կարելի է ասել, թէ իւրաքանչիւր գաւառ ունի իր տեղական առանձին աշխարհաբարը, որ զըրրողի գիտութեան համեմատ մօտենում կամ հեռանում է գրաբարից:

Տալիս ենք այստեղ հինգ նմուշ աշխարհարարի ամենահին գրուած քննարկից, բոլորն էլ ԺԷ. դարից:

1. Արձանագրութիւն 1609 թուից, որ աւանդում է Ձաքարիս Սարկաւազը, հտ. Գ. էջ 22 (Յովհաննա վանք). կրում է Եւրեանի բարբառի կնիքը.

«Իլիւանճու Ամրումի այգին տուինք յիշատակ սուրբ Կարապետիս. ինչ մարդ ևս բանիս միջումն այլևայլ խօսք յետ և յառաջ բան ասայ ու կտրայ, սուրբ Կարապետն իւր յիշատակն կտրայ:»

2. Մի հատուած Առաքել Դավրիժեցու Պատմութիւնից (տպ. Վաղարշապատ 1884, էջ 457). գրուած է 1662 թուին և կրում է Կիլիկեան միջին հայերէնի կնիքը:

«Եւ է քար մի, որ օձի քար ասեն, եւ թուրքերէն խտրելիազ աղչասի ասեն, բուր և սպիտակ լինի, ի սատաֆի ջընսէն է,

մէկ երեսն զուպայ (զմրէթաձե) է և մկկէ կրեսն զուր. և ի զուր երեսն ունի մարդուրայ բարակ սև թել և է այսպէս. խաւսիաթն նորա այն է, որ թէ ուպ, որ է պէգմազով ի վերայ օձիկ ցաւոյն կարմիր տեղին գնես, նա կպի ի վերայ կարմիր տեղին և ութն օր չի փրթիր ի վերայէն մինչև որ սղջանայ Աստուծով:»

«Եսար՝ որ է գոյնն կանաչ փերփէրի գոյն, և կայ ի յինքն կարմիր կետեր շատ, և մօտ ֆոսնկն մախպուլ է. և պինդ է ի բանելն, և շատ է. ամէն տեղ կայ:»

3. Պարզաբանութիւն հոգեբնուագ Սաղմուսացն Դաւրի. ի նուաս Յոնանիսէ վարդապետէ Կոստանդինուպոլսեցւոյ սպարեցեալ արղեամբք եւ գոյլւմ Ագուլեցի խօնայ Դուլնազարի որդի խօնայ Նահապետի, Վենետիկ 1687: Յառաջարանի մէջ ասում է թէ Ագուլեցի խօնայ Դուլնազարի որդի խօնայ Նահապետը տեսնելով որ Իտալացիք ունին Սաղմոս այնպիսի լեզուով որ ամէնքը հասկանում են, ինքն էլ ցանկացել է ունենալ հայ ժողովրդական լեզուով մի Սաղմոս: Իր փափաքը յայտնել է Պօլիս, բայց չի կարողացել լրացնել: Վենետիկ գնալով յայտնել է Յովհաննէս վարդապետին և ահա վարդապետը լրացնում է նրա փափաքը: 840 երեսանոց ընդարձակ մի գիրք է, որի լեզուն խառնուրդ է գրաբարի, արեմտեան աշխարհաբարի և արևելեան աշխարհաբարի. կան նոյնիսկ ինձանից, քեզանից ձևերը: Հեղինակը Պոլսեցի լինելով՝ ընդհանուր ոճը արեմտեան հայերէնն է:

«Իմ հոգւոյս խորուկ և ծածուկ խոցերն և ցաւերն սրտիս և լերդիս խորուկ տեղերէն գոռալով դէպի քեզ աղաղակեցին տէր աստուած. քոյ սահանաց ձայներովն, իբր քոյ երկնային զոներին ձայնին նման ձայն հանելով և որոտալով առ քեզ զօչեցին, և ճար խնդրեցին բժշկութեան: Ձէրէ ամէն քո գբօսանքդ և քո ալիքդ իմ վերայէս անց կացան, իբր քո ամէն բարկութիւնդ և ցամուռնքդ, քո զանազան փորձութիւնքդ և քո պատուհասներդ խառնակեալ ծովու մրրկաց տալաներին նման իմ վերայէս անց կացան, և զիս ծածկեցին և խեղճ արարին» (էջ 218):

4. Գանձ չափոյ՝ կոռոյ՝ բլւոյ՝ եւ դրամից բոլոր աշխարհի. ժողովեալ Ղուկա-

սու Վանանդեյուոյ, ծախիւք եւ ի խնդրոյ հայցման Զուղայեցի Խաչատուրի որդի պարոն Պետրոսին, 1699 յԱմստէրդամ: Կրում է Զուղայի բարբառի կնիքը:

«Մօսկովի ալիշվերիչի փողն արծաթ է, որ սօմ ասի: 1 ունկուզ ոսկին 110, 120 կօպէք այ: 1 թօքմայ մարչիլն՝ 55, 60 կօպէք այ, զահ աւել կահ պահաս: Ինչ զարայ հաստ իքմին կայ ողջ փութով կու խօսին. և ինչ բարակ իքմին կայ՝ Ֆունթով խօսին» (էջ 36):

5. Մի հատուած Զաքարիա սարկաւազի Պատմութիւնից, հտ. Բ. էջ 9, գրուած 1699 թուին. Կարբեցի զիւղացոց բերանը գրուած մի խօսք է. ընդհանուր ֆոնը գըրաբար է, բայց կրում է Երեւանի բարբառի կնիքը:

«Շահի ոտաց հողի յայտնի լիցի ի Կարբուոյ ողորմելի շինականացս: Զի մեք լուաք թէ Սամանլու է գալիս աշխարհս մեր, մեք զլլրաշի եմք սովոր. գեղով ելանք փախանք թէ Օսմանցեոցն ծառայ չեմք կարող լինել. եւ եկաք զէպ ի սահմանս քոյոյ տէրութեանդ:»

ԺԼ դարում շարունակուած է զեռ նոյն ոճը. գրականութեան լեզուն զուտ գրաբար է մանաւանդ լատինաբան գրաբարը: Հազիւ երբեմն երևում են աշխարհաբար գրքեր: Անա գրանցից վեց նմոյշ՝ ժամանակագրական կարգով:

1. Մի հատուած Շրոգէրի Արամեան լեզուի զանձից, որ հայերէնի քերականութիւնն է լատիներէն լեզուով (տպ. Ամստերդամ 1711): Այստեղ իբր յաւելուած կան աշխարհաբարի նմոյշներ բոլորն էլ բարբառով: Յաջորդը Երևանի բարբառով է (էջ 347):

«— Այ տղայ Ղազար գնա մին մեր Ծատուրն կանչէ գայ:

— Աղայ գնացի Ծատուրն նոր տեղ էր մտել. ասաց թէ շորս հագնիմ գամ:

— Բարի իրիկուն Աղային թողութիւն անես Աղայ շատ վաստակի էսօր շուտ գընացի տեղս Ղազարն եկաւ ասաց Աղէն կանչոււմ այ:

— Գիտես ախպէր Ծատուր, ինչու քեզ էսէնց բիվախտ կանչեցի:

— Հրամէ աղայ ղուլլուղիտ հազիր եմ:

— Իզուց ախպէր Ծատուր մեր տանն հացկերուտ այ՝ շատ մարդ եմ կանչել...»

2. Գիրք որ կոչի ճիմն ստուգութեան հաւաքեցեալ յունեմեք բանասիրէ, Պոլիս 1783. գրաբարը միացած Պոլսի ռամկականի հետ՝ թուրքերէն բառերով խառն:

«Զէրէ՛ ամենայն ազգքն խաչապաշտից՝ են նոյն առաքելականի սրբոյ եկեղեցւոյն անդամք, և որդիք, և հետեողքն առաքելականի եկեղեցւոյն առձայնին. զէրէ Աղամ բանական էր և մենք ալ Աղամայ որդիք եմք, անոր համար բանական կըսուելմք. վասնորոյ՝ հիմիալ, թէ որ Քրիստոսի առաքելոց հետեւմք նէ առաքելական կլլամք, և առաքելական կու կոչուելմք: Եւ եթէ չի հետեւմք նէ՛ չեմք ըլլար» (էջ 29-30):

3. Զեմ հոգեւոր Պոլիս 1787, գրեթէ նոյն լեզուով ինչ որ նախորդը:

«Թէ որ ասենք, յաւուրս մէսիային պիտի խոր խաղաղութիւն լինի, ինչպէս ասեր է Դաւիթ... իմտի ասոնք ինչպէս զլթ չեն: Ասեմ քի ով հրեայք, զայն Դաւթի Սաղմոսն զուք ի վերայ Սողոմոնի կու մեկնէք. և յորժամ կամիք հաջել ի վերայ աւետարանչացն կու դարցնէք զտիւմէնն ի վերայ Քրիստոսի: Լաքին մանի չէ. կէրչէքտէն այն սաղմոսն ի վերայ Քրիստոսի եսխշմիչ կուլինի. զէրէ կասէ Դաւիթ...» (էջ 94):

4. Ուղատուր վարդապետ Սիւրմելեանի Համառոտ բուաբանութիւն աւխարհաբար և առանց գրաբարի, միայն գարձեալ Պոլսի ռամիկ ձևերով:

«Իրեք կերպ կլլայ կտորը: Առջի կերպը ան է՝ որ համրողը ու յայտնողը հաւասար կըլլան, այսինքն թէ վերինը, և թէ վարինը նոյն բախամ կըլլան. զորօրինակ ասոնք: 2/2, 3/3... Երկրորդ կերպը աս է որ վերինը մենձ կըլլայ քան զվարինը. զորօրինակ ասոնք 3/2, 5/3... Երրորդ կերպը աս է, որ վերինը պզտիկ կըլլայ քան զվարինը. զորօրինակ ասոնք. 1/2, 3/4...» (էջ 60):

5. Գիրք որ կոչի բանալի զիսութեան (բառարան հայ-ռուս, ռուս-հայ և խօսակցութիւն հայ-ռուս). հեղինակն է Կղէօպատուրայ Սարաֆեան, Սանկպետրոբուրգ 1788. մաքուր արևելահայ աշխարհաբար է՝ խառն գրաբար ձևերով:

«— Ուր ես գնում հրամանքդ այսպէս կանուխ:

- Ես գնում եմ դպրատունն:
- Յորում ժամու պարախ հրամանքդ տեղն լինել:
- Երբ որ զանգակն հարէ:
- Յորում ժամու հարէ զանգակն:
- Եօթներորդ ժամուն:
- Աշակերտքն որք գալիս են յետ հա-
րելոյ զանգակին լինում է նոցա պատիժ:
- Ասուցիչն նոցա նստուցանում է ի
վերայ ծնկանց:
- Ծատ են նստում նոքա այնպէս:
- Միչի այն ժամանակն երբ ուսու-
ցիչն նոցա հրամայէ կանգնելը (էջ 245):

6. Տեսութիւն համառօտ հին եւ նոր ախարհագրութեան, Հ. Ղ. Ինճիճեան, Վե-
նետիկ 1791. մաքուր արեւմտահայ աշխար-
հաբար:

«Վառչավա կամ Վարչ. մայրաքաղաքը բոլոր թագաւորութեան լեհու ուր կընստի թագաւորը. քաղաքը պարսպապատ է, Վիսլա գետին վրայ շինած. պատիկ՝ բայց իրեն եօթը արուարձաններով կամ վարչ-
ներով մեծ է: աս տարիներս արուարձան-
ներուն չորս ղիացեն ցըցերով պատնէչ կամ մէթէրիկ քաշեցին. քովը ունի մէկ մեծ գաշտ մը ուրտեղ կըլլայ իրենց ժո-
ղովը թագաւոր ընտրելու վրանի կամ չա-
տրի տակ» (էջ 71):

Արդէն մտնում ենք ժ-թ գարը, որ աշ-
խարհաբարի տիրապետութեան դարն է: Դարիս միայն առաջին երեսնամեակում լոյս են տեսնում տառը աշխարհաբար գիրք, որոնցից երկուսը արեւելահայ բարբառով: Հիմք է դրում հայ լրագրութեան: Չհաշ-
ւելով Հնդկաստանի Ազգաբարձը՝ որ հայոց առաջին թերթն էր գրաբար լեզուով (1794-
96), 1800 թուին Վենետիկում Հ. Ղուկաս Ինճիճեանը հրատարակել է սկսում Տարե-
գրութիւն անուն թերթը, որ տարին մի անգամ էր լոյս տեսնում և նոյն տարում պատահած գէպքերի ամփոփումն էր: Տա-
րեգրութիւնը շարունակուեց մինչև 1802: Այս թուին զաղարեցնելով թերթի հրատա-
րակութիւնը Հ. Ղուկաս Ինճիճեանը յաջորդ 1803 թուեց սկսաւ հրատարակել եղանակ Բիւզանդեանը, որ նոյնպէս տարեկան մէկ անգամ էր դուրս գալիս և որի հրատարա-
կութիւնը տեւեց մինչև 1820: 1812 թուին գարձեալ Վենետիկում, Պոլսոյ Արշարուն-
եաց ընկերութեան նպատակով հրատարակ-

ուիլ սկսաւ Դիսակ Բիւզանդեան երկու-
րաթաթերթը, որի խմբագիրներն էին Հ. Գրիգոր վրդ. Կապարաճեան և ուրիշները: Այս թերթն էլ տեւեց մինչև 1816: Այնու-
հետև մի քանի տարի հայերը դուրկ են լրագրութիւնից: 1822ին Հնդկաստանում հրատարակում է Շեմսարան օմանալիեան թերթը՝ Ջուղայեցոց բարբառով: 1831 թը-
ւին Պոլիս էր եկել Ալեքսանդր Բլակ ա-
նունով ֆրանսիացին և սկսել էր հրատա-
րակել Մոնիստար Օսման անունով ֆրան-
սերէն լրագիրը, իբրև Բ. Կրան առաջին պաշտօնական թերթը: Յաջորդ տարին սկսում է նոյն նպատակով Թափվիմի Վա-
խի թուրքերէն թերթը: Ամբողջութիւնը միաժամանակ որոշում է և հրատարակել նոյն թերթի հայերէն թարգմանութիւնը, անունը գնելով Թափվիմի Վազայի, Լրոյ գիր, որ յետոյ դարձաւ «Լրոյ գիր մեծի տերութեան օմանեան»: Այս թերթը երե-
ւում էր շարթական մի անգամ և պա-
րունակում էր միայն տեղական լուրերը: Նա ապրեց միայն մի տարի (1832-3) և թէև բովանդակութեան կողմից շատ ոչինչ թերթ էր, բայց և այնպէս վայելում է ա-
ռաջին Պոլսահայ թերթը լինելու պատիւը:

Ինչ ընթացք է բռնում աշխարհաբարը այս շրջանի մէջ: Կրօնների մէջ կամաց կամաց սկզբունք է գտնում այն միտքը թէ լաւ և վերահասկանալի աշխարհաբար ունենալու համար պէտք է նախ հրաժարի գրաբար քերականութիւնից, երկրորդ՝ օ-
տար (ընդհանրապէս թուրքերէն) բառերի տեղ գնել նրանց համապատասխան հայե-
րէնը, երրորդ՝ խոսնափել տեղական բար-
բառային ձևերից: Առաջին կէտը շատ հեշտ գործադրելի մի միջոց էր, բայց դա ծնունդ էր տալիս մի նոր հարցի, ո՞ր բարբառը ըն-
դունել հիմք՝ հետեւելու համար նրա քե-
րականութեան: Եթէ այդ հարցը դրուած լինէր մի այնպիսի ժամանակ, երբ հայ ժո-
ղովուրդը ամէն տեղ մամուլ, գալրոց և գրականութիւն ունեցած լինէր, իսկապէս լուծուածը շատ դժուար պիտի լինէր և տեղի պիտի տար մեծամեծ վէճերի և տարա-
ձայնութեանց: Բայց այն ժամանակ մամուլ կար միայն Վենետիկում, Պոլսում, Չմիւռ-
նիայում և Հնդկաստանում: Միւսները, եթէ գոյութիւն ունենային էլ, շատ երկրորդա-
կան արժէք ունէին և սրանցից մէկին կամ

միւսին հպատակ (Այսպէս Ջուղա, Պիտեր-բուրգ, Միլան, Լիովոնո, Թրիեսո, Վիեննա են)։ Հոսմի տպարանը փակուել էր 1781ին Ամստերդամինը նոյնպէս։ Բայց Պուլիս և Զմիւռնիա գրեթէ միեւնոյն բարբառն ունէին։ Վենետիկում նստած հայերն էլ ամենամեծ մասամբ Պուլսեցի էին։ Միարտնութեան հիմնարկութեան առաջին երկհարկւրամեակում Վենետիկը ունեցել է ընդամէնը 277 միւրան, որոնցից 138ը Պուլսեցի, այդ միւրաններից որ և է՝ զբաղան աշխատանք արտադրողների թիւը եղել է միայն 41, որոնցից 49 Պուլսեցի, 8 Տրագիդանցի, 5 Կարնեցի, 3 Էնկիւրիցի, մընացեալները այդ և այդ տեղերից։ Այդպէսով հարցը լուծվում էր ինքնին։ Պուլսի բարբառը պիտի յաղթանակէր առանց որ և է պատճառարանութեան, լոկ տեղի և հանգամանքների բերմամբ։ Աւելացնենք նաև այն որ դաւառների ժողովուրդն էլ շարունակ Պուլիս պանդխտելով, սովորում էր Պուլսի բարբառը։ Վերջապէս այն ուսումնասէր անձերն էլ, որոնք ուզում էին դրականութեամբ պարագել, իրենց գաւառներում մամուլ չունենալու պատճառաւ, բւտիպուում էին բնականաբար Պուլիս կամ Զմիւռնիա հաստատուել և հետեւաբար մայրենի բարբառը թողնելով՝ մշակել Պուլսականը։ Այսպէսով Պուլսի բարբառի գիրքը՝ իբր հիմք զբաղան լեզուի վճռում էր։

Երկրորդ սկզբունքն էր օտար բառերի տեղ դնել նրանց համապատասխան հայերէնը։ Պուլսի բարբառը թուրքերէն բառեր շատ ունի։ զբանց թիւը, ինչպէս տեսնք գլուխ ԽԶ, 4000 էր։ Գաւառների հայերը գրեթէ որանց կէսն ունէին։ Դրա համար էլ շարունակ ծաղրում էին Պուլսեցոց խօսակցութիւնը։ Բայց իրենց համար աւելի տարօրինակ և անախորժ էր լսել թուրքերէն բառերի այսքան յաճախակի գործածութիւնը՝ հայերէն գրուած քննքի մէջ։ Այս պահանջին բաւարարութիւն տալու համար զբողները ստիպուեցին թուրքերէն բառերի տեղ դնել հայերէն համապատասխան ձևերը։ Սրա համար էլ երեք միջոց կար առաջին՝ զիմել զբարբառին և այնտեղից փոխ առնել պատրաստ հայերէն ձևերը։ Երկրորդ՝ գաւառական բարբառների մէջ փնտռել իրենց ուզածը, երրորդ՝ հնարել նորանոր հայերէն բառեր։ Սրա համար հը-

բատարակուեցին զանազան ժամանակ մեծ ու փոքր բառարաններ ու բառացանկեր՝ զբարբառից աշխարհաբար (հետն առնելով նաև թուրքերէն ձևերը), և աշխարհաբարից զբարբար։ Վերջին անունն է կրում Միթիթար Արքայի (Հին Հայկաղեան) բառարանի Գ. հատորը, որ մեծագոյն մասամբ թուրքերէնից զբարբար բառարան է (Վենետիկ 1769)։ Բառակերտութիւնը լայն ծառայ բոնեց և յատկապէս եւրոպական գիտական բառերը արագութեամբ հայերէնի թարգմանուեցան։ Եւ որովհետև ինչպէս նորակերտ բառերը, նոյնպէս և զբարբար բառերը շատերին անհասկանալի էին, ուստի զբողները միշտ միասին գնում էին նաև սամիկ կամ թուրքերէն ձևը։ Օրինակ՝ վերի 6ը հատուածում ունինք

Արուարձաններով կամ վարըշներով պատնէշ կամ մէթէրիզ վրանի կամ չառըրի

Այս ձևով զբողները սամիկ թրքախօս ժողովրդին հայերէն էին սովորեցնում։

Երրորդ սկզբունքն էր խուսափել բարբառային ձևերից։ Այս կէտը կարօտ է առանձին քննութեան։ Քանի որ քերականութեան համար սկզբունքով հիմք էր ընդունուած Պուլսի բարբառը, սպասելի էր բնականաբար որ բառերի ձևերն էլ Պուլսի բարբառից առնուէին։ Ի՞նչն եղաւ պատճառ, որ մեր զբողները այսպէս չվարուեցին և նորից զբարբառին զիմեցին։ Պատասխանը գծուարանում եմ տալ։ Պատճառը թերևս զբողների հնասիրութիւնն էր, կամ այն գաւառների ազդեցութիւնը, որոնք Պուլսից տարբեր և զբարբառին աւելի հարազատ ձևեր ունէին, և կամ թէ միանգամ որ օտար բառերի համար ընդունուած էր զբարբառին զիմել, սովորութիւն եղաւ նաև միւս (աղաւաղեալ) բառերի համար էլ զիմել զբարբառին։ Կարելի է որ այս երեք պատճառներն էլ զործակից հանդիսացան։ արդիւնքն այն եղաւ, որ մինչդեռ առաջ զրում էին այս կամ այն գաւառական ձևով, յետոյ արդէն անցան բառերի զբարբար ձևերին։ Այս ողջամիտ սրշումը մի մեծ բարիք եղաւ մեզ համար. զանազան բարբառները ի մի ձուլուեցան և ժամանակակից հայը անցեալից չկտրուեց։ Որքան զժուտար պիտի լինէր հին հայերէնի ուսումը, եթէ,

քերականութիւնը փոխուելուց յետոյ, նաև բառարանը փոխուած լինէր:

Ո՞վ եղաւ արդեօք այս գեղեցիկ նորմալութեան հնարիչը և ե՞րբ: Կարծիք կար որ առաջին անգամ լեզուի մաքրութեան վրայ ուշադրութիւն դարձնողն եղաւ Զմիւռնիոյ անդրանիկ հայ թերթը՝ Շեքմարանը, որ Ամերիկեան բողոքական միսիոնարներէ հրատարակութիւնն էր, և որի առաջին համարը լոյս տեսաւ 1839 յունվար 1 ին: Այս կարծիքը սակայն սխալ է: Շեքմարանից շատ առաջ, 1687 թուին Վենետիկ տպուած Պարզաբանութիւնը արդէն շատ մաքուր լեզու ունէր, թուրքերէն բառերի թիւը խիստ քիչ էր նրա մէջ և հայերէն բառերն էլ բարբառային ձևով չէին, այլ զբաբար, ինչպէս ընթերցողը կարող է տեսնել վերը մէջ բերուած հատուածից: Շատ մաքուր է նոյնպէս 1791 թուին Վենետիկ տպուած Տեսութիւն համառոտ հին եւ նոր աշխարհագրութեան՝ Հ. Ղ. Ինճիճեանի, որից նոյնպէս մի հատուած գրինք վերը: Վերջապէս մաքուր և ամէն կերպով անթերի լեզու ունի Հ. Եղիա վրդ. Թովմածեանի (Պոլսեցի) Դպրութիւն նամակաց, տպ. Վենետիկ 1805, որ պարունակում է նամակագրութեան կանոններն ու օրինակները՝ զբաբար և աշխարհաբար, երկու լեզուով դէմ առ դէմ: Այսպէս են դարձեալ Յովակիմ բժ. Օղուլուխեանի՝ Նիւր Բժշկական, տպ. Վենետիկ 1806, Հ. Մինաս վրդ. Բժշկեանի Պատմութիւն Պոնտոսի, Վենետիկ 1819, Հ. Մեսրոպ վրդ. Աղաչբագեանի՝ Բնական Օրէնք կամ կրթութիւն առ ի լինել բարի եւ պարկեօտ քաղաքի, Վենետիկ 1819 և այլն:

Աւելորդ չենք համարում իբր նմոյշ գնել այստեղ շատ մաքուր, բոլորովին արգիական աշխարհաբարով մի տապանագիր՝ 1836 թուից, որ գտել և հրատարակել է Ֆնտգլեան, Մասիս 1892 սեպտ. 19:

ՏԱՊԱՆԱԳԻՐ
ՍԻՐԱԿԱՆԵԱՆ ՍԱՐԲԱՅ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՂԱՅԻ
ԳՈՒՍՏ ԻՍԿՈՒԼԻԻ

Անօրէն մահուան ուժն ինձի հասաւ
Անուշիկ արեւս ինձի օտս սեսաւ
Կաղաչեմ, Փրկիչս, այս խաւար բանցն
Անմահ կեանքով զիս ողջնցուր նորէն
Հարս եկայ եեզ ես Յիսուս իմ Յիսուս
Պզիկ է սարիս բայց մեծ է յոյսս:

Սկսելով 1840 թուից տարուց տարի շատանում են հայ թերթերը թէ Պոլսում և թէ Զմիւռնիայում, որոնք աշխատում են հետզհետէ մաքրել, պատրաստել ու տարածել նոր գրական լեզուն: Արանցից նըշանաւոր են՝ Զմիւռնիոյ Արաւոյս Արաւսեանը (1840-1886), եւրոպական անուան արժանի մի թերթ, որ առատ թրջթակցութիւններ ունէր ամէն մի հայ գաղութից, սկսած Զինաստանից մինչև Աւստրիա, և այս բոլոր երկիրներէ մէջ ցրուած հայոց համար իբր մի կապ էր ծառայում, — Վենետիկի Բազմավկայը (1843-ից մինչև այժմ), — Պոլսի հայոց պատրիարքարանի պաշտօնաթերթ Սուրհանդակը (1846), որ յետոյ կոչուեց Հայաստան և վերջն էլ Մասիս: Այս վերջինը (Մասիս) հայ մտքի մեծագոյն աշխատանոցը դարձաւ. այնտեղ ստեղծուեցան, առաջարկուեցան, քննադատուեցան, կազմուեցան և քաղաքացիութեան իրաւունք ստացան բազմաթիւ հայերէն նոր բառեր, գիտական, գրական, ուսումնական ու հասարակական կեանքի վերաբերեալ բառեր, պաշտօնական լեզուի դարձուածներ, և եթէ այսօր հայերս ունինք քիչ թէ շատ մշակուած լեզու, կանոնաւոր գիտական ու պաշտօնական լեզու, այդ պարտական ենք զխաւարապէս Մասիսին:

Գրական այս շարժումը որ նկարագրեցինք, մեծաւ մասամբ կատարուած էր մեր Արեւմտահայ հատուածի կողմից, բայց նրան անմիջական բաժնեկից էր նաև Արեւելահայ հատուածը: Այն ժամանակ մեր երկու հատուածների միջև չկար այնպիսի անջատում, ինչպիսին յառաջացաւ շատ աւելի ուշ Գալիցիանեան ուժիմի ժամանակ: Ռուսահայ գրական գործիչները կարող էին ընդունել Արեւմտահայ գրական լեզուն և փոքր աշխատանքով յարմարեցնել Արեւելահայ ժողովուրդի պահանջներին: Բայց այդպէս չեղաւ: Նրանք ստեղծեցին մի ուրիշ գրական լեզու, որի հեղինակն է համարուում Մոսկուայի Լազարեան ձեմարանի ուսանողութիւնը և որի հիմքը Երեւանի բարբառն է: Այստեղ էլ աշխատանքը տարուեց ճիշդ այն ծրագրով, ինչպէս Արեւմտահայ գրականի համար. — Գերականութիւնը վերցուեց բարբառից, օտար բառերը վտարուեցին և բառերը վերածուեցին իրենց գրարար ձևին:

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԴՐԱՒՈՍ

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԴՐԱՒՈՍ ՄԸ

1. Նորագոյն մեկնաբանութիւններ. 2. Դրախտին իսկական վայրը. 3. Եկեղեցական հին մասեմագիրներու դասաւորումը. 4. Եղեմը՝ Հնդկաստանի մեջ. 5. Եղեմը՝ Բաբելոնի մեջ. 6. Եղեմը՝ Հայաստանի մեջ. 7. Եղեմը՝ Պաղեստինի մեջ:

1. — Ռաս Շամրայի պեղումներէն երեւան հանուած յիսուհի չափ լման կամ հատուկուտոր սեպագիր կաւէ տախտակները հեռագհետէ հնագիտութեան սեղանին վրայ կը դնեն նոր ի նորոյ յայտնութիւններ: Ճշգրեւ համար Ս. Գրոց մէջ յիշատակուած տեղերն ու անունները: Այսպէս Ծննդոց գիրքի մէջ (Ա. և Բ.) այնքան ընդարձակօրէն նկարագրուած նախամարդոց երկրային դրախտի իսկական վայրը այսօր կրկին քննութեան առարկայ է: Բաւական երկար ատենէ ի վեր, և յատկապէս Փր. Տելլիզէն ասողին, գրեթէ ո՛չ ոք հրապարակ իջած էր վերստին արծարծելու համար Եղեմի իսկական տեղը որոշելու հարցը: Դասական հին մատենագիրներէն մինչև Ս. Գրոց նորագոյն մեկնաբանները, բոլորն ալ, ինչպէս որ համառօտ ակնարկով մը պիտի տեսնենք, մնացին իրենց կարծիքներուն վրայ, իրենց-

Արևելահայ լեզուի առաջին նմոշները տեսանք արդէն վերևում: Մաքուր գրական լեզուի առաջին օրինակն է Կղէօպատրայ Սարաֆեանի Բանալի Գիտութեան (Պետերբ. 1788): Աւելի յետոյ են Համառօս Բնուարի Բիսուպեանի հաւատոց (Մոսկուայ 1831), Աւեսարանի Գեմարտեանի եւ գօրութեան համար (Շուշի 1833), և վերջապէս Սաղմոսի քարգմանութիւնը (Զմիւռնիա, 1843), բոլորն էլ մաքուր գրական լեզուով:

Արևելահայ առաջին թերթն եղաւ Թիֆլիզի Արարատը՝ 1850 թ. (չհաշուելով Կովկաս պաշտօնաթերթը՝ 1846 թ. որի լեզուն գրաբար էր):

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

մէ ոմանք Քաղղէաստանի, ոմանք Հնդկաստանի և պէտք է խոստովանիլ մեծ մասն ալ Հայաստանի մեջ ուղեւոր տեսնել քաղղէաստանի գրախոսը: Վերջերս, սակայն, Ռաս Շամրայի (հինն Ուկարիդ) պեղումները առիթ տուին Հոլանտացի Th. C. Vriezenի և վերջինէն ներշնչուած Joh. de Grootի՝ որ աւելորդ անգամ մըն ալ հրապարակ գրուի այս շատ փափուկ ու նոյնքան ալ կնճոտ հարցը (thèse) ու լսուին նորագոյն յայտնութիւնները երկու ծանօթ գիտուններու, առանց սակայն պահ մը իսկ տարուելու թէ կրնային անոնց կարծիքները վերջնական ըլլալ, ինչպէս որ իրենք իսկ կը խոստովանին, սպասելով որ նոր պեղումներ լոյսին հանեն նոր յայտնութիւններ: Ճիշտ է որ Ծննդոց գիրքի այն լամբագրութիւնը՝ զոր մեր ձեռքին տակ ունինք, իր Բ. և Գ. գլուխներուն մէջ պատկերացուցած դրախտը, ներկայացուած է տեղական գոյնով մը և աւելի ճշգորէն՝ պաղեստինեան գոյնով մը: Կարելի է հոն նշմարել ուրիշ գոյներ ալ: Schrader և իրմէ յետոյ շատ ուրիշներ, այնպէս կը կարծեն որ Ս. Գրոց այժմու բնագրէն առաջ (խօսքը Ծննդոց գիրքի մասին է անշուշտ) գոյութիւն ունէր բարեւոնական պատմուածք մը, հոգ չէ թէ նոյն այդ բարեւոնական կամ քաղղէական գրոյցին բոլոր գիծերն ու մոթիվները տարտամ ըլլան ու չփոթ: Ըստ W. Staerkի՝ աւելի ճիշտ պիտի ըլլար խօսիլ իրանական մոթիվներու մասին: Vriezen ու de Groot այն քեզ կը պաշտպանեն, ինչպէս որ տեսանք, որ դրախտի պատմուածքը, այն ձևով որ կը ներկայանայ մեզի, պաղեստինեան պատմուածք մըն է, որմէ առաջ սակայն գոյութիւն պէտք է ունեցած ըլլայ պաղեստինեան շատ աւելի հին ուրիշ պատմուածք մը: Ահա թէ de Groot ի՛նչպէս կը մեկնաբանէ պաղեստինեան պատմուածքը, տալով հետեւեալ գլխաւոր հիմերը, որոնք կարօտ պիտի մնան միշտ նորագոյն փաստարկութեանց: Բայց նախ քան այս, կ'արժէր իրմէ առաջ յայտնուած բոլոր մեկնաբանութիւնները ամփոփել, աւելի դիւրաւ մօտենալու համար յայտնուած տեսութեանց:

2. — Դրախտին իսկական վայրը. — Ծննդոց գիրքը (Բ. 8) հետեւեալ կերպով կը նկարագրէ Եղեմի կամ երկրաւոր Դրախտին վայրը. «Աստուած դրախտը տնկեց Եղեմի

մէջ, արեւելեան կողմը և հոն գրաւ իր ստեղծած առաջին մարդը: Ու գետ մը կը բխէր Եդեմէն, զսողելու համար դրախտը և անկէ կը բաժնուէր չորս թեւերու: Առաջինն անուան էր Փիստն, ա՛ն էր որ կը պատէր Եւրլատի երկիրը, հո՛ն՝ ուր ոսկին էր, ու այս երկրին ոսկին ազնիւ տեսակէ էր: հոն կը գտնուէր նաև քարխուենկը (bdellum) և եղնզաքարը (onyx): Երկրորդ գետին աւանունն էր Գեհն, ա՛յն որ կը պատէր ամբողջ Բուշի երկիրը: Երրորդ թեւին անունն էր Հիսսեֆէլ կամ Տիգրիս, այն որ Ասորեստանի արեւելքն կ'ընթանայ: Իսկ չորրորդ գետն էր Եփրատ: Ինչպէս որ կը տեսնուի, Ս. Գրոց Դրախտին նկարագրութիւնը, իր բոլոր պարագաներովը, որոշապէս զբուսած է հոն և գայն պէտք է աւանել իր բառական իմաստովը, ինչպէս որ ցարդ եղած է ընդհանրապէս:

Հիներու մէջ Դրախտի սուրբ գրական մեկնաբաններուն առաջինը Որոզինէս եղած է. ըստ իր մեկնաբանութեան Աստուածաշունչ գրոց սեէ մէկ նկարագրականը պէտք է երբեք իր տառական իմաստովը ըմբռնել ու աւելի ճիշտ պիտի ըլլար այլաբանօրէն մեկնել. ու մասնաւորաբար երկրային Դրախտի մասին խօսելով կ'ըսէ. «Մարդ բաւական խենթ ըլլալու է խորհելու համար որ Աստուած հողագործի մը նման Եդեմի դրախտը արեւելքի մէջ անկեց և հոն գրաւ կեանքի ծառը, տեսանելի՛ աչքերուն և ռոշափելի զգայարանքներուն համար, այնպէս որ ո՛վ որ իր մարմնաւոր օկոսներովը ճաշակէր անոր պտուղներէն, պիտի սպրէր»: Որոզինէս իր այս արտայայտութեանց մէջ կը հետեւէր Փիլոն Աղեքսանդրացւոյ այլաբանական բացատրութեանց և իրեն հետեողներուն թիւն ալ պակաս եղած էէ, ո՛չ անցեալին մէջ և ո՛չ ալ ներկայիս: Բայց պէտք է մտնուի որ երկրային Դրախտին նկարագրութիւնը այնքան բացայայտ է որ կարելի էր այլ կերպով մեկնել, առանց բնագրին դաւաճանելու:

Նորերու մէջ այս կնճոտ հարցով ըզբազողներու շարքին առաջին զիծի վրայ կը տեսնենք Փր. Տելլը, որ Wo lag das Paradies? գիրքին մէջ կ'ըսէ. «Ս. Դրական նկարագրութիւնը առասպելի ո՛չ մէկ նշան ցոյց չի տար, աւելորդ ոչ մի բան չկայ հոն և ոչ ալ կէս մութի մէջ ծածկուած ի-

րողութիւն: Կարելի է նոյնպէս տարակուսիլ իմաստին վրայ և ընթերցողը պարտաւոր է յատակութեան պակասէն Ս. Գիրքը ուզածին պէս կարգալու կամ մեկնելու: Պատճապրին համար Եդեմի դրախտը իր չորս գետերով՝ Փիստն, Գեհն, Տիգրիս ու Եփրատ, յայտնի իրողութիւն մըն է և շատ ծանօթ: Իրեն համար սեէ միջին նշանակութեան հետեւ են Փիստն ու Գեհն անունները»: Տելլը ոչ միայն ծանօթ է անոնց ճշգրիտ նշանակութեան, ա՛յնքան ճշգրիտ՝ որքան Տիգրիսն ու Եփրատը, այլ նոյնիսկ նպատակն է իր ընթերցողները լուսարոնել այս խնդրոյ շուրջ ու ահա թէ ինչո՞ւ բացատրութիւններ կու տայ, որպէս զի անոնցմով ճշդօրէ Դրախտին տեղը: Այսպէս ըլլալով հանգիստ, պէտք է ընդունինք որ Դրախտին տեղը ճշգրիտ բաւական ծանր դժուարութիւններ կը ներկայացնէ: Հսկանակ անոր որ դարերէ ի վեր Զանաքստ են լուծելու այս փափուկ խնդիրը և որուն շուրջ անթիւ ուսումնասիրութիւններ ալ հրատարակուած են, կարելի է եղած դեռ ստուգապէս սահմանելու Եդեմի իսկական տեղը: Դիտուններէն շատեր Եդեմը գրած են Միջագետքի, Հայաստանի, Արաբիոյ, Հնդկաստանի, Չինաստանի, Սէյլան կղզիին, Թանարեան կղզիներուն, Բերուի, Ամերիկային զանազան մասերուն և նոյն իսկ Եւրոպայի մէջ: Եղած է նոյն իսկ գերման աստղաբաշխ մը՝ Köhl, որ դրախտը ուզած է տեսնել . . . Հիւսիսային բեւեռի մէջ, ինչպէս որ իրմէ առաջ անդկիացի W. F. Warren պնդած էր: Աւելորդ է յիշել շատ մը կարծիքներ ևս, որոնց մեծագոյն մասին վրայ կանգ առնել անիմաստ պիտի ըլլար: Բաւական է միայն արձանագրել այն քանի մը կարեւոր կարծիքները՝ որոնք ընդունուած են քննադատներու ամենամեծ խումբի մը կողմէ և որոնք պիտի կրնային իբր ուղեցոյց ծառայել այս կնճոտ խնդրոյն մէջ: Նախ և առաջ պէտք է ընդունիլ որ Դրախտը, ըստ ս. գրական բնագրներուն, կը գտնուէր Պաղեստինի արեւելեան կողմը, miq-qédém: Վուլկազան «սկիզբ» բառով թարգմանած է miq-qédémը: Բայց նկատել պէտք է որ Յճնկոց այս բացատրութիւնը միշտ տեղի յատուկ եղած է և ո՛չ թէ ժամանակի, որով հոս իր աշխարհագրական իմաստովը պէտք է աւանել: Այս

մասին գրեթէ բոլոր գիտունները համաձայն են, մէկ տարբերութեամբ միայն որ անոնց մէկ փոքր մասը, անշուշտ շատ քիչ հաւանականութեամբ, miq-qédém բացատրութիւնով հող կ'ուզէ խմանալ Բարելաստանի արեւելքը և ո՛չ թէ Ս. Երկրի, Երկրորդ՝ որ այս քեզը պաշտպանողները առ հասարակ կ'ընդունին որ Տիգրիսն ու Եփրատ այս անունով ծանօթ երկու մեծ գետերն են Միջագետքի, բայց երբ հարկ ըլլայ ճշգեղ փաստի և Գեհնի խկապէս ո՞ր գետերը ըլլալը, հոն է որ շէն կրնար համաձայնել: Նոյն անհամաձայնութիւնը նաև՝ երբ հարկ կ'ըլլայ ճշգեղու Եւրատի ու Քուշի երկիրը: Արդ, այս նոյնացումէն է որ կախումն ունի խնդրոյն լուծումը ու դա՛րձեալ այս նիւթին շուրջ տրուած պատասխաններու պէտպիսութիւնն է որ գլխաւորաբար խորհուած կերպերը իրարմէ կը զանազանէ: Յայտնուած բոլոր կարծիքներն ու առաջադրուած բոլոր ձևերը կարելի է բաժնել չորս խումբերու. այսպէս՝ կարծիքը եկեղեցական հին մատենագիրներու, որոնք Փիսոնի և Գեհնի մէջ կը տեսնէին Գանգէսն ու Նեղոսը: Այն նորերը՝ որոնք Եդեմը կը գնեն Հնդկաստանի մէջ, Բամիրի լեռնապաշտին վրայ: Անոնք՝ որ Եդեմը Հայաստանի մէջ կը տեսնեն, և վերջապէս այն խումբը՝ որ կը պնդէ Դրախտին Բարելոնի մէջ ըլլալուն: Նորագոյն գիտունները սակայն բոլոր այս տեսութիւնները կը ժխտեն և այնպէս կ'ըմբռնեն որ Եդեմ մի միայն Պաղեստինի մէջ էր, ինչպէս որ պիտի տեսնենք իր կարգին:

3. — Եկեղեցական հին մատենագիրներու դասաւորումը. — Եկեղեցական հնագոյն գրողներու և Ս. Դիրքի մեկնարաններուն ունեցած աշխարհագրական ծանօթիւնները չափազանց անկատար էին ու անբաւարար, որով չէին կրցած ընդհանրապէս ճշգեղ Դրախտին իսկական տեղը: Իրենց մեկնարանութիւնները ցոյց կու տան որ անոնք ուզած են սրտապէս ճշգեղ մննդոց մէջ յիշուած չորս գետերը, սակայն յայտնի է որ դժուարութիւն սենեցած են որոշելու Փիսոնն ու Գեհնը: Անոնք բնութաբան չեն Տիգրիսն ու Եփրատը սահմանելու մէջ, որովհետեւ շատ լաւ կը ճանչնային ս. գրական այդ երկու մեծ գետերը: Միւս երկու գետերն ալ ճշգեղու առթիւ զիրենք սխալ ճամբու աղաջնորդած են հրեայ

մեկնարաններն ու առաւելապէս Յովսեփոս պատմիչ: Յովսեփոս, ինչպէս նաև իր ժամանակի կրօնակիրները, այն կարծիքը ունէին որ Եւրատի երկիրը Հնդկաստանն էր և Փիսոնն ալ՝ Գանգէսը. Քուշանաց երկիրը Եթովպիան էր, իսկ Գեհնն ալ՝ Նեղոսը: Նշանաւոր պատմագիրը ո՛չ մէկ դժուարութիւն կը տեսնէր Գանգէսն ու Նեղոսը միևնոյն երկրէն բխած ցոյց տալու, ինչպէս նաև միևնոյն Դրախտէն բխած ցոյց տալու Եփրատն ու Տիգրիսը, վասն զի Դրախտի «գետին» իսկական աղբ (source) կը շփոթէր Ուրարտուին հետ, որ ըստ հիներու կարծիքին կը շրջապատէր երկիրը և որ իր կարգին ծնունդ կու տար միւս բոլոր գետերուն: Ահա այս կարծիքներն էին զորս եկեղեցական հին մատենագիրներ նոյնութեամբ ընդունեցան, այնպէս հետեցունելով որ Փիսոնը Գանգէսն էր: Առ հասարակ այս էր կարծիքը Եւսեբիոս Կեսարացիի, Ս. Եպիփանոսի, Ս. Օգոստինոսի, Ս. Ամբրոսիոսի, Ս. Յերոնիմոսի, Ս. Եփրեմի՝ որ Փիսոնի մէջ թէ՛ Գանգէսը կը տեսնէր և թէ . . . Դրախտը: Գալով Գեհնի, յենելով Եօթանանայից մէջ երեցած հատուածի մը, շփոթուած է Նեղոսի հետ և երբայական Եփրոսը, որ Նեղոսի համազօր է, Երեմիայի մէջ թարգմանուած է . . . Յոյն բնագրի վրայ կատարուած գրաբար թարգմանութեան մէջ կը կարգանք:

«Եւ արդ զի՞նչ կայ քո և ճանապարհին Եգիպտացոց՝ ըմպել քեզ զջուր Գեհնի, և զի՞նչ կայ քո և ճանապարհին Ասորեստանեայց՝ ըմպել զջուրն գետոց» (հիմայ՝ Տիգրիսի և Եփրատի): Նոյն հատուածին աշխարհաբար թարգմանութեան մէջ սակայն, որ ընդհանրապէս երբայական բնագրին վրայ կատարուած է, և հետեւած անգղերէն թարգմանութիւններու, կը կարգանք՝ «Եւ հիմայ գուն Եգիպտացոց ճամբան ի՞նչ բան ունիս, որ Սիւվի ջուրը խմելու կ'երթան, կամ Ասորեստանի ճամբան ի՞նչ բան ունիս, որ Գեհնի ջուրը խմելու կ'երթան»: Դիտելի է որ նորագոյն բոլոր թարգմանութեանց մէջ գետը եզակի գրուած է: Անգղերէն գրեթէ բոլոր թարգմանութեանց մէջ Երեմիայի սոյն հատուածը Եփրոսը ունի, իսկ Ֆրանսերէն թարգմանութեանց մէջ՝ Նեղոս: Ինչ որ ալ ըլլայ յունական թարգմա-

նութիւնը, Երեմիայի երբայական բնագիրը չի հաստատեր Եփհորի նոյնութիւնը Կեհնի հետ: Բայց այս մեկնութիւնը ընդունուած ըլլալով Յովսեփոսէն, նոյնութեամբ ընդունուած ալ է հեղեցեցական մատենագիրներու գրեթէ ամբողջէն, ինչպէս՝ Եւսեբիոսէն, Ս. Յերոնիմոսէն, Ս. Օգոստինոսէն, ևն.: Այս շփոթութեան պատճառը դիւրաւ կը բացատրուի. Ծննդոց (Բ. 13) յունարէն թարգմանութիւնն ու լատին թարգմանութիւնը կը յայտնեն «որ Կեհնո պատէ գամենայն երկիրն Եթովպացոց», և մոռնալով որ այդ հատուածին մէջ յիշուած երբայական Քուչանաց երկիրը Եթովպիան չէ երբք, հետեցուցած են ուրեմն որ Կեհնը միայն նեղոսը կրնար եղած ըլլալ, սխալներ՝ որոնք պէտք չունին այլևս հերքուելու:

4. — Եղեմը՝ Հնդկաստանի մէջ. — Տեսանք որ երկրային Դրախտը Հնդկաստանի մէջ գնողներ կան, Բամիրի լեռնադաշտին վրայ: Որքան որ ալ արտառոց թուի հիներու կողմէ Փիսոնին՝ Կանգէսի հետ շփոթութիւնը, այսուհանդերձ սա՛ ալ իրական է որ ժամանակակից բազմաթիւ գիտուններ վերանորոգելով հիներու կարծիքը, ուզած են Հնդկաստանի մէջ գնել մարդկային սեռի սկզբը: Անոնք հնդկական վիճաներու մէջ կարծած են գտնել իսկական մեկնութիւնը Ծննդոց պատմութեան և այնպէս ընդունած են՝ որ Եղեմը կը գտնուէր Բաբելոնի արեւելքը: Այս տեսակէտին ամենաշեղբմ պաշտպաններէն մէկն է J. B. F. Obry, որ այս նիւթին վրայ գրած է կարևոր գիրք մը*), ուր հետեւեալ ձևով կը պաշտպանէ իր թեզը. «Ծննդոց սրբազան հեղինակը Եղեմը կը գնէ բարձր երկրի մը մէջ, ընդ մէջ Եփրատի և Քուչանաց երկրին, որոնք գինքը շրջապատող գետերով ոռոգուած են: Ապա Եղեմի մէջտեղը կը տնկէ Դրախտը, Կան, միևնոյն անունով և ոռոգուած միակ գետէ մը: Ի վերջոյ հորիզոնին չորս ծայրերը կը տանի միևնոյն ակնադրիւրը ունեցող չորս գետերը: Այս տեսակէտը ենթադրել կու տայ որ Եղեմի երկիրը նոյնն է Airyanem - Vaêdjoին հետ, այն ձևով որ կ'ըմբռնէին Մեդացիք և Պարսիկները, որով բոլորն ալ բղխած կ'ըլ-

լային Օքիւսի, Քամեհի և Դարեմի ակերէն, ուր Պագդրիացիք և Մեդացիք կը բնակէին, երկրի մը որ կ'երկարաձգուէր դէպի հարաւ արեւմուտք: «Փափկութեան դրախտը» Սիրի-Քասուլի լիճին գաւառն է, Բամիրի փոքրիկ լեռնադաշտին կեդրոնը, որուն միևնոյն ակնադրիւրէն կը բղխին Ծննդոց մէջ յիշուած չորս գետերէն երեքը: Ասկէ գատ կ'ենթագրեմ որ չորրորդ գետն ալ միևնոյն ակէն կը բղխէր, ընդերկրեայ ջրանցքներու միջոցաւ: Obry Փիսոնը չի նոյնացնէր Կանգէսի հետ, բայց Ewald կը նոյնացնէ: Ռընանի պէս յայտնի գիտուններ ալ Փիսոնն ու Կեհնը կը նոյնացնեն Ինդոսի և Օքիւսի հետ. ասոնց կը հետեի նաև Լընորման: Բոլոր այս նոյնացումները սակայն անհաշտ են Ծննդոց պատմարանութեան հետ, ու կարելի չէ երբք ընդունիլ որ ըստ ճանապարհորդներու ականատես վկայութեանց, իր կլիմային պատճառաւ աշխարհի ամենէն անբնակելի մէկ շրջանը համարուած Բամիրեան լեռնադաշտին վրայ եղած ըլլայ այնքան վայելչօրէն նկարագրուած «Փափկութեան Դրախտը», ու նաև մարդկային սեռի առաջին որրանը:

Հնդկաստանի բանահիւստական և կրօնական պատմութեան մէջ ամենէն շատ երգուած լեռը Մեբու լեռն է, որ կը կազմէ երկրին կեդրոնական բարձրագոյն գագաթը կամ սարը, հետեւելով անշուշտ աւանդութեանն ու պատմութեանը ա՛յն Հնդիկներուն՝ որոնք զայն պաշտելու համար անոր վրան կամ շուրջը կը բնակէին: Հնդկական վիճաներու յետնագոյն աշխարհագիրները Մեբու լեռը Հիմալայա լեռներու շարքէն գուրս կը թողուն ու զայն կը նոյնացնեն կանկ-միսրի լեռնաշղթայի մէկ գագաթին հետ, որ չի տեսնուիր հնդկական դաշտավայրէն: Որքան որ Մեբուն բազապատմաբ իր մերձակայ բազմաթիւ գագաթներուն շա՛տ ցած է, այսուհանդերձ ան նկատուած էր միաժամանակ երկրիս բարձրագոյն գագաթը և նաև կեդրոնական վայրը տեսանելի երկինքին, ուրկէ անտարակոյս առած ալ է իր Kaïlas անունը, որ կը պատկանի միևնոյն արմատին, յունարէն γαῖλον և լատիներէն caelum: Վերին և ստորին երկու աշխարհները իրարու կը խառնուէին այս նախնական իգային (pistil) մէջ և իրենց միութեամբը ծնունդ կու տային հրաշալի

*) Du berceau de l'espece humaine selon les Indiens, les Perses et les Hebreux. Paris, 1888, էջ 100.

արտագրութեան մը, այսինքն Հնդկաստանի մէջ «ճամպու» անուանով ծանօթ — կենաց Մառին: Լերան հանդիպակաց չորս գօտիներուն վրայ՝ ուր Հնդկիկները կ'երեւակայէին Դրախտի մը գոյութիւնը, որովհետեւ ան անմատչելի էր իրենց, կ'աճէին նոյնպէս հրաշալի ծառեր, «Տինչանքի ծառեր», որոնք լիովին կը համապատասխանէին Հայոց, Քաղզէացւոց և Երրայեցւոց Դրախտին մէջ տնկուած «բարւոյ և չարի Մառ»ին: Երկնային ակնադրիւր մը, կանկան, երկինքէն ու յատկապէս «Թօթը իմաստուն»ներու բնակավայրէն իջնելով, եօթն անգամ կը պատէր Մերու լերան շուրջը, լեցնելու համար չորս լիճեր, ուրկէ կը բղխին երկնային չորս գետերը, ինչպէս որ տեսանք: Այս վերջին մանրամասնութեամբ հնդկական առասպելը կը ներկայանայ իբր կրկնութիւնը քաղզէական աւանդալէպին, ու երկուքին մէջ ալ արեւելեան երեւակայութիւնը ճիշտօրէն զարգարած է Դրախտի պատկերը: Մերուի չորս լեռնակողերէն ժայթքող ակնադրիւրները չորս այլազան նիւթերով կը պատկերացուին. մէկը ոսկին է, միւսը՝ արծաթը, երրորդը՝ սուտակը, ու չորրորդը՝ կապուտակը: Ինչո՞վ կարելի է բացատրել զուտ երեւակայական եղող այս տեսութիւնը եթէ ոչ օգերեւութաբանական այն երեւոյթով՝ որ լոյսը բարձրագիւր ձիւներու, սառոյցներու և լուսաճաճանչ ժայռերու վրայ ցոլանալով, ըլլա՛յ արշալոյսին, ըլլա՛յ կէսօրուան արեւին և կամ վերջալոյսին, հրաշալի գոյներու և երփնաւորումներու խաղեր կ'ընէ, ա՛լ աւելի գեղեցիկ՝ քան աչնիւ քարերու և մետաղներու ցոլքը: Քայլաւոր կողերուն վրայ հնդիկ ուխտաւորներ ցոյց կու տան դեռ այն քարանձաւները՝ ուրկէ գուրս կը կայտնէին առասպելական չորս կենդանիները, առիւծը, ձիւն, կոփն ու փիղը. այս վերջնոյն տեղ ուրիշներ սիրամարգը կը դնեն: Այս չորս կենդանիները կը կազմեն խորհրդանիշերը չորս գետերուն, Քանգէս, Սաղէճ, Ինդոս և Ցանկաօ, որոնք կ'ուղղուին երկրիս չորս կողմերը: Առաջին անգամ ըլլալով երբ Ռամայանա Մերու նուիրական լերան անունը յիշեց, անկէ ի վեր վերի առասպելը շատ մը փոփոխութիւններէ անցաւ: Երբ հնդիկ ընկերայնութիւնը ամենասեղմ կապանքներու տակ անբռնաբարելի դասակարգերու վերածուեցաւ, վերը

նկարագրուած լերան չորս երեսներուն, չորս կենդանիներուն և այլազան գոյներով և ջուրերով չորս ակնադրիւրներուն մէջ ուղուեցաւ տեսնել հնդիկ հին տիպարներու չորս դասակարգերը, ըստ առաջնութեան կարգի*):

Երկրային դրախտի ու անկէ բղխող չորս գետերու աւանդալէպը գուտ քաղզէական ներածում մը չէ, ու Զրհեղեղի աւանդութիւնը Պրահմաններու երկրին մէջ ալ գոյութիւն ունի, այնպիսի ձևի մը տակ սակայն՝ որ յատուկ չէ «Թօթը գետեր»ու աշխարհին, այլ աւելի Միջագետքեան ծագում ունի: Որքան որ Քանգէսի ցամաքակղզիին գետերը գերծ չեն Զրհեղեղային յորդումներէ, բայց և այնպէս ակներև է որ տեղական աւանդութեանց վրայ պատուաստուած է արտաքին պատմութիւնը: Հնդկական Մանուն մէկ ուրիշ փոփոխակն է Ս. Գրոց նոյն և կամ քաղզէական Շազի-Ատրային: Մանուն ալ վերահաս աղէտին անջև նմանապէս կը շինէ իր տապանը, ուր հոգ կը տանի ամբարելու ամէն տեսակի սերմը, բուսային թէ կենդանական: Ապա տեսնելով որ ջուրերը կը սկսին բարձրանալ, կանգ կ'առնէ երկրի բարձրագոյն լերան գագաթին, որ Հիմալայայի կասարն է: Մինչդեռ Եփրատի ու Տիգրիսի եզերքները բնակողներուն համար Տապանին իջած վայրը կորդուաց լեռներուն բարձրագոյն պարեխն է ու Ս. Գրոց ու նաև Հայոցս համար ալ՝ լուսագագաթ Արարատը: Հնդկական պատմութեան այս շրջանին է, Պուտտայական կրօնի տարածման մեծագոյն շրջանը՝ որ ամենէն աւելի ծագում առաւ ու զարգացաւ Եդեմին Հնդկաստանի մէջ ցոյց տալ ուզելու ազգային բաղձանքը, Ուտյենայի թագաւորութիւնը կամ մեր հասկացողութեամբ Եդեմական դրախտը նըշանակուեցաւ Ինդոս և Սիվազ գետերուն միջև գտնուող հիւսիս-արևմտեան շրջանը**):

Հալիպ ԱՐՏԱԽԱԶԳԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
(Շարունակէլ)

*) F. Lenormant: Les Origines de l'Histoire. Բ. հատոր, էջ 20:
**) Elisée Reclus: l'Homme et la Terre, 1905, Paris, Գ. հատոր, էջ 132 և 202:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԵՐԵՄԻԱ ՉԷԼԷՊԻ

Երեմիայի գեմքին սա օրուագիծը կ'ամբողջանայ երբ վերլուծման խնայ անոր քերթողական վաստակը:

Ամենէն առաջ, իբր թելագրանք ու քերթողական շնորհներու ցոլարան, կը խոստովանիմ թէ Վիպասանութիւն յետո Զեյպիւն կուգայ առաջին գիծի: Մնաւոր նախանիւրիս (*) իբր արժէք ներկայացուցած ծանրութեան, ու այն ողորմելի ոտանաւորներուն փատօլն առջև սրանք անկէ քաղուած են, մարդ կը զարմանայ սա մարդուն տարօրինակ անհաւասարութեան վրայ:

Չեռագրիներէն կարգացի Ալեքսանդրի պատմութիւնը (**), Պատմութիւն Հրէի աղջկանը, Յալազս Դերաբխասիքը, Հեակիզու-

(*) Հաւանական շատախոսութիւնը որ կ'ենթադրուի Հ. Ալիկեանի սնկե տուած $\frac{1}{2}-\frac{1}{2}$ -ի (կրէ-Չէլէ-է, էջ 96-102) ու ապագրակի մեղքը որ ամեն դարուն ալ կոչը կը մնայ, չեն կրնար խորսակել $\frac{1}{2}-\frac{1}{2}$ ողորմական հարսութիւնը: Ե. հաստածի մեջ, ըստ այդ $\frac{1}{2}-\frac{1}{2}$ -ի, Երեմիա կ'ողբայ $\frac{1}{2}-\frac{1}{2}$ յարուստի: Դժուար չի երեւակայել $\frac{1}{2}-\frac{1}{2}$ յարուստը, $\frac{1}{2}-\frac{1}{2}$ յարուստը, որով քուրթուրն չեղ շնորհներ կապեցին, յարանակի ինչպէս պարսութեան դարձուն: Կը խորհիմ քի սիւրբ- $\frac{1}{2}-\frac{1}{2}$ Հրէ- $\frac{1}{2}-\frac{1}{2}$ Սար- $\frac{1}{2}-\frac{1}{2}$ լոն ստանի մեջ կը մնայ այդ կտորածի ու հրդեհակի աղջի: Ի՞նչ է համար Երեմիան այդ պատահակ: Հ. Ալիկեան չի տար նշան մը, ինք որ ձեռագիրը ուսումնասիրած է խնամակ:

(**) Ըսի անոր ընդգրկան ճշտակեցով ներկայացուցած շնեկականութիւնը: Ասիկա անկախաբար Երեմիայի $\frac{1}{2}-\frac{1}{2}$ (իբրև թանաստեղծութեան գործիք) անկի է քան իր օրերուն ընտանի $\frac{1}{2}-\frac{1}{2}$ (դիւանակակ ընդ), որուն մասնոր աղեղութիւնը զգայի է այնքան իր արձակի վրայ: Չախարհում տղերուն մեջ Երեմիա գտած է միջին նկարագիր մը, ընդ ուի՛ որքան զգայնութեան: Այդ կտորներ իբրև խորք կը մեկնին որքան անկանոս իրականութեան, իբրև արտայայտութիւն կը կենան ժո-

րիւն Կոստանդնուպոլսոյն, Վասն էմիէնի ստեղծութեան Տիմոյի ումեմն որ սիրեաց զաղջիկ մի հրէի Մրգասա անունը: *Մէնիք* Թրակ գրութեան յաւելումը, Պատմութիւն Ասամպոլսոյն: Դուրսը քիչ բան կը մնայ ուրեմն Երեմիայի քերթողական գործէն:

դարեակուն պարզութեան ուժով կնիքի սակ: Ասիկ՝ $\frac{1}{2}-\frac{1}{2}$ -- $\frac{1}{2}-\frac{1}{2}$ յարող ու հանկի խառնուրդ մը: Թուրք թանաստեղծութեան դրամատիքները կը անկան սնկի որ աստիճանաբար են անոր անկան շատախոսութիւնները պատմա-կրօնա-քաղաքական քննակերտ վրայ, ուր $\frac{1}{2}-\frac{1}{2}$, $\frac{1}{2}-\frac{1}{2}$, $\frac{1}{2}-\frac{1}{2}$, $\frac{1}{2}-\frac{1}{2}$ կը խոչնակ սերտողական զգայնութիւնը: Արար է սրտակի քառասուններուն քոչոր շինծու մաղիկները: Ար խորհացող ուր սարսուրտ, բռնի ուզում փառարանութիւն: Բայց մոյն այդ թանաստեղծութիւնը, իր ժողովրդական արտայայտութեան մեջ արձանիքներ կը պարզ խոր ու անկեղծ զգայնութեան, անխոստիկի քարմութեան եւ ընդարձակ յուզումի, — սարեր որով այնքան քարձ արժէք մը կը անրեկ մեր ալ ժողովրդական յոյսն ու մեղքն: Չեմ քանար յիշար, յաւակնոս վեպը որով քուրթուր կը կարճեն ան զգայնացնել սեր աշուղներ իրեկց հաշտոյն: Այսպէս — Երեմիա ալ քուրթուր անշուշտ, քանի որ անկեղ ընդունի է գրած մեկ մասը իր երգերուն: Ար մեր քոչոր աշուղներ ունին յոյսն ու քուրթուր սերտութեան: Այս յիշարած թանաստեղծութեան վեր է իրականութիւնը ասկայն: Ասիկա $\frac{1}{2}-\frac{1}{2}$ է Երեմիայի $\frac{1}{2}-\frac{1}{2}$ յարուստը: Ար իբր այդ, այդ ընդունի կան որիչով արտայայտութիւն մը շատ շատ քուրթութիւններն կ'իւր մը կ'ըլլայ: արձանիքներն քուրթուրութիւնը ազատ պահելով սա ու ան սեպակականացումն: . . . Երեմիայի ողբը իր Սողոմէ աղջկանը վրայ ունի քուրթուր մաս մը, որ այնպէս յուզի է, իրտ, անկեղծ ու կը զարմացեկ հայերեկին անսանկի ընտելութեան անկան անխախտութեան դեմ: Փա՛սս մը կայ սա դիտարութեան ետին: Երեմիայի անխախտ սպանութեան ի նպաստ քուրթուրն սիսի չը իւրի: Ի՞նչ է պատմութեան արտայայտ անսանկի վերջակն ըլլայ դարձեալ Երեմիայի ողբը Աստուծոյ Չեղեպիկն երկու փառանտ աղջիկներուն վրայ: Միջին մի անցնելի անպատկար արտայայտութեան: Աս աղջիկները իր գաղիկն պիտ կը սիրեի այդ մարդը, քանի որ Չեղեպիկն սպանութիւն անկեղծայ նիւրն էր, ինչպէս կը

լոր ուղեբճներուն մէջ, Ընթերցողը կը զբեր-
կեմ Յաւելուածին: Թող մաղէ այդ զբե-
րախտ տաղերը, (*) գտնելու համար յար-
զին մէջ ենթագրելի ցորհնի հատիկը: Գը-
տածը դարձէ բան է:

— Անիկա գրական է, վարդապետական,
սիրացուական, անանձնական իր ուղեբճուն
և գանձերուն մէջ որոնք հաւանաբար կը
հպատակին թաքուն ազգականբու, մեզմէ
դժուար ըմբռնելի: Չեն անոնք, գէթ մեծ
մասով, իր ըսածին ետին կեցող մարդու
խօսքեր: Այս հաստատուածը անով աւելի տը-
խուր կը դառնայ, վասնզի մայր, հայր,
զաւակ կը կազմեն նիւթը այդ ողբերուն:

Վէ՛յ-...-է՛-...-ը որ պոռկաց երգիչին քերտով
և քե՛ր-բե՛ռ-...: Տեսողութեան մեջ անխիստ քե-
րեւս աղօսեցաւ, ֆիչիկ մը տղունեցաւ երկնայ-
նութենէն, բայց անաղաւս պսակց իր երկրայ-
նութիւնը, մարդկայնութիւնը: Կարելի է եջե-
րով երկարել այս օրինակները: Իրողութիւնը չի
դարդիր ինկզմինը պարտադրելի: Առջի օր եր որ
ժրանացի հեղինակ մը կը պաշտպանէր նոյն
տեսակէսը երբ ժրանասկան քանաստեղծութեան
համար 15-16րդ դարերը կը նկատէր *Աշխարհի*
ստեղծումի շրջան մը ու կը յիշէր Տը Պեղիկէն
հնչեակ մը որ չորս հարիւր տարիի ծանրութեան
դիմացէր եր, 1-1- մը չկրտսնցնելով իր ար-
ժեհէն: Երեւիայի մեջ չեն պակսիր այս կարգի
վճռական յայտողութեան: Մի մոռնալ Ս.
Կիրիլին խորհրդաւոր պատմուր Ադամի և
Իսկոնի կործանումին շուրջը: Իժմախոս ֆա-
ղափները ֆանդուցան որովհետեւ հազարներու
մեջէն հիւր աղաւ չտեղեկցին Եհովային սրտ-
մտքիւնը: Երեւիս ունի մեկի աւելի յայտող
ոսանաւորներ, որոնք այսօր ալ մեզ կը հրաւ-
պուրեն: Մարդերուն մեղքը անոնց գերեզմանին
հողն է կ'ըսեն և ունին իրատեմ:

(*) Իրեւ գրական ձայնողութեամբ, անոնք
որքան ալ ըլլան ինք, կը մեղմեն իրենց վը-
րիպակներ քե՛ր-բե՛ռ, քե՛ր-բե՛ռ, մարդիկ իրենց
վիպարիւններով, — առօրեային այն հրաւ-
պոյրով որով մեր գործը կը հասնուի մեզմէ
դուրս, մեզ խաբէլու գիտով: Երեւիայի ու-
ղեբճները անոր նկարագրին ալ վիպարիւնները
կ'ըլլան ու գիտիլ ճակնալու համար քանկագիտի
վաւերաբար: Թեքեւտիկ, անպարտ, քա-
ռախաղաց Պոքեցիկն է այդ տղերուն սակ գու-
շակելի մարդը, սարիկ, ֆիչիկ մը հագիսակ,
միշտ որիշին գովեսիկն մեջ հաճոյացող:

Ու մեզմէ ոչ մէկը անտարբեր չէր կրնար
մնալ այդ բառերով թեւագրելի յուզումնե-
րուն: Երեւիս հարիւրաւոր տողեր կը նը-
ւիրէ ասոնցմէ ամէն մէկուն ու չի յուզեր
մեզ: Մեղագրել սա արդիւնքին համար իր
ունը, իր ահաւոր լեզուն, չի լուծեր ա-
ռեղծուածը: Ըստպազանքը, անխմաստ շա-
տարանուճը, ձգձգուճը, նիւթը ընդլայ-
նելու պատրանքով կաղապար փոխելու իր
միամտութիւնը, այդ ողբերուն նոյն իսկ ե-
զանակ ճարելու իր նանրամտութիւնը աս-
տիճան մը աւելի կը ծանրանան, երբ դիւ-
նանք որ այդ ամէնը կամաւոր մոլորանք
մըն է իր մէջ: Անիկա իր անձնական ցաւը
այդպէս տափակցնելէն վերջը, մեծաւոր-
ներու ձօնուած ողբերուն մէջ պիտի տա-
ռապի աւելի անքաւելի տրտմութիւննե-
րով: Տեսէք ինչպէս կը սկսի Ապրո Չէլէպի
պզտիկ աղջկան մահուան վրայ իր ողբը:

Գովեստ մը, մուտք:
Ահա քանի մը տող
Յերց քարեյոգ, յոնարուտս ձայն քարճագոյ,
Առ ի պատիւս վեհագանից սիրս 'ւ ի յոգւոյ:
Երջանկացեալ գերագունից վեհից դատ,
Թեւ արիի վառ վառ յաստեղս գե առակէ:
Բամից հայից բազմաստեղանց գերագանցեալ,
Առ յարալուս ի կանառս ձայն միտ հոչակեալ:
Երփնոտակ բասս ի լեզ տեսեալ յար զարդարէ
Բարձրահրաւէր արիիափայլ հրաւակերէ
Մեծանանարդ քս նոյն բախտի կաս ձեռակապ
Ըս ներքին մարդոյն եւ արտաքինս:
(Օրագրութիւն, էջ 589)

ու այս բառամարտը պիտի շարունակուի
սա անզգածութեամբ, անխմաստութեամբ,
անգթութեամբ, ամբողջ տասնըեօթը էջե-
րու հասակին: Ի զուր, ինքն իսկ նեղուած
իր բառերուն ազմուկէն, պիտի փոխէ ա-
նիկա ոտանաւորին կաղապարը, (այլ իմն
եղանակ, նոր գոյն): Արդիւնքը կը մնայ նոյ-
նը: Այդ բառերու հրախաղութիւնը կ'անցնի
մեր գլխուն վերեւէն առանց մեզ յուզե-
լու: Մի զարմանաք, Տարօրինակ բան է
բանաստեղծութիւն անունին տակ մեր դը-
րածը, գրածը: Թերեւս ըլլաք լսած Հուկոն
Ֆոստոլա յորձորջուած քերթողի մը մասին:
Ու աչքէ անցուցած անոր գերեզմաններու
ուրջ քերթուածը զոր երեք տարբեր բա-
նաստեղծներ թարգմանած են զբարբաբի:
Այս պաշտամունքը, հիացական ու մանկու-
նակ, միայն չի սահմաներ թարգմանիչնե-
րուն հասկացողութիւնը, այլ փաստ մըն է
աւելի մեծ իրողութեան: Մարդիկ, 1860ին

մեր մէջ, բանաստեղծութիւնը կ'ըմբռնէին իր բառերու սխթմամբ: Երեմիային ժամանակը ուրիշ ըլլալու չէր: Անոնք որ հետաքրքրութիւնը կը ներեն իրենց, «Բազմավիպ» հանգէսը թղթատելու, սանկ 1860էն վար, գէպ ետ, կրնան, հոն յոխորտագին բազմած քերթուածները, նոյնիսկ ամենէն ամուր, յարգի ստորագրութիւններով պաշտպանուածները, այսօր աւելի արժեւորել քան Երեմիայի մէկ ուրիշ ողբը, ըսուած Զուգայեցի կաթողիկոսին վրայ: Զեմ կարծեր: Բացէք վաւերական քերթող Մ. Պեչիկթաշլեանի տաղարանը ու կարգացէք այս ինչ արբահօր տարեգարձին ձօնուած խորագծայն քերթուածը: Բացէք Նուազբը ու տասնով, քսանով, հարիւրով կարգացէք Խնունիէն, Տերուիէն, Տխրուիէն քերթուածները: Զեր գտածը բառ է միայն: Բառեր, բառեր, բառեր: Երեմիան իբրև քերթող գատապարտելէ առաջ, խորհեցէք սա մտթ, գժուար ալ վարկածին, «Թէ ճշմարիտ բանաստեղծը շատ բացառիկ երևոյթ է սա մեր աշխարհին համար: Թէ մենք կամաւոր մեղսակցութեամբ մը կը փոխանակենք իրարու հետ իրարմէ անգունդով բաժնուած երկու վիճակներ — բանաստեղծութիւն և սաղաչափութիւն: Թէ հարիւր տարին չէ բաւած արեւելահայերուն մօտ ոս պատրանքը թօթափելու, ու գտնելու հարազատ բանաստեղծութիւնը...»:

«Ստանկոյոյ պատմութիւն»ը ոտանաւոր խօսք է: Պարկեշտ մարդ մը սրամիտ յրօնիկ մը կը հանէր այդ պտոյալէն: Երեմիա, հերարձակ քերթող, կատաղի տաղաչափ, իրեն անվայել կը նկատէ սովորական, արձակ պատմութիւնը և կը նետուի Պեգատտի քամակին: Արշաղ բարի:

Այդպէս չէ սակայն Սիրավիպը որ կը պատմէ ալպան հացագործի աշկերտին եւ հրէուհի Մրգատային սիրահարութիւնը: Թէև Պոլսոյ մէջ այդ գարեբուն արարապարտիկ ծագումով նման փոքր վիպումներ մեծ վարկ կը վայելէին, բայց հայ մատենագրութիւնը խնամքով գոցած էր իր զրուները այդ աշխարհիկ, վրան բաց նիւթերուն: Երեմիա, որ գիտէ պարսկերէն ու կը սիրէ հէքեաթը, չէ վախցած նիւթէն (աշխարհական իր հանգամանքը նպատակ մըն է անշուշտ իրեն): Աւելի կոկուած, աւելի խնամքով մշակուած, անիկա պիտի

ունենար ժթր գարու պօեմայի մը արժանիքները: Երեմիա ինքնածին, կեանքէն յարգարուած գրող մըն է: Կիտէք թէ իր դպրոցը հաց ծախողին կրպակը եղաւ: Անոր անծանօթ էին օտար գրականութեան նման գործերը: Այնպէս, ինչպէս է այդ սիրավիպը ձեռագրին մէջ, քերթողական պատմութի հաճելի, աղուաշ նմոյշ մըն է: Շատ միտեսնէք հոն փորձուած հաստութիւնները, գոհակութիւնները: Փոխարէն կեցէք յուզումով այն տողերուն առջև, ուր աղջկան մայրը կ'ողբայ իր զաւակին փախուստը սրածին հետ: Զգացում, պատմութիւնը դարձնելու շնորհ, ոճի աշխոյժ ու իրապաշտ պատկերացում այսօր ալ կը պահեն իրենց համը, թարմութիւնը: Այդ սիրավիպէն երկու հարիւր տարի վերջը գիրի առնուած Շուաքանի Շաւարեանայ պոէման, զոր մշակած են Ալիշան և Նար-Պէյ, աւելի բախտաւոր չէ, քանի որ կը կրկնէ Երեմիային թերութիւնները, անարդի, խակ, գրքունակ, բառական յորինումներուն բեռը չհակակոչուելով ոչ իսկ Երեմիայի միամտութեամբը որ արուեստին համար թանկ է այնքան: Ժթր գարու մեծահամբաւ երկու այդ քրեարեբականերուն վիպումը գերծ է անշուշտ Երեմիային քերականական սխալներէն ու քիչ կը մեղանչէ տաղաչափական սահմանագրութեան գէմ: Ասկէ դուրս, միշտ կշիռը (ստեղծագործութիւն, պատմութիւն, գործողութեան զգայարանք, յուզում, շքրջանակ, բարք, իրականութիւն մարդեր, մտայնութիւն և տեղական գոյն, հարազատութիւն, լիտիչք) նոյնն է երեքին համար ալ, Երեմիայի մօտ պուտ մը աւելի շահեկանութեամբ, քանի որ ասիկա իր մարդերը տուած է կարելի պարզութեամբ եւ թեթեւութեամբ: Ալիշանի Սանդուխթ հէքեաթի աղջիկ մըն է, զոր երկինքն ու երկիրը կը միանան յորինելու, բայց կը զննեն մէջտեղ պատկեր մը անհեթեթ ըսուելու չափ անիրական: Երեսուն քառասուն տող Ալիշան իրար կը խառնէ տիեզերքը, անկէ ճարելու համար այդ աղջկան գոյները, մարմինը: Ու ձեր առջև կեցողը, այս ամէնէն վերջ, անկարելի աղջիկ մըն է, ճիշդ ու ճիշդ Բագրատունիի Հայկանոյեի նման (Հայկ 'Իւլցազն):

Յ. ՕՇԱԿԱՆ

(Իրջւ յ-ԸՐԴԻ-)

ԻՄԱՍՏԱԻՐԱԿԱՆ

Ա. Ի. Ա. Գ. Հ Ի Ն Գ Շ Ա. Բ Թ Ի

Կ Ա Ս

ԽՈՐՀՈՒՐԴ ԻՄԱՍՏԻ ԵՒ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

(ՏՐԱԿԱԽՅՈՒԹԻՒՆ)

ԱՆՉԵՐ. — ՎԱՐԴԱՊԵՏԸ. ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Աւագ Հինգշաբթիի առաջնական ժամերգութիւնը ստեղծեց մը ի վեր աւարած եր Ա. Յակոբի Մայր Տաճարին մեջ ու իրենից սևոր Աւանդատունին՝ Ս. Աստուածատուի մասունքը յանկեց հին։ Հինաց արդեհ, քիչ քիչ. ճաշու Պատարագին պատարագութիւնները կ'ըլլային իրենց շուրջը. բայց իրենից՝ մասունքին կիսաշոյշ սեկ անկիւնը՝ անբողոքեամբ իրենց խօսակցութեան հին . . .

Ա. Աւակերտ. — Աւագ Հինգշաբթիի ճաշու Պատարագը միշտ մասնաւորաբար տպաւորած է զիս, մանկութեանս օրերէն։ Ընդհանրապէս քաղաքիս մեր եկեղեցիին խորանը արտասովոր յարգարանք մը կ'ստանար այդ պատարագին համար. աւելի պարզ՝ քան ուրիշ օրերու, բայց աւելի յստակ պատմող խորհուրդը։ Մեծ խաչ մը ու մոմ մը մէջտեղը. ու աստիճան մը վար՝ երկու կողմերուն հաւասար բաշխուած տասներկու մեծ աշտանակներու վրայ տասներկու մոմեր։ Քիչ ծաղիկներ, բայց որոնք կը բաւէին մեր կողմերու Զատիկ շաբթուան այն կարծես միսքիք գարունը եկեղեցիէն ներս առնելու . . . Ու մանաւանդ ճերմակ, ճեփ-ճերմակ միակտուր սփռոց մը խորանին աստիճաններուն՝ որ չես գիտեր ի՞նչ մը ունէր Սուրբ Ընթրիքը ոգեկոչող . . .

Վարդապետ. — Աւագ Հինգշաբթիի ճաշու Պատարագը կրօնական բովանդակ տարւոյն Գերագոյն Պատարագն է, իբրև Քրիստոսի վերջին ընթրիքին յիշատակը հանդիսաւորապէս վերանորոգող, Հաղորդութեան Խորհուրդին հաստատման իսկ յուշատունը։

Բ. Աւակերտ. — Եկեղեցւոյ գերանգանց խորհուրդը կ'անուանեն Հաղորդութեան Խորհուրդը։ Բայց, միւս կողմէն, պէտք է ըսել թէ ամենէն ալ անհասկնալի կը թուի ան սովորական աշխարհիկ միտքին։ Նշաբբ, մեր գիտցած ու ամէն օր դորձածած ալիւրէն շինուած, արարողու-

թեան մը որոշ մէկ պահուն՝ մէկէն՝ Քրիստոսի Մարմինը կը յայտարարուի. ու այն մաս մը գինին՝ այն գինիէն որմէ շատ սունելը ալլապէս մոլութիւն մը անգամ կը համարուի, նոյն արարողութեան մէջ, մէկէն՝ Քրիստոսի Արիւնը կ'ըսուի. ու հաւատացեալները պիտի ընդունին զանոնք իբր այդ . . . կա՞յ բան մը որ աւելի գալթակղեցընէ իրերը իրենց եղածին պէս տեսնել գիտցող զբական ողջմտութիւնը։

Ուրիշ աւակերտ մը. — Եւ հասկնալի է որ այս վերջինը իր տեսակէտէն՝ իբր բարձրակէտէ մը նալի եկեղեցիին ու իր խորհուրդներուն վրայ։

Վարդապետ. — Իրաւ, ուսմիկ մտքին համար զլիսովին անըմբռնելի է Հաղորդութեան Խորհուրդը. բայց արդէն այդ միտքը ո՞րը կրնայ հասկնալ Ոգեկանին խորհուրդներէն։

Բ. Աւակերտ. — Մինակ ուսմիկ միտքը չէ չհասկցող, այլ նաև շատ անգամ «գիտուն» միտքը։

Վարդապետ. — Բայց պէտք է մոռնալ որ Ոգեկանին զլիսովին անհաղորդ «գիտուններ» կան, անոնք ալ իրենց ամբողջ գիտցածովը պարզապէս ուսմիկներ են Ոգեկանին տեսակէտէն։ Ինչպէս, միւս կողմէ, շատ անուս ու գրեթէ մանկական հոգիներ կան որոնք սակայն ինքնարեք շարժումով մը կը բացուին ոգեկան իրականութեան։

Ա. Աւակերտ. — Ծիշդ է, ուսմիկ ողջմտութիւնը առօրեային, շուկայիկին մէջ

տարուած՝ ա՛յն քան կը վարժուի իրերը իրենց առօրեայ գործածութեանը մէջ միայն առնելու որ անդգայ կը դառնայ այն անտեսանելի ներկայութեանց որոնք կրնան յայտնուել անոնց ետեւն անոնց մէջ, ու նաև ֆիզիքական երևոյթներու գիտունը, «միայն գիտունը» ու այդ պատճառաւ իսկ ոչ ամբողջական հոգին, ա՛յն քան տարուած ու մասնաւորուած կ'ըլլայ տարրականին ու տարերայինին նկատողութեանը մէջ որ ալ ևս աչք չունենար տեսնելու այն հոգեկանը որ կրնայ յայտնուել այդ ֆիզիքականին մէջ երբ զայն իր մարմնաւորումին համար կը գոյժածէ:

Բ. Առակերսք. — Եթէ միայն ըսուէր որ Հացն ու Դինին պատարագի խորհուրդին մէջ կը դառնան խորհրդակիւսեր Գրիտտոսի Մարմնոյն ու Արեան՝ ողջմտութիւնը պիտի քաշէր դեռ: Բայց եկեղեցւոյ վարդապետութիւնն է՝ թէ անոնք հոն իրապէս համարժեք կը դառնան անոնց, ու այդ հաւաստումին առջև է որ այլևս սոչ-կարմիր կը դնէ զրական միտքը: Ու կը խոստովանի՝ «Պէտք է ինձի եկեղեցւոյ վարդապետութեան բերել զինքը»:

Աւրիս առակերս մը. — Ես ալ խօսած եմ շատ անգամ անհաւատներու հետ ու անոնք գրեթէ ամէնքն ալ ըսած են նոյն բանը. — Ի՞նչպէս կրնաք ընդունիլ որ հացն ու զինին իրենց ֆիզիքական նոյն յատկութիւնները պահելով հանդերձ կրնան փոխել իրենց խորունկ բնութիւնը ու այդպէս համարժէք դառնալ Գրիտտոսի Մարմնոյն ու Արեան:

Ա. Առակերսք. — Կը ներէք վարդապետ, որ այս խնդրին առթիւ դարձեալ բերեմ այն բացատրութիւններէն զորս կը թելադրէր մեզի իմ նախորդ դպրոցի իմաստասիրութեան ուսուցիչս որ, այս պարագային ևս, Արուեստի իրականութիւններէն կը մեկնէր կրօնականները հասկնալի դարձնելու համար մեզի:

Վարդապետք. — Որով. մասնաւոր թէ կը գնահատեմ իր գիտումին խորք քանի որ ես ալ կը մտածեմ թէ այս օրուան մարդոց ոգեկանին խորհուրդը ամենէն աւելի մատչելի է՝ ոգեկանին պատկանելով հանդերձ գերազանցապէս զգայականը ընդգրկող գործունէութեան մէջէն՝ որ Արուեստինն է. ոչ մէկ տեղ այնքան

որքան Արուեստին մէջ, պէտք է ըսել, ոգեկանը զգալի, շօշափելի ըլլալու չափ թանձրացեալ կը դառնայ, հետեւաբար և իբրև ինքնուրոյն իրականութիւն անժխտելի:

Ա. Առակերսք. — Անիկա կ'ըսէր ուրեմն մեզի, առակ մը պատմելու պէս. — «Քերթողը մեներ էր իր քերթուածը ձգելով շուրջիններուն և ըսելով անոնց այդ տետրակին համար — «Ես եմ այս. իմ մարմինս է և արիւնս. կարդացէք զայն իմ յիշատակին»: — Տետրակը թուղթ էր և չորցած մեկան. ստարկայ մը եղաւ տունին մէջ ուրիշներու քով: Տղաքը երբեմն ձեռք կ'անցնէին զայն, իրենց համար տետրակ մըն էր ան որու պէսները կը ծախէր զիմացի թղթավաճառը: Բայց քերթողը ըսած էր անոր համար. «այս ես եմ»: Ու մեներ էր քերթողը, իր մարմնովն ու հոգովը չքացեր բոլորին աչքերէն: Օր մը սակայն շատ մարդեր ժողովուեցան մեծ սրահի մը մէջ. դժուար եղաւ լսուող հոն բերել իրենց գանապան բոլոր գուժներէն ու հաճոյքներէն փրցնելով: Ու հակառակ որ ժողովուած էին սրահին մէջ, շատ աղմուկ կար հոն, որովհետեւ ամէնքը կը խօսէին իրարու իրենց առօրեայէն, գործերէն, հոգերէն ու հաճոյքներէն: Բայց բեմին վրայ մէկը եկաւ ու հրաւիրեց ամէնքը Լուսութեան. միտքերը դժուարաւ քակուեցան իրենց բազմադէպ առօրեայէն ու լարուեցան դէպի նոյն ու միակ բեմը. տրամադրուեցան լսելու: Ու երբ Լուսութիւնը եղաւ — պէտք է ըսել թէ կրօնական բան մը կար այդ Լուսութեան մէջ, յայտնութեան մը Սպասումը ու նախապագացումը արդէն —, ու երբ եղաւ Լուսութիւնը, առջ եկաւ Արտաստնողը, ձեռքին մէջ այն տետրակը: (Քերթողին տունէն տղայ մը ճանչցաւ զայն կողքի գոյնէն): Ու սկսաւ կարգալ, արտասանել բարձրաձայն:

«Ու քանի իր աչքերը «կ'ուտէին» գիրերը ու միտքը «կը մարսէր» գանոնք, իր բերնէն ներգաշնակօրէն ոլորակուող ձայն մը դուրս կուգար և կը տարածուէր սրահին մէջ, կ'իւնեցէր, երբեմն զօրանալով երբեմն մեղմանալով, դանդաղելով մերթ ու արագանալով նորէն ու այդպէս անօրինակ կշռոյթ մը ձևացնելով. . . ու քանի մարդոց ականջները «կը խմէին» այդ ձայնը ու իրենց միտքը «կը մարսէր» անոր ոլորակումները անիկա Խօսք կը դառնար

իրենց ներսը և հոն տարօրինակ մարմին մը կը կազմէր հրաշագեղ պատկերներու, թեալ որ խորհուրդներու, ըղձանքի խոյանքներու և սխրալի սրտազեղումներու բազմազան տարբերէն շինուած՝ տեսակ մը հոգեղէն, կենդանի, միակ մարմին մը: Նոյն մարմինը բոլոր մարդոց մտքին՝ որմէ հոգոյ նորօրինակ սնունդ մը կ'առնէին անոնք իրենց էութեան մտերմութեանը մէջ և որ նոյնօրինակ խանդով մը կը լեցնէր իրենց քիչ առաջուան այնքան տարբեր ու անտարբեր հոգիները: Լե այդ մարմինը — կը ճանչնային հիմայ — նոյն ինքն Քերթողին հոգւոյն՝ ոգեղէն մարմինն էր և անոր մէջ շրջող արիւնը նոյն ինքն Քերթողին հոգւոյն մէջ շնչող աւիւնն էր. զոր բուրումնաւէտ գինիի մը պէս կը խմէին իրենց հոգիները անով անասելի զգլխանքի մը ուրախութիւնը հրճուելով:

«Անոնք որ լսած էին քերթողին խօսքը տետրակին համար թէ «այս ես եմ, այս իմ մարմինս է և արիւնս», սրահին մէջն էին, և կ'ըսէին հիմայ իւրովի թէ՛ ճշմարիտ էր իր ըսածը: Երբ քերթուածը աւարտեցաւ, սրահին մէջի բոլոր մարդերը անոր ձայնեղէն մարմինն ետին յայտնուած նոյն իմաստին կը մասնակցէին, նոյն իմաստը կը բաժնէին իրենց մէջ, որ հակառակ այդ բաժանումին կը մնար ամբողջ ու մի. նոյն խանդը կը լեցնէր բոլորը, որ զիրենք վեր կը հանէր իրենց գետնաքարչ առօրեայէն ու վերին Ստուգութեամբ մը, ամէն հոգի զէմ զիմանալու կարող Յոյսով մը, աննուածելի ըլլալու սահմանուած — զէթ իրենց այնպէս կը թուէր — քաջութեան Ուժով մը կ'օժտէր . . .

«Ու երբ Արտասանողը զոցեց տետրակը, մարդերը իրարու երես նայեցան և ակընթարթ մը իրարու աչքին մէջ նոյն հոգին ճանչցան ու սիրեցին. Քերթուածէն յայտնուած Քերթողին հոգիին մէջէն իրարու հոգին կը սիրէին . . . »

Վարդապետը. — Խորհուրդ Հաղորդութեան . . .

Ուրիշ առակերս մը. — Ինձ այնպէս կը թուի թէ այլաբանութիւնէ մը աւելի բան մըն է այս, որովհետեւ քերթուածին տառին տակ անկէ զլսողին տարաբնոյթ՝ քերթուածի ոգեղէն մարմինն յայտնութեան եւ ասով մարդոց հաղորդութեան ու Պատարագի

Խորհուրդին մէջ պատահածին միջև կայ ոչ թէ պարզ նմանութիւն մը միայն այլ հոգեկան գործողութեան նոյնութիւն մը իսկ: Եւրամնութեան զիծերը վեր առնել զիւրին է. պիտի մեկնենք Քերթողը իբրև Քրիստոս, թուղթ ու մեկանը՝ հաց ու զինի, Արտասանողը՝ Պատարագիչ, ու Լուսութիւնը՝ ապաշխարութեամբ Պատրաստութիւնը ընդունելու Յայտնութիւնը: Բայց աւելին. չե՞նք կրնար քերթուածի զիրին ու անոր իմաստին յարաբերութեան տեսակը վերլուծելով ըմբռնել եկեղեցւոյ վարդապետութիւնը՝ Հաց-Քինիին՝ Քրիստոսի Մարմինն ու Արեան փոխուելուն:

Վարդապետը. — Կը խորհիմ թէ կարելի է ու լաւ: Քերթուածը, արդարև, զրուած է նախ տետրակին մէջ իբրև նութեղէն բան մը՝ թուղթ ու մեկան. երբ կը կարգացուի, կ'արտասանուի կը զառնայ լսողներուն համար նոր բան մը, ձայներու ամբողջ մը, բայց զարձեալ և գեռ նութեղէն միայն բան մը: Բայց ահա որ երբ այդ ձայները մտիկ ընող միտքերը ճշդիւ կը տրամադրուին անոնց հասկացման՝ այդ ձայնեղէն մարմինն ետին կը յայտնուի բուն իսկ քերթուածը, այս անգամ. իբրև երևակայութեան պատկերներէ, զգացման թելագրանքներէ, գաղափարներէ հիւսուած իմաստի հոգեղէն մարմին մը: Ու հիմայ, այս վերջինն է որ կը զառնայ կ'ըլլայ խորունկ և իրական գոյացութիւնը, որուն իբրև յայտակերպիչ երևոյթները միայն կը ներկայանան այլևս ձայները. կը յայտնուի թէ այդ իմաստն է, թէև ծածուկ, բայց բուն գոյացութիւնը քերթուածին ձայնեղէն ու գրեղէն երևոյթներուն՝ որոնց իրմէ՛ կուգան էական սարուածքն ու կարգը. այդ երևոյթներուն կերպարանքը ու տարերային գոյացութիւնը կը հրամանակարգուէին ուրեմն աւելի խորունկ ու էական այն իմաստ-գոյացութենէն որ բուն պատճառն էր իրենց կերտուածքին, ինչպէս գոյացութիւնը բուն ու մի պատճառն է այն յատկութիւններուն որոնցմով կ'երևին մեզի իբրբը:

Ուրեմն քերթուածին նախ զիծերէ եւ ապա ձայներէ շինուած նութեղէն մարմինն ու անոր նութեական յատկութիւններուն տակ, որոնք արտաքնապէս կը շարունակեն նոյնը մնալ ու երևիլ, զայն, այսինքն քերթուածը իմացողներուն գործակցութեամբը ճշմա-

րիտ անդրդոյացաւորում մը յատաջ կուզայ իմաստի կատարելագէտ իրական ոգեղէն մարմնի մը, որ ոգեկան կարգին յատուկ մէկ խորհրդաւոր պրօցէսովը ճշմարտագէտ համարժէք է քերթողին կողմէ իսկ ստեղծուած իմաստին, — ինքն իսկ մէկ մարմնաւորումը քերթողին հոգւոյն ու հանճարին:

Ճիշդ այդպէս ալ պատարագի նուիրական խորհուրդին մասնակից հաւատացեալները կը զգան գոյանալը հացին ու գինիին երևոյթներուն տակ, որոնք արտաքնագէտ կը շարունակեն նոյնը մնալ ու երևիլ, նոր, ու այս անգամ հոգեղէն մարմնի մը որ ուրիշ բան չէ բայց եթէ եկեղեցին իսկ, իր իսկութեանը մէջ իբրև Քրիստոսի միսթիք մարմինը, որ համարժէք է իր կարգին Քրիստոսի հոգւոր մարմնին ու արեան ուրնցմով յայտնուած է նոյն ինքն Քրիստոսի հոգին:

Այնպէս որ, գրեթէ տառագէտ ճիշդ է ըսել թէ սրբագործուած Նշխարն ու Գինին ընդունողները անոնց մէջէն կը ճաշակեն հոգեպէս Քրիստոսի հոգւոր Մարմինը ու Արիւնը, ինչպէս ճիշդ է ըսել թէ քերթուածին ձայնեղէն մարմինը ընդունողները անոր մէջէն իրենց մտքովն ու սրտովը կը ճաշակեն նոյն ինքն քերթողին աշխարհ գրած և իր կարգին քերթողին հոգին աշխարհի մէջ դնող քերթուածին ոգեղէն մարմինը . . . որուն մէջէն ալ տակաւին կը հաղորդակցին քերթողին հոգւոյն իսկ հետ:

Ա. Առակերտ. — Ի՞նչ ապշեցուցիչ խորհուրդ զգալի ձեւերուն մէջ իմաստին, իմանալիին մարմնացման ու յայտնութեան խորհուրդը . . .

Բ. Առակերտ. — Սակայն, վարդապետ, հակառակ իրենց հիմնական հանդիտութեան չէ՞ք կարծեր որ կարևոր ալ տարբերութիւններ կան այն երկու պարագաներուն մէջ զորս կը բաղդատէք իրարու հետ:

Վարդապետ. — Անշուշտ. ու զոնէ պէտք է ըսել այն էականը որ՝ մինչ քերթուածը իր իմաստը կը թելագրէ մտիկ ընողներուն անոր տարբերուն զուգորդուած ձայնական ոլորումներուն յատկապէս տըրւած Ձևով մը որ գործն է քերթողին, և հեակարար մինչ հոս ունինք հոգեբանական իրականութեան բնական օրէնքներուն իսկ մէկ օգտագործումը, — սրբագործուած Նշխարն ու Գինին Քրիստոսի մէկ հրաշալի

անօրինութեա՛մբն է գրեթէ միայն՝ որ Պատարագի խորհուրդին մէջ կը դառնան կ'ըլլան համարժէք իր Մարմնոյն ու Արեան: Ուրեմն իրապէս միսթիք իրականութեան մը դիմաց է որ ունինք մենք զմեզ Պատարագի խորհուրդին մէջ: Բաղդատութիւնը, հեակարար, ծառայած եղաւ ոչ թէ նոյնացնելու երկու պարագաները այլ կարելի եղածին չափ մօտեցնելու մեր միտքը կրօնական խորհուրդին ըմբռնման. այս վերջինը կը մնայ միշտ հրաշք մը սակայն, Քրիստոսի ամբողջական գործին իսկ հրաշքին մասնակից:

Ա. Առակերտ. — Բայց եթէ բաղդատութիւնը շարունակել ուղենք, պիտի չգիւրացնէ՞ ան տակաւին մեզի ըմբռնելու, այս անգամ, բուն իսկ «հաղորդութեան» իրողութիւնը Պատարագի խորհուրդին մէջ:

Վարդապետ. — Այո՛, ինչ որ միտքս էր ընել . . . : Եթէ երկու պարագաներուն մէջ զուգահեռականութիւն մը տեսանք զգալիին տակ իմանալիին անդրագոյաւորման տեսակէտէն՝ հոգեկան այդ խորհրդաւոր երևոյթին արդիւններուն մէջ ալ կըրնանք գիտել նոյնպիսի զուգահեռականութիւն մը:

Բ. Առակերտ. — Կարծեմ Պատարագը պիտի սկսի:

Ուրիշ առակերտ մը. — Դեռ ատեն ունինք, վարդապետ, շարունակենք:

Վարդապետ. — Քիչ մը առաջ ոգեկոչուած սրահին մէջ անոնք որ պահ մը յաջողած էին ամփոփել առօրեային մէջ ջրուած իրենց միտքը և զայն լարել ու սեւեռել դէպի Արտասանողէն իրենց եկած քերթուածը, զգացին իրենց էութեան բարձրանալը մինչև քերթողին հոգին որուն հետ հաղորդակից գտնուեցան. արդիւնքը այն եղաւ որ անոր իրենց պատմածին հետ իրենց հոգիին մէջ հոսեցաւ իմանալի լոյս մը, իմանալի ջերմութիւն մը, որ դէթ պահ մը այլափոխեց իրենց էութիւնը, զայն հանեց վերին մակարդակի մը, Ոգեկանի Սակարդակին, իրեն խորհրդաւոր սնունդովը սնուցանելով իրենց իմացականութիւնը, և խանդ մը ստեղծելով իրենց սրտին մէջ որմէ նոր ոյժ մը պիտի կրնար ստանալ առօրեային մէջ պայքարող իրենց կամքը: Ահա առաջին արդիւնքը. այս հաղորդութիւնն է մարդոց ու քերթողին հոգիներուն՝

որով քերթողին խտեպան աշխարհէն իսկութիւն մը կը հոսի մարդոց սրտին մէջ:

Բայց կայ դեռ երկրորդ արդիւնք մը. այդ մարդերը օտար էին իրարու երբ չորս կողմերէն սրահ եկան. արգ՝ իրենք շատ ուսարբեր՝ մի և նոյն քերթուածին իմաստին մասնակցելով, մի և նոյն Աւիւնին բացուելով՝ քերթուածի աւարտման՝ երբ իրենց նոյնօրինակ խանդավառութենէ մը լայնցած և ուրախացած բիրերը իրարու դարձուցին՝ իրարու մէջ պահ, մը նոյն հոգին տեսան ու սիրեցին: Եւ աւելին, եթէ այդ պահուն մէկը առաջարկէր իրենց քերթուածի ոգւոյն ուղղութեանը մէջ հաւաքական օրարք մը իրագործել, այդ առաջուան իրարու օտար մարդերը ձեռք ձեռքի պիտի տային ու Գերթողէն իրենց հոսած Սէրը պինդ պիտի սեղմել տար այդ ձեռքերը. ու թե՛րևս հրաշք մը ելլէր այդ համազգացութենէն և համակամութենէն:

Այսօրինակ նաև, բայց այլապէս ամբողջական և տեական՝ արդիւնքները Քրիստոսի Մարմնոյն ու Արեան հաղորդութեանը մարդոց:

Ան որ ըսած էր թէ՛ «ոչ միայն հացիւ կեցցէ մարդ այլ և բանիւ», Բանէն Հաց մը շինեց ու Հոգիէն՝ Գինի մը անոնցմով սնուցանելու, ուժաւորելու ու անպատում հրճուանքով մը հրճուեցնելու համար զանոնք ճաշակողները . . .

Ու Ան որուն անունով ըսուած էր թէ՛՝ Սէր է Աստուած, նոյն այն Իր Մարմին - Հացին ու Իր Արիւն-Գինին ճաշակումովը մարդերուն համար հաստատեց՝ իրարու աչքի մէջ իբրև եղբայր եղբոր աչքի մէջ կարենալ նայելու հրաշքը . . . Գիտէ՞ք բան մը աւելի խոր խորհրդանշութեամբ մը յուզիչ՝ քան սրբութեան այն Համբոյրը զոր իր պատարագին մէջ Հայաստանեայց Եկեղեցին կ'իջեցնէ Ակիհէն՝ Տաճար՝ զայն լեցնող բազմութեան մէջ զայն տարածելու իբրև աստուածեղէն սիրոյ այիք մը . . .

Լուսարարը (մօտենալով) — Ձեզի կ'ըսպասեն պատարագի թափօրին համար:

Շտապեցին հազնելու շապիկները. որոնց անբնակին ու ոսկիին մէջ ֆիչ յեւոյ աղուորացած, իբրև պայծառակերպուած, կը մտնէին կարգի՝ նորին նորհուրդին մէջ բարձրանալու:

Երուսաղէմ Ծ. Ռ. ՊԵՐՊԷՐԵԱՆ

ԳՐԱՆՕՍԱԿԱՆ

ԿՈՐՆԹԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

(ԽՈՂԵՐ ԵՒ ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԼԱԳՊԱՅԷՆ)

Ն. Պ. ՆՇԱՆՆՈՒՆ. Տպ. Պուրէտ, 1938, 390 սովորական էջ. պատկերազարդ. զին 1.25 արար:

Տիտղոսը այս հատորին — «Կորնթեան Նամականի» — թելադրուած է, Ելլադայի աւերակներուն տրուած «ուխտագնացութենէ» մը: Անիկա, իմօ. գլուխներու բաշխուած, շարք մըն է «տպաւորութեանց և խոհերու», գրեթէ բոլոր հին յունական փառքին վաւերացումը կազմող յիշատակներուն ոգեկոչումէն յառնող:

Այս էջերը, հատորի վերածուելէ առաջ, հրատարակուած են արդէն «Վերջին Լուր» օրաթերթին մէջ, 1923-24ի տարիներուն, ինչպէս կը վկայէ հեղինակը: Այս յայտարարութիւնը, ինքնին կը ճշդէ մէկ յատկանիշը գրուածքին — լրագրականութիւնը: Միւս կողմէ կարելի չէ ըսել թէ, (իր օկեանքի ընկերուհին» տեղեակ պահելու դիտումով իր տպաւորութիւններուն), ի՞նչ չափով բնական է, չըսելու համար նամակագրական, վերաքաղը ընել պատմութեան, իմաստասիրութեան, բարոյագիտութեան դասընթացքի մը: Եւ սակայն, «վերհպումով», հատորի մը մէջ ամփոփելու այս ջանքը, նկատողութեան արժանի կողմ մըն է, հեղինակին անձին տեսակէտէն մանաւանդ:

Սեռը որ կը փորձուի այս էջերուն մէջ, առ հասարակ սպասուած նամակագրական կենդանի պատմումը, ուղեգրութիւնը ըլլալէ աւելի, նոր օրերու reportage-ն է, որ ըլլայ գործադրուած առաւելապէս յիշատակ դարձած կեանքերու շահագործումին: Վըտանքը ասոր՝ սահմանափակուելին է զազափարներու մասնաւոր շրջանակի մը, բռնի ենթարկուելին է նեղ հորիզոնի մը: Հակառակ այս վտանգին սակայն, ծանօթ են նուններ, օտար գրականութենէն, որոնք յաջողեր են գեղեցկութիւններ հանել, արժէքներու բարձրանալ, նոյն սեռին մէջէն:

Իսկ այն հողը, որուն աւելովը կենսաւորուելու ճիգ մը ունին էջերը այս հատորին, փառաւոր քաղաքակրթութեամբ, պատմական Ելլադան է, միջազգային գրականութեան մէջ այնքան ստուար հատորներու ծնունդ տուած, և այնքան բեղուն միտքերու

ներշնչումը իրժույզ լիացուցած: Թուում մը բրած ըլլալու համար լիշենք ժ. Մորէասը, Ռընանը, Մորիս Պարէսը և ուրիշներ: Այս լոյսով դիտուած՝ խոր շահեկանութեամբ է որ մեր հետաքրքրութիւնը կը մօտենայ Պր. Նշանեանի «Կորնթեան Նամակակի»-ին:

Փորձ մը եթէ ընենք երեւան հանելու տարրերը գրքի մարմինին, գծաբառ հաստատում մը բրած պիտի ըլլանք, երբ անգրագասնանք հոն պակասող կեանքի արդիական զգայնութեան մը, որմէ, գրքին հետ կը տառապի նաև ընթերցողը: Աւերակներուն մէջէն անտարբեր հոգիով մըն է որ կ'անցնինք: Մինչդեռ, կ'ենթադրեմ, պիտի խնայուէր մեզի այս տաժանքը, եթէ հեղինակը առնուազն իր անձնականութեան շունչովը ոգևորէր մերկութիւնը իր սողերուն: Ասիկա արդիւնք է, ոչ թէ հեղինակին տեսակ մը անգայտ, կեանքէ ու խորքէ այժմէտպէս անբաւարար խառնուածքին, (իր «Քարացածներ» հէքիսթը փաստն է թողութի վրայ խոսկ կեանք ստեղծելու իր կարողութեան), այլ, այս հատորին գոյութեան ներքին շարժառիթը եղող, խոր բայց չյայտարարուած մղումին — մարդկայնօրէն ըմբռնելի փառասիրութեան մը:

Ընթերցման պահուն տեսակ մը տարտամ յուսախաբուութիւն է որ կը չարչարէ մեր զգացումը: Ամբողջ գիրքին մէջ հազիւ զգալի, «ոտքի» է հայը: Մինչդեռ, Զօհրայ մը, իր «Ուղևորի էջեր»էն իւրաքանչիւրին մէջ ինք է ամբողջովին, իր ցեղով, իր արիւնով, իր միտով. նոյնիսկ երբ վիսպատենի պարտէզին մէջ կեցած, իր գրչին ծայրէն, հրեայ, գերմանացի կամ ֆրանսացիներ են որ մարմին պիտի հագնին: Մորիս Պարէս մը բսլորովին ֆրանսացի է, մինչև անգամ օտար հողի վրայ, և լայնօրէն ինքզինքը կ'ապրի, զատկական սոնախմբութեան մը նկարագրութեան ընթացքին ալ, Մեկարայի մէջ, (Le Voyage de Sparte), չմոռնալով իր անձը, բանալով ի'ր զգացումներուն երակը, տեղացիներու տպաւորիչ տարազին, աղջնակներու «նայուածքին անուշութեան», շարժումներուն համակրելիութեան աւագանին մէջ: Եւ ասոր համար խոսկ յաջող թերևս:

Կը կրկնենք. ասոր պատճառը, նիւթին մօտենալու իր տեսակէտն է: Հեղինակին նպատակն է մեզի «քաղել» յոյն արուես-

տին և քաղաքակրթութեան պատմութիւնը, որուն թերևս չէին սպասեր մեզմէ շատեր: Ընդհակառակը, երջանիկ արտմութեան մը տառապանքով պիտի շարունակէինք մեր ընթերցումը, եթէ Յունաստանի աւերակները զեղեցկանային հայ զիծերունոր երանգներով: Ի վերջոյ, ամէն գրիչ, վրձին կամ դուր, ժողովուրդի' մը և ցեղի' մը արիւնով, երանգապնակին գոյներով և կամ պատմութեան ոգիովը չաղախուած, կը կերտէ հրաշալիքները անոր հոգիին: Եւ մեր հեղինակին չեն պակասած առիթներ այս աշխատանքը կատարելու: — Ի՛նչ աղուոր է պատկերը, երբ յոյն տաճարէ մը ելած պահուն, հեռուէն կոտորուող հայ երգ մը կը լսէ. «Կո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս. . .»: Ու որքա՛ն սրտազրաւ է տեսարանը հայ ծերուկին, որ գիշերը ուշատեն իրեն կը վազէ, հայրենիքէն տեղեկութիւններ առնելու՝ արցունքը աչքերուն: Հայ տարագրեալներուն՝ իրենց վիշտը հայ պատարագին մէջ ամօքել փորձող:

Եւ սակայն, այս բոլորը լուսանցքի նօթեր են միայն, հեղինակին համար, որ մեծ չափով ապրած է և ունի, տարագրեալի մը տխուր զգայնութիւնները. . . :

Իրբև երկրորդ տարը գործին մէջ ուշագրաւ է ոգեկոչումը անցեալին. և ասիկա՛ լայն համեմատութեամբ, մեծագոյն բաժիններով: Բայց այս ալ չենք կրնար յաջողութիւն մը նկատել: Ամէն ոգեկոչումինք իր մէջ նպատակ մը ըլլալէ աւելիովն է որ արժանի կը դառնայ համակրանքի: Այսպէս՝ Ռաֆֆի մը, իր «Սամուէլ»ով, պիտի օգտագործէ հայոց պատմութեան սրտաուռ մէկ գրուազը, արծարծելու համար հայրենասիրութեան զգացումը, իր ժամանակի մարդոց սրտերուն մէջ: Ուրիշ մը պիտի ընէր ոգեկոչումը անցեալին, վերականգնելու համար գեղեցիկ բայց մոռցուող բարքերը իր ժողովուրդին: Երրորդ մը՝ ի' մէկ խաղով, կեանքի պիտի հանէ դարերով մոռացութեան նետուած անուններ, և գէմքեր, արուեստի թեմաներ շահագործելու համար:

Այս հատորին մէջ, վերնագրուած անունները առիթներ են պատմական հրմտութեան մը ցուցահանդէսին: Բաւական է Ուրիմպիայի մը տեսքը, որպէսզի հեղինակը ներէ ինքզինքին մինչև «գրախոս» իջնել, բարեշրջութեան բաւիղներէն հասնելու քը-

րիստոնէութեան, ներկայացուցած ըլլալու համար կրօնական զգացումին բնածին հանգամանքը մարդուն մէջ: Երկրորդ գլուխով մը՝ «Ալտիսի հովիտը»՝ պատմութիւնը ընելու համար Ալիմպիայի փառքի և աւերի թուականներուն: Ու երրորդով մը՝ «Ալիմպիայի թանգարանը»՝ նկարագրին ու պատմականը տալու յոյն արձանագործութեան:

Ու նոյն է ընթացքը, բոլոր միւս յիշատակարաններուն համար ալ Ապարտայի, Աթէնքի, Կորնթոսի: — Այց մը Սոկրատի բանտին, պիտի արժէ տասը էջերու վերաքաղ մը, դնելու համար Սոկրատը իր ժամանակի քաղաքական և իմացական գործունէութեան մէջ, իր և իր հակառակորդներու տեսակէտներուն բազդատումով. իսկ պահպանին ձեռքի բանալիները թռիչք պիտի տան երեակայութեան, սարքելու համար ամբողջ արարողութիւնը դատապարտութեան և մահուան զրուագներուն:

Ստուգիւ, համերատար պրպտութեւ լայն հմտութիւն մը երեան կուգայ գրքին գրեթէ ամէն էջին վրայ, իբրև բարենիշ և արժանիք հեղինակին: Եւ արդարև շահեկան է գրքի մը մէջ հաւաքուած գտնել պատմութիւնները և կարելի ծանօթութիւնները երկրի մը հնութիւններուն, ուղեցոյց մը տուած ըլլալու համար «ուխտագնաց»ներու ձեռքը: Բայց թէ ինչ կշիռք պիտի գործածուի գնահատելու համար այս աշխատանքը, նման հատորի մը պարագային, թերևս դժուար չըլլայ որոշել: Եթէ այսպիսի ձեռնարկի մը մէջ նպատակ կ'առնուի տեսակ մը լուսանկարչութիւն ընել, արտաքին աշխարհը, ներկայ թէ անցեալ, նմանահանութեամբ մը թուղթի վրայ փոխադրել, ոչ-փառաւոր տեսակէտ մը թող ներուի մեզ նկատել ասիկա: Այդ պահանջքին գոհացման համար բաւական է միայն Guide-Book-երու և Bedecker-ներու ցուցմունքներուն զիմել: Մինչդեռ գրական գործի մը մէջ, այդ նօթագրութիւնները անբաւարար կուգան. հոն աւելին է որ կը սպասուի, և այս անգամուն, նորութեան, կենսունակութեան, ապրուստեան անակնկալներով, ստեղծումի շունչի մը ընդմէջէն:

Այս հատորով, հեղինակը կը ներկայանայ տակաւին, իբրև խորհրդածող, բարոյախօս, և որոշ հասկացողութեամբ, նաև քերթող: Իր խորհրդածութիւնները չեն կրնար

սակայն անոր ապահովել մտածող մարդու միջին փառք մը: Իր մօտ, անոնք կա՛մ վերջաբաններ են, «նուիրազայր» է մը բաժանումի վայրկեանին միտքը ինկող, և կամ «մտից տոմս»-եր՝ արտօնելու համար դասընթացային հետաքրքրութիւններ իմաստասիրութեան, գեղեցկագիտութեան կաշուածներէն: — Աթէնք «լոյս»ի կեդրոնն է, իսկ Ելեւսիս՝ «խորհուրդներ»ու տաճարը. ու ներելի չէ ասոնց առջեւէն անցնիլ առանց խոստովանելու թէ, այդ «լոյս»ով միայն կարելի էր Յունաստանին համար ունենալ իր Փիդիասը, Պոլիկլէտը և արուեստներու «թագուհի»ութեան մրցանակը. և այդ «խորհուրդներ»ուն երկրպագութեամբ միայն, Պղատոն և յաջորդ գարեբու «խորհրդագէտ» միտքեր, երանութիւնը պիտի ունենային բարձրանալու կեանքի խորհուրդի «ակ»ին, սիմաստասիրութեան Արևոյին, կարենալ թափանցելու համար, անկէ յետոյ, կեանքի Վախճանին: — Եւ կամ, իր պատուանդանէն զետին ինկած արձան մը, շքեղ պատմութեամբ քաղաք մը, իր աւերակ մնացորդներով, աւաղել կուտան իրեն մարդ էակին մէջ յայտնուող վայրագութիւնը, հանդէպ այսպիսի «նուիրական» հրաշալիքներու...: Իր խորհրդածութիւններուն լայն չափով կը պակտի ինքնակ նրկարագիր մը: Սորհուրդները, այսպէս ըսենք, հիւթէն իրեն կուգան, (յիշատակներն են զինք խորհրդածումի միտք), և ոչ թէ իր մէջէն կ'աւելնան իրենց առարկաներու վրայ, գեղեցկացնելու համար իրենք զիրենք անոնց մէջ, և «գրասանգ կապելու անոնց կամարներուն շուրջ»:

Իր բարոյախօսութիւններուն մէջ, երեան կուգայ հաստատ մարդը քրիստոնէական խոր սկզբունքներ իրեն ստուգանիշ (criterium) եւ ուղեցոյց ունեցող: Ասոր վրայ կ'աւելնան նաև խորունկ շեշտ մը համոզումի ու կորովի, չձանձրացող պատրաստակամութիւն մը փաստարկութեան, «ջատագովութեան»: Այս յատկութիւնները իրենց ճշմարիտ արտայայտութիւնը կը յայտնարերեն այն գլուխներու մէջ, ուր առիթը կը տրուի հեղինակին անդրադառնալու մահուան, ամուսնութեան խորհուրդներուն. զծելու պատկերը Հայ եկեղեցւոյ դերին: Իսկ վանքերու այցելութիւնները, («Կուսանաց վանք», «Ալիա Մոնի»), պատեհութիւններ

են պարզելու համար անոնց դերը հոգիին յեղաշրջման գործին, և կրօններու զարգացման պատմութեան մէջ, ճշգրիտ արժէքը ճգնաւորութեան, մենակեցութեան, կուսութեան ուխտերու:

Իր քերթողութիւնը ծանրաբեռնուած է գործին, ըլլալով եկամուտ տարր, ճօխացնելու համար տողերը, զող մը ճարելու համար զգացումներուն: Խորզ կուզայ պատկերներ ապսպրելու իր ճիգը, բանասիրական նկարագրով աշխատանքի մօտեցող նրման հատորի մը մէջ: Ու թող ներուր բառը, պոռոտ է հետտորութիւնը, արդիւնք, թեւրեւ, նախանձայոյզի, «Վերմեռանդ ուխտաւոր» ի իր ոգևորութեան . . . :

Կ'ուզենք եղբակացութեան մը բերել մեր գիտողութիւնները:

«Կորնքեան նամականի»ն, իրրև զրական գործ, հակառակ մեր տողերուն կարգ մը մատնանշումներուն, ի յայտ կը բերէ արժանիքներ, որոնք էջերու ետեւէն կը զծեն դէմքը հեղինակին: Թէև չենք ճանշնար զինք, բայց լսեր ենք իր մասին, իրրև կրօնական զգացումի ցայտուն յատկութիւններով օժտուած անձ մը: Եւ ասիկա կը զգացուի, գործին տեսակէտէն անյաջողութիւն համարուած էջերուն մէջէն իսկ:

Չունինք, կամ, մատի վրայ կը համրուին անուններ, որ համարձակութիւնը ունենան կրօնական տեսակէտ մը որդեգրել, քրիստոնէական զգացումի մը խորքով մօտենալ, պատմական, իմաստասիրական իրողութիւններու և երևոյթներու: Այս հատորին դժուարանալով հանդերձ պատուոյ տեղ մը տալ «յաջող գործ» երու կողքին, չենք կրնար հանրութեան չյանձնարարել սոյն ոգին, որուն գաղափարովը հարուստ է ուտաք, անոր գրեթէ ամէն էջը:

Չարգացած միտք, լեզուին տիրացած գրիչ, ճօխ՝ բառամթերքով ու գիտելիքներով, հմտութիւն. ահա յատկանիշեր որոնք արժանի կը դարձնեն հեղինակը համակրանքի: Ու ասոնց վրայ աւելցուցէք յուզումի, համոզումի, կորովի, ներշնչումի և զգացումի որոշ շնորհներ:

Այսպէսով կ'ունենանք «Կորնքեան նամականի» մը, որ մեր գրականութեան կրօնական բաժինին մէջ պիտի կարենար իր արժանաւոր տեղը գտնել, թեթևցած եթէ ըլլար իմաստասիրական գրութիւններու ճնշումներէն:

ԹՈՐԳՈՄ Ա.ԲԵՂԱՅ

ԴԻԻԱՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒԱՅ

ԻԲ

Ժ.Բ. զլխով սահմանագրութիւն Է(*).

Շնորհօք եւ ողորմութեամբ բարերարին Աստուծոյ զրեցաւ զիրս սահմանագրութեան եւ ուխտագրութեան զգուշական եւ կանոնական համայն ազգիս Արամեան, հաւանամբ երկուց երեւելի աթոռատիրաց, Աստուծոյն ամենակալի մարմնաօրիկ տեղեաց եւ Արարչին մերոյ զմեզ ի լոյս կոչելոյ, Յակոբայ եւ Եղիազարու ըստ նարդենիս բարեսէր կաթողիկոսաց եւ ըստ ժամանակիս երեւեալ նախանձախնդիր աստուածային օրինաց՝ հոգիւնկալ վարդապետաց: Եւ ոչ եթէ նորաձեւ իմն յառաջ ածեալ, այլ զայն զոր ի նախնեացն արձանացեալ եւ հնազոյն կանոնօք ամրացուցեալ, զի յետ սակաւ աւուրց մինչեւ ցմեզ ահա տեսակ խանդարեալ զկարգ նախնեացն, եզծեալ եւ շփոթեալ կրօնք քրիստոնէականք ի սխալմանէ տգիտաց փառամուրաց եւ ի տարածայն կաթողիկոսաց, որք ոչ նուաճեցան ի ներքոյ աստուածադիր կանոնաց, յորոց արեւելին անհնարին խոտովութիւնք ի մէջ եկեղեցեաց եւ յոլով ազմուկ եւ աղաղակ ի մէջ ժողովրդականաց: Որոց պատճառէ հարկ եղեւ վերոյգրեալ կաթողիկոսաց եւ նշանաւոր վարդապետաց զալ ի միաբանութիւն սիրոյ եւ խաղաղութեան սակսօգտի եւ շահարկութեան հասարակ ազգի

(*). Երբ Եղիազար Բերիոյ մէջ կաթողիկոս կ'օժուի, օրհնութեան կոնդակ մը կ'ուղղէ Օսմանեան մերութեան ամէն կողմերը, խոստանալով նոսե օրի միւռոն բաշխել: Բայց տեսնելով որ Մարտիրոս վրդ. Ղրիմեցիի զրգամբ Յակոբ Զուլայեցի կաթողիկոս զինուած է իր դէմ ու շարունակ կոնդակներով կը յորդորէ ժողովուրդը հակառակի իրեն եւ չրնդուելի իր ապօրինի իշխանութիւնը, զայն միաժամ պնդելու եւ էջմիածնի Աթոսին իրաւունքները պայտօգելու համար՝ ատաներկու յօգուածներէ բազկացեալ սոյն կանոնը կը պատրաստէ, խոստանալով անթերի գործադրել զայն: Յակոբ Կաթողիկոս բայել իր քայ կը մերժէ այս կանոնը, որուն յօդուածները Քէպէտ մեծ մասամբ 1651 ին Երուսաղէմի մէջ Ս. Էջմիածնի Փիլիպպոս եւ Սիսի ներսէս կաթողիկոսներու միջեւ սահմանուածներուն յարեւմտն կ'երեւին, սակայն Երրորդ եւ Չորրորդ յօդուածները ուղղակի կը հակառակին նախնի կանոններուն ու կը կայսեն Ամենայն Հայոց Հայրապետի իրաւունքները:

եւ ժողովրդեան: Եւ այս ոչ իւրք կայանայ եւ գլխաւորի՝ եթէ ոչ տեառնակտակ բանիւ զոր հրամայէ եթէ՝ Չխաղաղութիւն իմ տամ ձեզ: Քանի Ստաուաձ կամեցաւ ծանրագին գնել զխաղաղութիւն, զի Որդին Ստաուձոյ չարչարեցաւ, խաչեցաւ, թաղեցաւ եւ եթող մեզ գանձ զխաղաղութիւն՝ հանգերձ սիրով: Եւ զի Որդին արար գուգակցութիւն ընդ քեռ մերու՞՝ այսինքն ընդ մարդկային բնութեանս, զի նորոգեցի աշխարհի խաղաղութիւն: Վասն որոյ և տակաւին եւս պարտ է ծառայից Տեառն, եւ մանաւանդ այնոցիկ որք երեւին իր աշակերտք նորին, խորհիլ վասն խաղաղութեան ազգի եւ եկեղեցոյ, եւ ջանալ զի հաստատեցի, կայացի եւ արմատացի անջրելի կանոնաւ եւ անսղալ գաշնակցութեամբ եւ պայմանաւ:

Առ որ հակիրձ բանիւ եւ երկար խուզմամբ եղան նշան սիրոյ եւ ուխտագրութեան գլխաւորք այսոքիկ ի մէջ երկուց գերադրական աթոռոց, այսինքն ի մէջ Սուրբ Երուսաղիմայ եւ ի Սուրբ Էջմիածնին՝ ըստ նախնական սահմանաց:

Նախ՝ զի մեռնն սուրբ, որ օրհնի ի յաթոռ Սուրբ Լուսաւորչին ի Սուրբ Էջմիածին, բաշխեցի այն ըստ սովորական պայմանին ի ձեռն երեւելի առաջնորդաց որք ի մայրաքաղաքունս, եւ ի նոցանէ ծորեցի առ ժողովրդականքն, ըստ այսմ՝ Որպէս իւզ զի իջանէ: զի եւ նոքա տայցեն գմարմնաւոր նուէրս մեծի աթոռոյն, ոչ որպէս թէ գին մեռնի՝ այլ իբր հոգեւորական եւ մարմնաւորական աղերսումն իրերաց: Գոնեա զի սովաւ բարձցի տրտունջ եւ ազաղակ ժողովրդեան, եւ կարկեսցի բերան անզգամաց:

Երկրորդ՝ զի նըւիրակունք Սուրբ Երուսաղիմայ որք երթիցեն յաշխարհն արեւելեան, շրջեցին հրամանաւ Էջմիածնայ կաթողիկոսին, ըստ նախնական սովորութեան, եւ խնդրեցեն զխոստմունս եւ զօգէրածինս եւ զնուէրս Սուրբ Երուսաղիմայ որպէս զՏունն Յունաց. եւ մի ոք ընդգլխացի յեպիսկոպոսաց կամ վարդապետաց կամ ի վիճակաց արքեպիսկոպոսք կաշառական պատճառաւ, եւ կամ այլ ինչ խորթ եւ օտար խօսիւք, զի եղծումն մեծի սիրոյն յայսպիսի իրաց ծնանի:

Երրորդ՝ զի բնաւ մի՛ ձեռնադրեցէ կաթողիկոսն կրկին եպիսկոպոս ի վերայ

միոյ վիճակի, այլ որպէս է հրաման կանոնական՝ ի մեռանել միոյն յառաջիցի միւսն եւ այս եւս ստոյգ ընտրութեամբ եւ թարց կաշառաց. նաեւ որք ի մեծամեծ քաղաքաց են՝ ունիցին զվկայութիւն յերուսաղիմայ կաթողիկոսէն:

Չորրորդ՝ զի յորժամ որ հրաւիրէ ոք ի պատիւ կաթողիկոսութեան ի Սուրբ Էջմիածին, լիցի պայման զի խնդրեցի վկայութիւն կաթողիկոսէն Սուրբ Երուսաղիմայ: Ըստ նոյն սարասի եւ ի գահն Քրիստոսի նստողն ունիցի զիր հաւանական ի կաթողիկոսէն Սուրբ Էջմիածնայ. գոնեայ զի այսու պատճառաւ մնացէ եկեղեցի Քրիստոսի ի վերայ գլխաւոր պատուիրանին, առ որ եզերին բովանդակ վարդապետութիւնք Տեառն ի նոյն բան, որով ճանաչիմք եթէ ժառանգաւորք նորա կիք. մանաւանդ թէ սովաւ գոյ հնար մերձենալ մարդոյն առ Ստաուաձ, որ է վախճան եւ ծայրագոյն բարի:

Հինգերորդ՝ լիցի հաւատարմութիւն առ միմեանս անսխալ սիրով, զի ապստամբեալն ի միմեանց բնաւ մի՛ ընկալցին ի ժառանգութիւն աստիճանի: Ի զոնաբացէն մինչեւ ցեպիսկոպոսն. զայնպիսինս պարսքարեցի յերկուց կողմանց, մինչ գարձցի առ իւր վարդապետն. ապա թէ ոչ կամեսցի՝ վտարեցի յերկուցունց, որպէս զի թափեցի եւ կեղեցի Քրիստոսի ի զողոց եւ յաւազակաց:

Վեցերորդ՝ ընտրութիւն, զի որք չօգին ի յազգէ մերմէ ի ժառանգաւորաց եկեղեցոյ ի Հոռոմ թարց ի մէնջ առաքելոյ եւ գրոյ եւ առնուն զկարգ նոցին, յայնպիսեաց գարձեալքն ի մեզ մի՛ ընկալցուք, որք են յայտնի գայթակղեցուցիչք ժողովրդեան:

Եւթներորդ՝ հարկաւորեցի եւ այս ըզգուշութիւն եւ արձանագրութիւն, զի որք սպրդին ինքնամատոյց բանիւ վարդապետութեան եւ կամին անձամբ թագաւորել եւ ոչ Ստաուձով ի վերայ քաղաքաց յառաջնորդութիւն, մանաւանդ մայրաքաղաքին Կոստանդնուպոլսի, այնպիսեացն լիցուք կշտամբիլ երկուց կողմանց, եւ հաւաքելով հաւաքեցուք ի տանէ Տեառն եւ գաւթէ Ստաուձոյ, այնքան՝ մինչ զի եւ ի թողակէ այն քաղաքէն, որք են գանձանակի եւ այլ նուէրք որք շնորհին ի պէտս աթոռոյն, խորշելով խորշիմք եւ ոչ առնումք բնաւ ինչ ի նոցանէ եւ նզովելով

նդովեմբ զընդունողս նոցին՝ թէ՛ ի ժառանգաւորաց եւ թէ՛ ի ժողովրդականաց համարեալ լիցին, զայնպիսիսն յաչս երկուց աթոռոցն իբր հերեալ[իկոս] եւ զկողովորդս եկեղեցւոյ:

Ութերորդ՝ մեծագոյն փրաս եւ արժանի ողբոյ որ ածի ի մէջ եկեղեցոյ, զի աւանեսէին անվարժք եւ անկիրթք եւ որդիք անարժանից յանկեան ուրեք եւս անդէտ եւ պիտկոպոսք ձեւանան եւ ձեռնադրեն քահանայ առանց գիտութեան իւրոյ արքեպիսկոպոսի եւ մանաւանդ թէ՛ բնաւորօք կամին յափշտակել զշնորհան Աստուծոյ, յորմէ լինին անհնարին վէրք ազգիս եւ մեծ խնդարումն եկեղեցւոյ. եւ սակս այսպիսեացն կամեցաք զի ամենեւին մի՛ լիցին այսպիսիքն շահիլ ի կաթուղիկէ եկեղեցի ըստ հաստատուն կանոնի նախնեաց. եւ որք լինին օժանդակ այնպիսեացն ի ձեռն արձաթոյ՝ եւ նոքա եւս արժանի եղիցին նդովից:

Իններորդ՝ հարկաւորագոյն պիտանացու եւ յայ՝ զի եպիսկոպոսք, արեղայք կամ երիցունք որք ոչ են տեարք վիճակաց եւ վանից, նաեւ ոչ ունին ժուժք բնակիլ ի ներքոյ ձեռաց արքեպիսկոպոսաց եւ կամ բնակիլ ի վանք եւ յանապատ, այլ շրջին վէս անձամբ եւ խենէշ կրօնիք ի մէջ անմեղ ժողովրդեանն եւ ոչինչ պէտս աստ եւ անդ ապականեն զկարգ եւ զկրօն եկեղեցւոյ խարերայական ձեռով, զայնպիսիսն կամեցաք նդովիւք խայտառակել, եւ ուր եւ գտանիցին՝ հալածելով հալածեցցեն ըզնոսա քահանայք եւ ժողովուրդք, նաեւ հաց անգամ մի՛ տացեն նոցա. նաեւ թէ՛ գտանիցի ոք հաւատարիմ նոցին, նա եւս փակեցի ի ներքոյ պատժոց նոցին:

Տասներորդ՝ եւ եւս նուիրակունք երկուց աթոռոց, որ շրջին ի մէջ ժողովրդեանն, հոգ նոցա լիցի միայն զի քաղցրաբան վարդապետութեամբ սուսուցեն զժողովուրդն, եւ մեղմաբար ըստ կարեաց խնդրեցեն զողորմութիւն, եւ բնաւ մի՛ մխնացին ի գործ եկեղեցականի, որ վերաբերի զաւառին եպիսկոպոսի՝ թէ՛ աստիճանի, թէ՛ ճիւղահաշուութեան սակս գէեզական ախտին, եւ յուղայեան պատառին, նաեւ բանադրանս մի՛ իշխեսցեն ի վերայ ումեք արձակել վասն ողորմութեան եւ վասն իւրեանց անպատուութեան: Իսկ եթէ՛ յանդգնին

եւ լրբին՝ անէծք իւրեանց յանձինս իւրեանց ընդունեցին, ըստ Իմաստ[նոցն], եւ զկապեալս յումեքէ մի՛ իշխեսցէ այլ ոք լուծել, որ է ընդդէմ կանոնաց սրբոց:

Մեասասներորդ՝ եւս շահաւէտ քննութիւն եւս՝ զի վարդապետք նորարոյսք, որք ոչ գտանին ի գործառութիւն երկուց աթոռոց եւ ոչ բնաւ գլխաւորաց կամ արքեպիսկոպոսաց, այլ շրջին ի պատճառս փառաժողութեան եւ ազահութեան, զայնպիսիսն մի՛ լիցի ընկալիալ ի քաղաք եւ ի գաւառ, եթէ՛ ոչ ունիցի զնամակ վկայութեան երկուց աթոռոց:

Երկոտասներորդ՝ եւ պիտոյանայ հարկաւոր քննութիւն սակս արքեպիսկոպոսաց եւ զաւազանաց բաժանումն զոր թողաք ի մեծ ժողովուն եւ հարուստ գիտնականաց ի պատկանաւոր ժամու: Բաւ է:

ԻԳ

Արդնցի Ոհան վրդ. Էրզրումէն առ Եղիսպար կարողիկոս ի Կ. Պոլիս(*):

Յաւէտագոյն իմն փառօք բարդաւաճեալ և ճշմարիտ հանճարով ամէնունակ Հոգւոյն առ լցեալ, որոյ պատճառէ և հանդիսաւոր վիպասիւք անուն քո յսքունս բացափայեալ Տէր Եղիազար յաբունապետ և ջատագով աստուածային օրինաց, ընկալլի՛ր ողջոյն ի Յոհաննէ հուսկ վրիպակէ և ամենաթշուառ եղբօրէ քումմէ խնդալ քեզ ի Տէր յոյժ յոյժ, ամէն: Ծանիցէ եղբայրութիւն քո սակս կենաց և կրից մերոյ, զի յետ զնալուն մերոյ ի տան կաթուղիկոսարանի և յանձնելուն մեր ամենայն ախք և կարասիք ի նա, յետ աւուրց ինչ եկն առ մեզ ի քէն առաքեալ զեսպանն քոյին սիրալիւր նամակաւ, յորմէ և մեր տեղեկացեալ զքոյդ անսխալ սէր և գութ և իմ ոչինչ յոպաղեալ, իսկոյն ցուցի զգիր եղբայրութեան քո հաւուն (Յակօր կաթ.ին), և առաջինն թէպէտ ընկալայ խոշոր պատասխանիս, բայց յետոյ յոյժ հաւանմամբ և սիրով ընկալայ արձակումն, զի թարց ցուցանելոյ քոյդ գրոյ, անհնար էր մեզ ի զերծանելոյ պատրուակայ զրուցով: Եւ արդ

(*) Ընդօրինակութեան մէջ նամակիս վերնագիրն է «Արդնցի Ոհան վրդ.ի գիրն է»:

անա զինչ և իցէ անջատեալ մեր ի նոցանէ խաղաղական ողջունիւ եկաք յերգրում, Տէր Գալուստն ևս ընդ իս, և անտի չուեմք ի կայան քոյդ տէրութեան վստահանալով մեր ի բարեսէր գութ քո: Գարձեալ, սիրելի՛, թէպէտ մեք յայց կողմանց ի սպաս ձանձրացեալ՝ հակամիտեցաք առ այս վայր՝ առիթ մեզ ունելով զկաթողին քո գութ, բայց ոչ զիտեմք՝ հիթէ ս՛ երթամք, սակս ոչ զալուն նագելուոյ ի տուն քո: Վասն որոյ այլ բան գլխաւոր քան զայս ոչ ունիմ առ եղբայրութիւն քո աղերսանք, զի զորպիսութիւն քո ստէպ ստէպ ծանուցես մեզ: Ողջ լի՛ր առ յոյն բնաւից:

Գրեցաւ զիրս յունուար ամսոյ ժը աւրն հինգշաբաթի (1666):

ԻԴ

Յովնան Եպիսկոպոս Ազրիանուպոլսեան առ Եղիազար կարողիկոս ի Կ. Պոլիս (*):

Գերապատիւ եւ զերազարդ եւ հրաշազան, մաքրամիտ եւ սրբազան տեսունըզ վեհիդ մերոյ Եղիազար կաթողիկոս հայոց, և պատրիարք Սուրբ յերուսաղիմայ: Յորմէ հասցէ նըւատա և յետեալ Յոհան Եպիսկոպոսէ եւ ընդ ձեռամբ մերոյ եղեալ քահանայիցն և միաբան ժողովրդենէ, և երկրփոխանացն ամենեցուն, մեծամեծաց և փոքունց, մեծ ողջունիւ ծունր և երկըրպագութիւն մատուցանելով համբուրեմք զաստուածաշօշափ աջդ եւ զգարչապար սրբազան հորդ մերոյ, և միաբան ծառայքս խնդրեմք յԱստուծոյ զի զհանուրց հայրդ մեր մինչև ցայս անփորձ և անսասան կեանօք պահեալ է և պահեսցէ, և ընդ երկայն աւուրս արացցէ ի պարծանս մեր և ամենայն հաւատացելոց, եւ գոհանամք զԱստուծոյ յամենայն ժամ, որ կրկին այցարար Աստուած ժողովրդեան իւրում ի բարութիւն և ետ մեզ կրկին զսրբազան և ախոյեան հայրդ մեր հովիւ և առաջնորդ այն սուրբ տանն և պասքեալ ժողովրդեան: Եւ ընդ սիրոյ ողջունի և երկրպագութեանս

մերոյ, և էտրէնու եղեալ ի ծառայիցդ ամենեցուն, յայտնի լիցի վեհիդ եւ սրբազան հորդ մերում, զի ոչ անտես աննելով և յիշելով զամբարցութիւնս մեր՝ ժողացեր ես զմեզ, այլ կրկին զթալով և ողորմելով ի վերայ մեր, ձեռամբ խօծա Սահակին օրհնութեան նամակաւ զէտրէնու ծառայքս ձեր մխիթարեր ես, ոչ յիշելով զմեր առաջին պակասութիւն Յորժամ եհաս առ մեզ զիր օրհնութեան քոյին ձեռամբ խօծա Սահական և բերանով ես պատմեաց առ մեզ, մեծ և փոքր ամենեքեան լի եղեն մեծ ուրախութեամբ. ուրախացաք և փառս և գոհութիւն մատուցաք յԱստուծոյ, զի ոչ ի սպաս մոռանայ մեզ Տէր: Եւ անա՛ առաքեցաք առ սրբութիւնդ քո զմեր հոգեւոր որդին՝ զտէր Եակոբն, որ եկեալ ամենեցունց բերանոյն ողջոյն և երկրպագութիւն տացէ սրբութեանդ և բերան առ բերան խօսեսցի ընդ սրբոյդ, և տեղեկացի ամենայն կողմանց զնեղութիւն ի ստապատիր արանց և անուպայ մարդկանց՝ մինչև ցե՛րբ նեղիմք և շարչարիմք և զպատիւ մեր առոտս անկանի, և զերկիրն մեր առաջի աչաց մերոց օտարք կերիցեն և զիշխանութիւն մեր անուղղայք և աննչանք վայելեսցեն: Եւ եթէ զանձանակի կողմանէ հարցանես՝ հազըր է, ծանր մի թուի հորդ մերում թէ Սահակն չեմք տըւեր կամ հետ չբերեր: Հրամանուցդ յայտնի է աշխարհիս հայն ամէնն, թէ զո՛վ հազըր չէր. մեք անա՛ Յակոբին ասացեր եմք. նա թո՛ղ բերանով ասացէ. զոր ինչ պատուիրես՝ այնպէս առնեմք: Եւ ամենեքեան աղաչեմք, եթէ հնար լինիցի՝ անձամբ քոյին գալ և մխիթարել զպասքեալ զժողովուրդն, զի ստոյգ ստոյգ կարօտ եւ փափաք են եւ սպասեն զալստեան սրբազան հորդ: Թողութիւն շնորհ[եա՛], մեծ պատուոյ արժան ես. սակաւ ինչ վէլէնցէկ իբր զլուծայ այրուոյն ընդունիցիք, ողջ լիք: Գրեցաւ յունվար ժդ (1666): Այլ եւ կրկին մեծ ողջոյն եւ օրհնութիւն Յոհան պարոնարէ մատուցի մեր հոգևոր որդւոյն Սուքիաս վարդապետին և Ներսէս տիրացուին, այլ և մահուսի տէր Մարտիրոսին և տէր Յովանիսին և Երէմիային:

Հրատարակեց՝ Մ. Ն. Ն.

(*) Ընդօրինակութեան մէջ նամակիս վերնագիրն է Այս զիր յեարէնու եկն յՆստամայոյ ի թուիս ՌձԺԵ րժ. կերիւ ժողովրդեան եւ կերիւ Եպիսկոպոսին Յոհանու, ի շնորհաւորումն նորոգման իշխանութեան վեհիս մերոյ:

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք Ե Ի Բ Ե Մ Ա Կ Ա Ն Ք

* 7 Ապրիլ. Ե. Կիր. Մեծ Պահոց, Գաւառքին, երկէ կէսօրէ վերջ «Լըաշափառ» ուլ հանդիսաւոր մուտքի արարողութիւն կատարուեցաւ Ս. Յարութեան Տաճարէն ներս, հանդիսապետութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Զօր, և ժամերգութիւնը պաշտուեցաւ նոյն տաճարի մեր Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, — Այսօր ևս առաւօտեան ժամերգութիւնը կատարուեցաւ նոյն տեղը, — Ս. Յարութեան Տաճարի Լայոց սեպհական այս մասը, Ս. Լուսաւորչի եկեղեցին, որ Տաճարին հընազոյն և լաւագոյն մասն է, տարիներէ ի վեր նորոգութեան վիճակի մէջ է. ներկայիս նորոգութիւնը գրեթէ վերջացած է, ինչպէս ակնարկուած էր ժամանակին, գետինը սալաքուլուած է ամրակուտ քարերով, պատերուն ձեփերը վար առնուած են և մէջտեղ հանուած՝ հին հսկայական քարերը որոնք եկեղեցիին հնադարեան նըկարագիրը աւելի դուրս ցցած են. մուտքի սանդուխի երկու կողմերուն սենեակները վերցուած են, ինչ որ ծառայած է թէ՛ եկեղեցիին ընդարձակուելուն և թէ՛ ճարտարապետականօրէն աւելի գեղեցիկանալուն: Առաստաղը ձեփուած է, գործիքի պատուհանները նորոգուած են: Կառուցուած են հայկական ոճով համակ սրբատաք քարով երկու պատարագամտոյց կաթողիկէ սեղաններ, որոնք Տաճարին հայկականացման կընիքը կազմեցին: — Ժամերգութեան ընթացքին կատարուեցաւ երկու նորակառոյց սեղաններուն օժոււմը: Լուսարարապետ Տ. Կիրեղ Կ. Վրդ., Սրբալոյս միւսուսով օժեց սեղաններուն աստիճանները, ճակատը և աջ ու ձախ մարմարեայ սիւները որոնք բերուած են Պեյճիքայէն:

Ս. Պատարագը մատուց մեծ հանդէսով Ամեն. Ս. Պատրիարք Լայր, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, Պատարագի ընթացքին յատուկ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ ննջեցեալներուն համար Շահոյեան և Քիւրտեան մայրապետ քոյրերու, որոնք գովելի բարեպաշտութեամբ մը գաղափարը յղացած էին Ս. Լուսաւորչի եկեղեցիին նորակառոյց սեղաններու կաթողիկէ զմբէթներուն պղնձեայ երկու մեծ խաչերը իրենց յիշատակին շինել տալուն (Տե՛ս Սիւն, 1940, Մարտի թիւ, էջ 71ա): — Յաւարտ Ս. Պատարագի հանդիսաւոր թափօր կատարուեցաւ Քրիստոսի Ս. Գերեզմանին շուրջ, հանդիսապետութեամբ պատարագիչ Ս. Պատրիարք Զօր:

* 9 Ապրիլ Գշ. — Հսկումին քարոզեց Տ. Արթուր Վրդ. «Յիշեա՛ զիս, Տէր, յորժամ զաս արքայութեամբ քով» բնարանով. նկարագրեց երեկոյեան խաղաղութիւնը, ուր ամէն ինչ աղօթքէ երկինք և զԱստուած յիշեցնող. ապա տուաւ Գեթսեմանիի պատկերը, ուր Յիսուս կատարեց առաջին և մեծ հսկումը: Ապա ծանրացաւ խաչուածութեան խորհուրդին վրայ. շնչտեց թէ Աստուծոյ համար խաչ կանգնող մարդկային կիրքերը ամէն

ժամանակի և տեղի յատուկ են, և թէ՛ Աստուծոյ արդարութեան, սիրոյ թշնամիները միայն Գողգոթայի վրայ չեն գտնուիր, այլ ամէն տեղ ուր սիրտեր կան, զորս սրբութիւնը կը բորբոքեցնէ և սէրը կը կատուեցնէ. յետոյ մատնանչեց խաչով եղած փրկութիւնը, որով Աստուած և չարագործը եղբայրացան տառապանքի մէջ, խաչին վրայ, ու ժամադրուեցան երկինք:

* 14 Ապրիլ. Զ. Կիր. Մեծ Պահոց, Գալսեան. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Լըբնաակապետաց եկեղեցին, ուր քարոզեց Տ. Արթուր Վրդ.: Իր քարոզը կ'երևի Սիւնի ներկայ թիւին մէջ:

* 16 Ապրիլ Գշ. — Հսկումին քարոզեց Տ. Եղիշէ Վրդ. «Քեզ միայն մեղայ, Տէր, և չար առաջիք արարի» բնարանով: Համեմատութեան զրաւ Ս. Գիրքը բոլոր ժամանակներու ուրիշ կրօնական գիրքերու հետ, և գերազանց գտաւ, վասնզի Ս. Գիրքը վեր նկատեց ժամանակէն և ազգերու խտրող ոգիէն: Մարդկութեան գիրքն է ան. մարդը հոն նկարուած է իր ներշնչումներով և տաղանայներով, իր կարկանդակներով և մեղքերով, իր մեծութիւններով և թշուառութիւններով, զիտուած ո՛չ թէ մարդկային՝ այլ աստուածային աչքով: Ներկայացուց Սաղմոսերգու Դաւիթը իբր զասական օրինակ մեծագոյն մեղաւորի և նոյն ատեն ճշմարիտ ապաշխարողի: Ըստ թէ քրիստոնէական կրօնի մէջ մեղքի և զղջումի հասկացողութիւնը յատուկ չէ ըմբռնուած. անիկա տուրեառ մը չէ, այլ շնորհ մը իրական զղջացողին: չիթ մը արցունք բաւ է որ փշրուէն լեռները մեղքին: Մեղանշը մարդկային է և անխուսափելի. անկէ փախչելը, չզղջալն է խոտելի: Շատեր կ'իյնան, բայց Դաւիթ Նաթանի մէկ խօսքին վրայ կը փոխուի ու Աստուծոյ կը դառնայ: «Քեզ միայն մեղայ» կ'ըսէ Դաւիթ, մինչ մարդեր աշխարհի բարոյականով իրենց մեղքի դատապարտութեան մասին կը մտածեն: Մեղքէն ազատուելը՝ վերածնունդն է հոգիին, և ան կ'ըլլայ արցունքով:

* 18 Ապրիլ Եշ. — Մեծ պահոց վերջին հրահումին քարոզեց Ամեն. Ս. Պատրիարք Լայրը «Ահա և զողութեամբ դանձանց փրկութիւն գործիցէք» բնարանով:

* 21 Ապրիլ Ծաղկազարդ. — Տօնի նախօրեակին կէսօրէն վերջ հանդիսաւոր մուտք կատարուած էր Ս. Յարութեան տաճարէն ներս եւ ժամերգութիւնը տեղի ունեցած մեր վերնատան մէջ Նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Զօր: Առաւօտեան ժամերգութիւնը և Ս. Պատարագը պաշտուեցան նոյն վայրին մէջ: Ս. Պատարագէն վերջ արմաւենիներ ի ձեռքին մեծ հանդէսով թափօր ունեցանք Քրիստոսի Ս. Գերեզմանին շուրջ, զխաւսորութեամբ Տ. Խաղ Արքեպս. ի որ զատկական տօներու առթիւ Ս. Աթոռս հրաւիրուած էր Ամեն. Ս. Պատրիարք Զօր կողմէն: Մեր թափօրին կը հետևէին, իբրև անզի հետևակ եկեղեցիներ, Ղպտիք և Ասորիք:

Երեկոյին «Դունբացէք» ի բարրողութիւնը կատարուեցաւ տպաւորիչ խորհրդաւորութեամբ, Ամեն. Ս. Պատրիարք Զօր նախագահութեամբ:

կատարուեցաւ Ազունիէի Ազգ. թոքախտաբուժաբանին ի նպաստ հանգանակութիւն, որ տուաւ աւելի քան 17 Պաղատ. ոսկւոյ գումարի արդիւնք մը՝ որ նոյնութեամբ զրկուեցաւ Տ. Խաղ Արքեպս. ի ձեռամբ բուժարանի խնամակալութեան նախագահ Գեր. Տ. Եղիշէ կարօեան Սրբազանին:

— Ս. Լրեշտակապետաց եկեղեցւոյն մէջ պատարագեց եւ քարոզեց, օրուան տօնին առիթով, վանքին տեսուչը՝ Տ. Վահան վրդ.:

* 23 Ապրիլ, Աւագ երեւոքքի. — Ս. Կոյսի Աւետարանի Ընկերութիւնը շատ անգամ լինելով Ծաղկազարդի նախօրեակին ու կարելի չըլլալով իր օրին Ս. Պատարագ մատուցանել Ս. Կոյսի գերեզմանին վրայ, այսօր կատարուեցաւ ատիկա: Մուտքի շէրաշափառքին նախագահեց Տ. Խաղ Արքեպս., որ և պատարագի միջոցին քարոզեց օրուան տօնի մասին: Ս. Կուսին ուղղեալ հրեշտակի աւետարան բնաբան առնելով նախ ներկայացուց համատեսակի Ս. Կոյսի կեանքը, և ապա թուեց անոր նկարագրի կարկառուն զիծերը — հոգւոյ մաքրութիւնը, սրտի անբծութիւնը, խոնարհութիւնը, նազանդութիւնը, և այլն — որոնցմէ դասեր հանեց հաւատացեալ ժողովուրդին համար:

* 25 Ապրիլ, Աւագ Հինգուքքի. — Առաւօտուն հանդիսէն պատարագեց Տ. Խաղ Արքեպս.: Ստ. նախաշարի կարգը կատարեց Ամեն. Ս. Պատրիարք Զորը: Ներկայ էին Երուսաղէմի կառավարիչը, եւրոպացի բարձրաստիճան հիւրեր և կառավարական ու զինուորական պաշտօնատարներ, Անգլիացւոց Եպիսկոպոսը, որ և անգլիերէն լեզուով կարգաց օրուան Աւետարանը:

— Գիշերային Խառնաման կարգը կատարուեցաւ տխրազդեցիկ խորհրդաւորութեան մը մէջ, Քարոզեց Տ. Խաղ Արքեպս.:

* 26 Ապրիլ, Աւագ Ուրբաթ. — Թաղման նախատօնակը, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, կատարուեցաւ տպաւորիչ վայելչութեամբ ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Զոր:

* 27 Ապրիլ, ձապալոյց Ս. Զատիկ. — Առաւօտեան ժամը 9ին Ս. Յարութեան զանգերը բացուեցան մեր կողմէն, համաձայն տիրող իրաւակարգին: Ժամը 10ին Ս. Յակոբէն հասաւ Ամեն. Ս. Պատրիարք Զորը թափօրով և մեր վերնատան Ս. Գերեզմանին վրայ նայող պատուհանին վրայ իր տեղը գրաւեց: Մինչ այդ վարը կը կատարուէր Ս. Գերեզմանի զանգերուն կնիւմը և երկու վարդապետներ, հայ և յոյն, կը սպասէին դրան առջև: Աւստաւորները իրենց տեղերը գրաւած էին. կարելի էր եղած կառավարութեանէն տրամադրուած տոմսակներու շնորհիւ այս տարուան ուխտաւորութիւնը ամբողջութեամբ ներս առնել: Ներկայ էին նաև եւրոպացի հիւրեր: Ըստ բաւականին մեծ բազմութիւն մը, հայ, յոյն, ղպտի, ասորի և այլն, Տաճարէն ներս առնուած էր. բայց չկար ուրիշ տարիներու խնդումը:

Յունաց թափօրի աւարտումին, մեր լուսահամը՝ Տ. Մուշեղ վրդ. և Յունաց պատրիարքը Ս. Գերեզման մտան և քիչ վերջ լուցեալ մտներու

խորձեր զուրս տրուեցան Ս. Գերեզմանի քովընտրի բացուած քներէն, և լուսակիրներէ ձեռքէ ձեռք փոխանցուելով վայրկեան ժամանակի մէջ յանձնուեցաւ Ս. Պատրիարքին որ մեր վերնատան պատուհանէն կ'օրհնէր վարի ժողովուրդը, որ կրօնապէս օգևորուած ձեռքի մամբը կը լուցանէր Գերեզմանէն ելած լոյսերով, մինչ այդ արդէն ելած էր Ս. Գերեզմանէն մեր լուսահան վարդապետը, և զգեստաւորուելով անցած էր գլուխը թափօրին, որ Ս. Յարութեան Տաճարը կը թնդացնէր Յարութեան Աւետարով, «Քրիստոս յարեալ է ի մեռելոց», Լուսաւորեալի հանդէսէն վերջ, որ անցաւ շատ խաղաղ, Միաբանութիւնը երկարածից թափօր կազմած վերադարձաւ վանք հետը բերելով Գերեզմանէն ելած նուիրական լոյսը, որ Ս. Յակոբեանց Տաճարի բակին մէջ փոխանցուեցաւ ասպէն մնացող ժողովուրդին, և թափօրականք ու ժողովուրդ Տաճար մտան «Լուսաւորեալ», Երուսաղէմ շարականի երգեցողութեամբ: Ամեն. Ս. Պատրիարքը կարգաց Յարութեան Աւետարանը, աւետեց ամէնքին Յարութեան Աւետարանը, և հակիրճ քանի մը խօսքերով և աշխարհի խաղաղութիւն մաղթելով արձակեց ժողովուրդը:

Ժամը 3ին կը սկսէր ձրագալոյցի ժամերգութիւնը որուն կը յաջորդէր խորհրդաւոր և յոյժ տպաւորիչ իրիկնադէմի Ս. Պատարագը:

* 28 Ապրիլ, Զատիկ. — Գիշերուան ժամը մէկուկէսին Միաբանութիւնը արթնցած է արդէն, և երկուքին Ս. Յարութեան Տաճարին մէջ է և սկսած ժամերգութեան՝ մեր վերնատան մէջ: «Զարց»ին կ'իջնէ վար զգեստաւորեալ և լուցեալ մամեղինօք և ժամերգութեան մնացեալ մասը կը կատարուի Ս. Գերեզմանին շուրջ թափօրի ընթացքին, որուն կը հանդիսապետէ Տ. Խաղ Արքեպիսկոպոս: Յաւարտ թափօրի, միջանկեալ դադարէ մը վերջ, կը սկսի զատկական Ս. Պատարագը Քրիստոսին Ս. Գերեզմանին վրայ:

Կառավարական մասնախորհրդով, ժողովուրդէն ոչ ոքի մուտքը թոյլատրուած էր Ս. Յարութեան Տաճարէն ներս մինչև առտուան ժամը վեց: Այնպէս որ Յունաց և Լատինաց գիշերային արարողութեանց, ինչպէս նաև մեր ժամերգութեան թափօրի ընթացքին բոլորովին դատարկ էր Տաճարը, Մեր Ս. Պատարագը սկսաւ ժամը վեցէն վերջը օրով ուխտաւորք և ժողովուրդը կրցան մասնակցիլ Ս. Պատարագին, զոր մատոյց Ս. Գերեզմանին վրայ և քարոզեց մեծ օգևորութեամբ Տ. Խաղ Սրբազան զի՞ ինչրէք զԳերեզմանին ընդ մեռեալս՝ բնաբանով, Յարութեան հրաշքի պատմականը ներկայացնելէ վերջ շեշտեց, իբրև օրուան պատգամը, կեանքի վերանորոգութեան անհրաժեշտութիւնը:

Իսկ ի Ս. Յակոբ ևս պատարագ մատուցուեցաւ, ուր քարոզեց Տ. Շաւարշ վրդ. «Միտաւ և յարեալ» բնաբանով. բացատրեց թէ մանր Փրքիչի Յարութեան անմիջական պատճառն էր, ու զայն նկատեց մեր իսկ անհատական և ազգային յարութեան հաւաստիքը:

Երեկոյեան զատկական մեծ անդաստանը կա-

տարուեցաւ վանքի բակին մէջ մեծաւայելուչ հանդիսաւ որով թեմամբ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ:

✽ 29 Ապրիլ Բչ. — Բ. or Զաւակի. Մեծ հանդէսով պատարագեց Ամեն. Ս. Պատրիարք Հայր Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: «Հայր մերէն առաջ քարոզեց «Քրիստոս մեռաւ վասն մեզաց մերոց ըստ գրոց, և զի թաղեցաւ: Թէ՛ և յարեաւ յաւուր երրորդի ըստ գրոց» բնաբանի մասին. հետեւելով Քրիստոսի կեանքին վերջին օրերուն, երբ նա կը կատարէր իր մեծագոյն տընորինութիւնները, և մի առ մի կանգ առնելով իւրաքանչիւր գրուագի առջև մատնանշեց անոնց ամէնքին մէջ ևս Յիսուսի աստուածութիւնը:

✽ 5 Մայիս, նոր Կիրակի. — Համաշխարհային պատերազմի ընթացքին ինկած մեր բիւրատոր նահատակներու յիշատակին նուիրուած այս օրին՝ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Փրկչի եկեղեցիին մէջ, ուր քարոզեց Տ. Սերովբէ վրդ. «Եթէ այսօր կենօքս յուսացեալք եմք ի Քրիստոս, ապա ուրեմն ողորմելի եմք քան զամենայն մարդիկ» բնաբանով: Բացատրեց թէ Քրիստոսի Յարութեան զէպըը յեղաշրջեց կեանքի և մահուան մասին մարդոց գաղափարը, և անմահութեան յոյսը հաստատեց մարդոց մէջ, որո շնորհիւ աշունքը զօրացան կեանքի գոհուածութիւններուն զէմ, և ապահովեցին բարիին յաղթանակը: Ապա անդրադարձաւ մեր բիւրատոր նահատակներու յիշատակին. անոնք ալ, ըսաւ, այս յոյսով ու ըմբռնուեալ էր որ իրենք զիրենք տուին ազատութեան գաղափարին և մեր ժողովուրդի հոգեկան ու բարոյական արժէքներուն համար:

Պատարագէն վերջ ամբողջ Միաբանութիւնը թափօրով և ժողովուրդի բազմութիւնը եկեղեցիին կից Ազգային Գերեզմանատունը գացին, ուր ևս հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ համօրէն ննջեցելոց համար, Արարայի նահատակաց յուշարձանին շուրջ, խօսեցաւ Տ. Շաւարշ վրդ. Եզեկիէլի տեսիլքը իր խօսքին նիւթ առնելով. անոր մէջ տեսաւ մեր Ազգին պատկերը, մանաւանդ վերջին պատերազմին և ներկայիս, և յարեց թէ անհրաժեշտաբար պէտք ունինք մեր Մարգարէին՝ Մայրենի Եզեկեցւոյ, և կենդանացուցիլ շունչին՝ ազգային և կրօնական ինքնագիտակցութեան:

✽ 12 Մայիս, Աւետարանատան Կիրակի. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մէջ Ս. Գերեզմանին վրայ, պատարագեց կէս եպիսկոպոսական զգեստաւորմամբ Տ. Գեորգ վրդ.: Իսկ ի Ս. Հրեշտակապետ պատարագի ընթացքին քարոզեց Տ. Վահան վրդ.:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

Զաւակի սօնին առքիւ շնորհաւորական այցելութեան եկան Ամեն. Ս. Պատրիարք Հօր, ի Պատրիարքաւան. Գունաց Պատրիարքը իր Միաբանութեամբ: Լատին Պատրիարքը վարդապետներով: Ֆրանչիսկեանք:

Անգլ. Եպիսկոպոսը՝ Յ քահանաներով: Հապէշ Միաբանութիւն: Ղպտիններու Եպիսկոպոսը Միաբանութեամբ: Ասորոց » » Բենետիկտեան Միաբանութիւն: Մարօնիներու Փոխանորդը: Յոյն Կաթոլիկներու Փոխանորդը: Հայ Կաթոլիկներու Կաթողիկոսական Փոխանորդը: Բարձր Գովիսէրի կողմէ իր թիկնապահը և Արար. բաժնի օգն. Բուհի Պէյ: Երուսաղէմի Կառավարիչ Մր. Քիթ-Րօչ, իր օգնականներուն եւ կառավարական պաշտօնեաներուն հետ: Քաղաքապետ Խալաթի Պէյ: Երուսաղէմի երեւելիներէն Իսմայիլ Պէյ Հիւսէյինի: Մէհմետ Իսլամիյէի նախագահը և անդամներ: Պանքօ տի Ռօմայի Տնօրէնը:

Շնորհաւորական Քարք դրկած էին

Պետական Աւագ Քարտուղար: Ֆրանսական Ընդհ. Հիւպատոս: Իտալական » » Բոլոնիական » » Կառ. Հնագիտական Բաժնի Փոխ Տնօրէն:

Ամեն. Ս. Պատրիարք Հայր հետեւորդ վարդապետներով այցելեց Գունաց պատրիարքարան Զատիկի շնորհաւորութեան համար: Իսկ Տ. Խաղ Արքեպս. ի զմաց Ս. Պատրիարքի միաբան վարդապետներու հետ շնորհաւորական այցելութիւն տուաւ Ղպտոց, Ասորոց և Հապէշաց վանքերուն: Տ. Կիրեղ Ծ. վրդ. և Թարգման Տ. Պսակ վրդ. գացին Իրազի հիւպատոսարանը և շնորհաւորեցին Ֆէյսալ մանուկ թագաւորի ծննդեան տարեդարձը:

ԱՅՍ ՏԱՐՈՒԱՆ ՈՒՆՏԱՆՈՐՈՒԹԻՒՆԸ

Հակառակ տիրող աննպաստ պայմաններուն և մեր ակնկալութեան՝ Երուսաղէմ այս տարի ևս ունեցաւ իր ուխտաւորութիւնը, եկած էին — բացի Պաղեստինի գանազան քաղաքներէն եւ կածներէն — շուրջ 150 ուխտաւորներ Սիւրիայէն և Եգիպտոսէն միայն: Պէտք եղած դիւրութիւնները, թէ՛ բնակութեան և թէ՛ այլևայլ սրբավայրեր ուխտագնացութեան համար, տրուեցան լիովին թէև Ս. Յարութեան Տաճարի զոները տակաւին փակ կը մնան հանրութեան առջև, բայց այս տարի կառավարութենէն պատրիարքարաններուն տրամադրուած տոմսակներու շնորհիւ կարելի եղաւ առանց զժուարութեան ուխտաւորները ներս առնել Ս. Յարութեան Տաճարէն՝ ուղուած ատեն: Աւագ Թարգման Տ. Պսակ վրդ. ի և Տ. Կոմիտաս Արեւայի առաջնորդութեամբ այցելեցին՝ բացի Երուսաղէմի Սրբավայրերէն՝ Զիթենեաց լեռ, Բեթլեհէմ, Յորդանան, Երիքով, Յովհաննու Ծնունդ և այլ վայրեր, ուր իրենց տրուեցան հարկ եղած ծանօթութիւնները:

Տ. ԽԱԳ ԱՐԻՔԵՊՍ. ՄԵՐ ՄԷՋ

ՆՈՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ

Ամեն. Ս. Պատրիարք Հօր հրաւերով Անտիօքի թեմին նախկին կաթողիկոսական ֆոխանորդ Գեր. Տ. Խաղ Արքեպս. Աջապահեան քաղաքս ժամանեց Ապրիլ 17ին զատկական տօները մեր մէջ անցնելու և իր մասնակցութիւնը բերելու այդ առթիւ կատարուելիք եկեղեցական հանդիսութեանց:

Ամբողջ Միաբանութիւնը և աշակերտութիւնը թափօրի շարուած ընդունեց Սրբազանը և շնորհալուծի երգեցմամբ առաջնորդեց Մայր Տաճարը, ուր Ս. Գլխադրի մատրան մէջ իր ուխտը կատարելէն վերջ առաջնորդուեցաւ դաս, և եկեղեցի մուտքի Սաղմոսի և յարակից աղօթքներու քաղումէն վերջ զարձաւ և հակիրճ կերպով իր գալուստի խօսքը ըրաւ: Գոհունակութիւն յայտնեց Ս. Յակոբի յարկին ներքև զըտնուած ըլլալու բախտը անգամ մը ևս իրեն վիճակուելուն համար. վասնզի աստ գանուած էր Սրբազանը երկիրս. անգամ մը 1914ին իրբև ուխտաւոր և վերջին անգամ Երանաշնորհ Տ. Սահակ կաթողիկոսին հետ իրբև աքորական: Եկեղեցիէն առաջնորդուեցաւ պատրիարքարան, ուր զինք ընդունեց սիրալիր ողջագումամբ Ս. Պատրիարք Հայրը: Խմբիջով պատուասիրուեցան բոլոր ներկաներ:

Խաղ Սրբազան իր երեք շաբթուան աստ բընակութեան ընթացքին մեծապէս օգտակար հանդիսացաւ Ս. Աթոռոյս թէ՛ եկեղեցական հանդիսութեանց իր բերած մասնակցութեամբ, թէ՛ պատարագելով ու քարոզելով: Սրբազան Պատրիարքը անձամբ առաջնորդեց զինք Երիբով և շրջակայքը, Եաֆա և այլուր: — Մեկնումի նախօրեակին Ամեն. Ս. Պատրիարք Հայրը պտղասեղանի մը շուրջը հաւաքեց Միաբանութիւնը ի յարգանս Գեր. Տ. Խաղ Սրբազանին. խօսեցաւ ինք, Պատրիարք Սրբազան, իր գոհունակութիւնը և շնորհակալիքը յայտնելով Խաղ Սրբազանին որ հանեցաւ ընդունիլ իր հրաւերը, զրուստեց անոր բնաւորութեան կարկառուն գիծը կազմող համեստութեան յատկանիշը: Պատասխանեց Խաղ Սրբազան զգացեալ հոգեով, և անզրպարձաւ երկու Միաբանութեանց, Երուսաղէմի և Կիլիկիոյ, եղբայրական յարաբերութեանց աւելի սերտացման մասին:

Յաջորդ օր, Մայիս 8ին մեկնեցաւ Սրբազանը իր պաշտօնատեղին. Միաբանութիւնը ողջերթի իջած էր վանքի աւազ դուռը. Սրբազանին ընկերացան մինչև Ռամալլա գիւղը Տ. Տ. Գէօրգ և Շաւարշ վարդապետներ:

Հայֆայի և շրջակայից Հոգ. Տեսուչ Տ. Յուսիկ վրդ. հրաժարած ըլլալով՝ սոյն պաշտօնին կոչուեցաւ Տպարանի Տեսուչ Տ. Շնորհք վրդ.: Խաղ Տպարանի Տեսուչ նշանակուեցաւ Տ. Թորգոմ արքեպս:

Նմանապէս Տ. Հմայեակ արքեպս հրաժարած ըլլալով Մատակարարութեան իր պաշտօնէն, անոր տեղ Մատակարար եղաւ Տ. Զաւէն Արքեպս:

ՌԱՐԵՊԱՇՏՍԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

Շնորհակալութեամբ և օրհնութեամբ կ'արձանագրենք 1939 աւուայ ընթացքին Ս. Արառոյս եղած հետեւեալ բարեպաշտական նուէրեր.

1. Գահիրէէն Ղևոնդ Աւագ Քնյ. Նահապետեանի Երիցուհին՝ սպիտակ սնդուսի վրայ մետաքսահիւս մէկ սկիհի ծածկոց:
2. Ս. Ախտիս միաբան Հոգ. Տ. Հայրիկ վրդ. Ասլանեան՝ զեղին սղիխնէ քանդակազարդ մէկ ափաէ, քրօշէ ծածկոյթով:
3. Երուսաղէմարնակ Սր. Մերսետես Երէցեան՝ սպիտակ կտաւի վրայ ասեղնագործուած ինքնաձեռագործ մէկ կորփուրայ Ս. Մննդեան Այրին սեղանին համար:
4. Կ. Պոլսեցի Այրի Տիկ. Ալթըբարմաքեան՝ սպիտակ կտաւի վրայ ոսկեթել և մետաքսեայ ասեղնագործութեամբ վարագոյր մը Ս. Գլխադրի համար:
5. Եղեոսայի Խաչեր Աղա Սէմէրեան՝ մէկ սեղանի ծածկոց և մէկ կորփուրայ Ս. Գլխադրի համար:
6. Գահիրէցի Տիկին Բօլին Պօյաճեան՝ սպիտակ սնդուսի վրայ ասեղնագործուած մէկ սկիհի ծածկոց:
7. Նոր-Ջուղայեցի հանգուցեալ Տ. Մաշտոց Աւագ Քնյ. Իսրայէլեանի յիշատակին չօրս մետաքսեայ իւզարբերից մօմակալներ Սրբոց Յակոբեանց Տաճարին:
8. Ի Պաղտատ պաշտօնավարող Տէր Եղիշէ Քնյ. Համբարձումեան՝ զոյգ մը արծաթեայ ծաղկամաններ Քրիստոսի Ս. Գերեզմանին համար:
9. Տիգրանակերտցի Այրի Տիկ. Լուսիա Պաղալեան՝ մէկ մետաքսեայ կորփուրայ:
10. Երուսաղէմարնակ Այնթապցի Տիկ. Մաքրուհի Մահալէճեան՝ մէկ դանթէլ արփաէի ծածկոց:
11. Երուսաղէմարնակ Տիգրանակերտցի Այրի Տիկ. Պայծառ Ոսկերիշեան՝ մէկ սպիտակ կտաւէ սեղանի ծածկոց Ս. Գլխադրի համար:
12. Երուսաղէմացի Սր. Սրբուհի Գրիգորեան՝ մէկ սպիտակ կտաւէ սեղանի ծածկոց Ս. Գլխադրի համար:

ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏ

ԿԻՐԵՆ Ծ. ՎՐԴ. ՏԷՐ Մ. ԻՍՐԱՅԷԼԵԱՆ